

Գ. ՅԷՆԷՐՃԵԱՆ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐՄԼԱՆՊԷԿԻ

9(47.925)

Ֆ-39

Ք

Գ. ՖԵՆԷՐՃԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐՄԼԱՆՊԵԿԻ

3438



Փ Ա Ր Ի Զ
1971

Ընդառաջ երթալով բազմաթիւ հայրենակիցներու յայտնած փափաքին նախաձեռնութիւնը առի հրատարակելու ներկայ հատորը: Այսպէսով իրականացուցած կ'ըլլայի նաեւ անձնական հին նպատակ մը, այն է յիշատակ մը եւ վկայութիւն մը ձգել մեր սիրելի ծննդավայրին, անդարձ կորստեան մատնուած Արալանպէկի ինչպէս եւ անոր անհետացած սերունդներուն մասին:

Պատմութիւն Արսլանպէկի հատորը կ'ամփոփէ ինչ որ կարելի եղած է հաւաքել մինչեւ այսօր իբր տեղեկութիւն, հրատարակութիւններէ կամ անհատական յուշերէ ֆաղուած, մեր ծննդավայրին հետաւոր եւ մօտաւոր անցեալին մասին:

Անտարակոյս այնտեղ կան պակասներ եւ բերիներ: Ամենամեծ շնորհակալութեամբ պիտի ընդունինք յաւելումները եւ ճշդումները զորս իրագեկ հայրենակիցներ պիտի թելադրեն մեզի:

Լիւն

ԳՐԻԳՈՐ ԹՈՄԱՍԵԱՆ

Թուրքիոյ հայարնակ քաղաքներուն եւ գիւղերուն վրայ ստոյգ տեղեկութիւնները եւ գրաւոր վկայութիւնները յաճախ կը պակսին: Եկեղեցական արձանագրութիւնները, երբ գոյութիւն ունեցած են, եղած են թերի եւ անկատար: Դէպքերուն բերումով, այսօր բոլորովին փճացած են: Վիմագրական տուեալները, որոնք մասնակի տեղեկութիւններ կրնան պարունակել, մեծ մասամբ քանդուած են եւ մնացեալները մատչելի չեն: Անցեալին մէջ, նոյնիսկ մեծ եւ հայաշատ կեդրոններու կամ գաւառային շրջաններու մասին ուսումնասիրութիւններ չատ քիչ կատարուած են: Ճամբորդները եւ հնախօսները հետաքրքրուած են մանաւանդ պատմական եւ աշխարհագրական կարեւորութիւն ներկայացնող վայրերով:

Մամուլին զարգացումով, ԺԹ.րդ դարու կէսէն սկսեալ հայերէն թերթերու մէջ հեազհետէ երեւցան գրութիւններ գաւառի հայարնակ վայրերու կեանքին եւ երբեմն պատմութեան մասին: Որքան ալ բլրյան հատակոտոր եւ պատահական, անոնք նպաստ մը կը բերեն ուսումնասիրողին գործին: Բայց ամբողջական հաւաքածոներու չգոյութիւնը, երկարատեւ թղթատումներու անհրաժեշտութիւնը խնդրական տեղեկութեան մը համար, կը դժուարացնեն

այլ աղբյուրներուն օգտագործումը, որ սակայն կա-
րելու է :

Այս գիտողութիւնները եւ գանգաւանները կը կա-
տարեն ամէն անոնք որոնք վերջին տասնամեակնե-
րուն ընթացքին փորձած են գրել պատմութիւնը յա-
ւէտ կորսուած մեր քաղաքներուն եւ գիւղերուն :
Բայց ուշագրաւ են հետեւեալ աղբերը զորս գրած է
խղճամիտ ուսումնասիրող մը, Մինաս Գ. Գասապ-
եան, մեր կեանքը երկուքի բաժնոց թուականէն ա-
ռաջ, 1912ին .

« Մեր մտաւորականութիւնը — Տաճկահայ —
աննշան բացառութիւններով աւելի խօսեր, ճառեր,
գրեր, կարգացեր ու գրադուեր է Եւրոպայով, Ամե-
րիկայով, Աֆրիկէով ու Ռիկիանիայով քան զինքն
ու իր ցեղը ուղղակի շահագրգռող հարցերով : Ար-
գիւնքը մէջտեղն է, մենք — պաշտօնական հաստա-
տութիւններէն սկսեալ — չենք գիտեր թէ ո՛ւր կայ
հայութիւն, եւ ի՛նչ թիւով, ի՛նչ անցեալով, ինչ
ներկայով, ինչ անտեսական, կրթական վիճակով,
եւայլն : » (Հայերը Նիկոմիդիոյ Գաւառին մէջ,
Պարտիզակ, 1913. — Նախաբան) :

Արսլանպէկ ներկայացնելով յարաբերաբար
փոքրաթիւ համայնք մը, եւ հետո հայկական բնա-
վայրէն, առարկան չէ եղած մասնաւոր ուսումնա-
սիրութեան մը : Հանդէսներու եւ թերթերու մէջ ա-
նոր մասին կատարուած են անցողակի ակնարկու-
թիւններ, արուած են միջանկեալ տեղեկութիւններ :
Այսուհանդերձ յաճախակի է Արսլանպէկի յիշատա-
կութիւնը Բիւթանիոյ նուիրուած գրութիւններուն
մէջ, բարդամամբ թուական նոյն կարեւորութիւ-
նը ներկայացնող ուրիշ վայրերու, ապահովաբար
անոր բնակիչներուն ինքնուրոյն նկարագրին եւ հե-
տաքրքրական բարբերուն հետեւանքով :

Վիթալ Քիւինէ, իր *La Turquie d'Asie* (*)
բազմահատոր գործին մէջ, երբ կը խօսի Իզմիթի
գաւառին (Սաֆնապ) վրայ, առանձին հատուած մը
կը նուիրէ Արսլանպէկի իր «նշանակելի» վայր մը,
Արմաշի հետ :

Մեզի ծանօթ տպագրուած ամենէն հին տեղե-
կութիւնը Արսլանպէկի մասին, եթէ չհաշուենք Մի-
մէոն Երեւանցի կաթողիկոսին յիշատակութիւնը
Ջամբոնին մէջ, Էօթէն Պոռէի նամակն է, հրատա-
րակուած Յովհաննէս Տիրոյեցի Պատուելիի Հայաս-
տան շարաթաթերթին մէջ, 1847ին : Սմբատ Գա-
ւիթեանի Բիւրակցը, Ծաղիկ, Բագմալէպ, օրա-
թերթեր, հրատարակած են գրութիւններ Արսլան-
պէկի վրայ որոնք կը պարունակեն ազգագրական
նշմարներ կամ կ'ակնարկեն ժամանակակից դէպ-
քերու : Հայրենիք ամսագրին մէջ Տըթ. Գեղամ Սե-
րոբեան հրատարակած է իր հօրեղբօր, նախկին ար-
քեպիսկոպոս Մուշեղ Սերոբեանի հակիրճ յուշերը
Արսլանպէկի մասին : Հրաչեայ Աճառեան լոյս ըն-
ծալով է գրքոյկ մը, Քննութիւն Արսլանքէկի բար-
բառին, (1898) նախապէս հրատարակուած Բագ-
մալէպի մէջ (ԾՁ Հատոր) (**): Բայց ամենէն աւե-
լի Մինաս Գ. Գասապեանի վերոյիշեալ հատորն է
որ կը պարունակէ բազմատեսակ տեղեկութիւններ,

(*) *La Turquie d'Asie*, vol. IV, E. Leroux, éd. 1895, Paris

(**) Յօդուած մը (Հեղինակ Ա. ձէվիզ), *Յուշարձան
նուիրուած Մ. Գ. Հնչակեան կուսակցութեան Քառասնամե-
ակին* հատորին մէջ (Փարիզ, 1930), կը պատմէ Բագմալ-
կան յառաջապահներու յարձակումը Արսլանպէկի վրայ :

թիւեր, վիճակագրական տուեալներ որոնցմէ մէկ քանին կը վերաբերին Արսլանպէկի, ամփոփ կերպով տրուած, և ցրուած Նիկոմիդիոյ գաւառին մասին իր կատարած ընդհանուր ուսումնասիրութեան մէջ:

Հ. Ս. Էփերիկեան իր Բնաշխարհիկ Բառարանին մէջ, և Մկ. վրդ. Պոսուրեան Հայ Հանրագիտակին մէջ կը յիշատակեն Արսլանպէկը հակերճ տողերով:

Ձեռագիր աշխատութիւններ Արսլանպէկի մասին մեզի անձանօթ են: Սակայն, գոյութիւն ունեցած է Ստեփան վարժապետ Գազանճեանի Պատմութիւն Արսլանպէկին, գրուած 1870ին, անտիպ, որուն հետքը կարելի չեղաւ գտնել:

Կը թուի թէ վերապրող Արսլանպէկցիներու մեծ մասը ներգաղթած է Հայաստան, մանաւանդ Յունաստանէն: Բերանացի աւանդութիւններու հաւաքումը մեծապէս դժուարացած է: Տարէցները անհետացած են: Այսուհանդերձ Պ. Մկրտիչ Ալթունեան (Երեւան), ծնեալ 1878ին, Պ. Պարթեւ Ստեփանեան (Սելանիկ), ծնեալ 1893ին և Պ. Սահակ Կակարեան (Աղեքսանդրիա), ծնեալ 1888ին, գրի առած են իրենց անձնական յիշողութիւնները, որոնք օգտագործուած են այս աշխատութեան մէջ:

ՆԻԿՈՄԻ ԴԻՈՅ ԳԱԻԱՌԸ

Նիկոմիդիոյ կամ Իզմիթի գաւառը (Սաննազ) Օսմանեան կայսրութեան օրով կը գրաւէր մէկ մասը այն երկրին զոր յոյն և լատին հեղինակները կոչած են Բիւթանիա:

Հինէն ի վեր Բիւթանիա մեծ հռչակ վայելած է իր բնական զեղեցկութիւններով և հարստութիւններով: Մասենագիրները նկարագրած են անոր անտառապատ լեռները, ձկնառատ լիճերը և գետերը, յորդ և այլազան բուսականութիւնը, զայն ներկայացուցած են իրր բարդաւած կեանքի մը օրրանը:

Բիւթանիոյ թագաւոր Նիկոմեոս Ա. իր անունով վերակոչեց մայրաքաղաքը Նիկոմիդիան, այժմու Իզմիթը, երբեմն կոչուած նաև Իզնիմիա, զոր հիմնած էր իր հայրը: Ամփոթատրոնաձեւ քաղաքին մէջ որ կը բարձրանար համանուն ծոցին հիւսիսային ափին վրայ, Նիկոմեոս շինեց պալատներ, տաճարներ, կանգնեց պարիսպներ և իր փողոսկրեայ արձանը, զոր Տրոյանոս Հոոմ փոխադրեց: Աննիպալ և Կեսար եկան բնակել այնտեղ: Հելիոկապալ այնտեղ անցուց ձմեռ մը իր դահակալութենէն առաջ, 218ին: Դիոկղետիանոս, հալածելէ ետք Քրիստոնեաները, մեծ արարողութիւններով 305ին հրաժարեցաւ գահէն Նիկոմիդիոյ արեւելակողմը տարածուող դաշտին մէջ:

Վերջին թագաւորը Նիկոմեասոս Գ., բարեկամ Հոռոմէացիներուն, կտակեց Բիւթանիան Հոռոմի, վերարժարծեկրով պատերազմերը Հոռոմի եւ Միհր-դատի միջեւ որ համաձայն չէր այս գործողութեան: Հոռոմէական նահանգ հռչակելէն ետք, Ծերակոյտը Բիւթանիան նկատեց աւելի գաշնակից մը քան գրաւուած երկիր մը: Այնտեղ շարունակուեցաւ հոռոմէական ասանդական շինարարութիւնը, կառուցուեցան ճամբաներ, ջրանցքներ, նաւահանգիստներ: Բիւզանդական տիրապետութեան տակ Կոստանդնուպոլսոյ մօտակայ այս հողամասը շարունակեց իր բարգաւաճումը: Յուստինիանոս շինել տուաւ այն մեծ եւ շքեղ կամուրջը Մաքարիայի (Սանկարիւս) վրայ, երբ գետին ընթացքը չէր սեղափոխուած, որ մինչեւ այսօր գրեթէ անվթար կը մնայ:

Օսմանեան գրաւումէն ետք, ԺԳ-րդ դարուն Օրխանի ձեռքով, Նիկոմիդիա քաղաքը կորսնցուց իր նախկին փայլը, թէեւ Օսմանցիք կառուցին երկու կայսերական պալատ, անթիւ մզկիթներ սրնցմէ կ'արժէ յիշել Փէթէր փաշայինը, նաւարան մը գոր շինեց մեծ եպարքոս Քէօփրիւլին: Քաղաքին ենթակայ գաւառը հեռոճեաճ պարպուեցաւ իր բնակչութենէն, Յոյներուն տեւական արտագուղթով: Հոռոմէական եւ բիւզանդական կառուցումները մասնուեցան լքումի եւ քանդումի, խիտ անտառը եկաւ տարածուիլ մինչեւ նախկին փարթամ քաղաքներուն շրջակայքը:

Բայց ԺԷ-րդ եւ ԺԹ-րդ դարերուն Իզմիթի գաւառը կը ստանար նոր բնակչութիւն, բազկացած բազմազան տարրերէ, որոնց մէջ նաեւ Հայեր, որոնք կուգային արեւելեան նահանգներէն եւ Բուսիլէն, փախչելով պատերազմներէն եւ սովէն:

Մինչեւ 1867ի վարչական փոփոխութիւնը, Իզ-

միթի կամ Նիկոմիդիոյ գաւառը մաս կը կազմէր Պրուսայի կուսակալութեան (Խիւսապենտիկիար) իր հին անուան տակ, Քոճալ-Իլի (Քոճայի երկիր), ինչպէս կը կոչուէր նախապէս, այս հողամասին գրաւումը ամբողջացնող Քոճա Ազիճէի անունով: Այնուհետեւ կապուեցաւ Կոստանդնուպոլսոյ կուսակալութեան, որմէ եւս բաժնուեցաւ 1885ին, եւ ենթարկուեցաւ ուղղակի ներքին գործոց նախարարութեան:

Փոքր Ասիոյ հիւսիս-արեւմտեան կողմը տարածուած, Իզմիթի գաւառը իբր սահման ունի հիւսիսէն Սեւ Ծովը, արեւելքէն Գասթեմունիի վիլայէթը (Մեկէն գետ եւ Պոլս), հարաւէն Պրուսայի վիլայէթը (Պիլէճիք եւ Բազարքէօյ), արեւմուտքէն Կոստանդնուպոլսոյ վիլայէթը (Սկիւտարի Սանճաք եւ Մարմարա ծով):

Մարմարայի թեւը որ կը մխրճուի ասիական ցամաքին մէջ կը կազմէ Իզմիթի ծոցը որուն տպաւորիչ գեղեցիկութիւնը յաճախ գովուած է: Լիճերը գետերը, լեռները, անտառները, բարերեր հողերը որոնցմով հարուստ է Իզմիթի գաւառը, ամենուրեք կը ստեղծեն ընդհանուր ամամբ միատեսակ կենցաղ մը:

Գ Ե Տ Ե Ր Ը

Ամենէն մեծ գետն է յորձանուտ Մաքարիան, որ Մէքէճէի մօտ մուտք գործելով Իզմիթի գաւառին մէջ, 110 քիլոմետրի ընթացք մը կը կատարէ այնտեղ եւ կը թափի Սեւ Ծով: Մաքարիայի մէջ կը թափին Մուտիւրի, Չարխ-Սու, Կէօնիւք-Սու եւ ուրիշ օժանդակներ: Իսկ Քիլէզ գետը որ կը բխի

Արսլանպէկի լեռներէն, կը թափի Իզմիթի ծոցին մէջ: Ատափազարի եւ Արսլանպէկի միջեւ, գրեթէ հաւասար հեռաւորութեամբ երկու վայրերէն, կը սարածուի Սապանճալի լիճը, 15 քիլմ. երկարութեամբ եւ 5 քիլմ. լայնքով, ուր ձկնորսութիւնը, ինչպէս Իզմիթի ծոցին եւ մանաւանդ Նիկիոյ լիճին մէջ, մեծ մասամբ Հայերու գործն էր:

ՀԱՂՈՐԳԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կայսերական շրջանի վերջին օրերուն բացի Հայտար Փաշա-Պաղտատ գիծէն, որ Սանճաքէն կ'անցնի 89 քիլոմետրի վրայ, եւ Ատափազարը նոյն գիծին միացնող երկաթուղիէն, գոյութիւն ունէին բազմաթիւ խճուղիներ որոնցմէ ամենէն կարեւորն էր Իզմիթ-Էնիկերի խճուղին, Սապանճա-Կէյվէ-Թարաքլը ճամբով: Ճիւղաւորում մը կ'երթայ Ատափազար: Կային նաեւ երկու աւելի փոքր ճիւղեր որոնց մէկը 4 քիլմ. 520 մ., կ'երթար գէպի Արսլանպէկի ասուի գործարանը, եւ միւսը Եալովայի ջերմուկները: Այս վերջին երկու ճամբաները բացուեցան 1888ին:

Ծովի ճամբով, Իզմիթի ծոցին մէջ շոգենաւային սպասարկութիւն մը եւ Սեւ Ծովի վրայ առաջատանաւային երթեւեկը կ'ապահովէին գաւառին հաղորդակցութիւնները Կոստանդնուպոլսոյ հետ:

Գետերը նաւարկելի չեն: Սաքարիան եւ իր օժանդակը ՄուտիւրլիՄու, ինչպէս Սապանճա լիճը, տարին վեց ամիս կը յորդին: Սճուղիներու շինութեան առաջ փոխադրութեան սովորական միջոցներն էին ուղտը եւ ջորին: Ատափազարի արեւելքը, երկաթուղիի գիծին շրջակայքը, կարելի էր օգտագործել կառքը (արապա) կամ շոգեկառքը: Չմեռ

ատեն ապրանքներու կառքով փոխադրութիւնը կը պահանջէր 10 փարա 100 օխայի (128 քկ.) համար եւ 6-7 փարա ամառը:

Լ Ե Ռ Ն Ե Ր


Այս երկրին մէջ ուր ամէն ինչ բարեխառնուած է, լեռները չափաւոր բարձրութիւններ ունին: Մեծ մասամբ ծառերով ծածկուած եւ արգաւանդ ձորերով կտրուած, լեռնային շրջանները կը գրաւեն հողամասին երկու երրորդը: Հիւսիսային եւ հիւսիսարեւելեան մասին մէջ կը բարձրանան բլուրներ որոնք կը պատկանին Օլիասիւսի շղթային որ եղերթով Ոսիորը եւ Սեւ Ծովը կ'երկարի մինչեւ Տրապիզան, Պոնտոսի հին թագաւորութեան վրայէն:

3438

Հարաւակողմը աւելի բարձր գագաթներ կը գտնենք: Այնտեղ, Պրուսայի մօտ բարձրացող Ոլլիմպոսէն (Քէչիչ Տաղ) գէպի արեւելք կ'երկարի լեռնաշղթայ մը որ կուգայ վերջանալ Ծոցին հասարակածին ամերուն առջեւ: Իր ամենաբարձր կասարներն են Կէօք Տաղ (Կապոյտ Լեռ), որուն վերին գագաթը, Քէլ Թէփէ (1620 մ.) կը տիրապետէ Արսլանպէկի վրայ եւ Պաշ Բերէզ (1120 մ.), Գարամուսալի ետեւ: Կէօք Տաղ արեւելքէն եւ Պաշ Բերէզ արեւմուտքէն կը պարփակեն Ուզուն-Չայիլի գեղեցիկ դաշտավայրը: Քիչ մը աւելի հեռուն, գէպի արեւմուտք, կարելի է յիշել նաեւ Տաղ-Համամը (820 մետր) որուն կողերուն վրայ կը գտնուին Եալովայի ջերմուկները:

ԱՆՏԱՌԵՐԸ ԵՒ ԲԵՐՔԵՐԸ

Լայնատարած անտառներ կը ծածկեն հողամասը զոր Օսմանցիք կոչած են Աղան Տէնիզի, այսինքն



ծառերու ծով: Առանց հսկողութեան, առանց ինամ-
քի եւ կարգի, ծառերը, կաղնի, մալթուզներ, շոճի,
թմբի, եւայլն, կը բազմանան ամենուրեք, մանա-
ւանդ Կէյվէի, Ատափազարի եւ Քէնակէի շրջան-
ներուն մէջ: Փայտը եւ փայտածուխը տեղւոյն կա-
րելու արտադրութիւններն էին եւ կ'արտածուէին
մինչեւ մայրաքաղաքը: Առաջին համաշխարհային
պատերազմէն առաջ Իզմիթի գաւառին ածուխը
Սկիւտարի մէջ կը ծախուէր 500 օխանոց արապան
(650 քիլօ) 10 մէճիտիէ, 40 Ֆրանքէն քիչ մը աւելի:
Անհատական շահագործումը կ'արտադրէր ամէն
տարի բնկուզներէ 50·000 տախտակ եւ թրավէզ
փայտերը, այսինքն երկաթուղազծերու թրավերս-
ները:

Իզմիթի գաւառին երկրագործական արտադրու-
թիւնը այն է ինչ որ է բնականապէս հիւս. արեւել-
եան Միջերկրականի արտադրութիւնը: Այնտեղ ալ,
ինչպէս Պրուսայի վիլայէթին մէջ, շերամաբուծու-
թիւնը կարելու անց մը կը գրաւէր անգական ճար-
տարարուեստին մէջ:

ՎԱՐՁԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ ԵՒ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ

Մինչեւ քէմալական յեղաշրջումը գոյութիւն
ունեցող վարչական դրութեան համաձայն, Իզմիթի
գաւառը բաժնուած էր վեց գաւառակներու (գա-
գա): Ասոնք են Իզմիթի կեդրոնական գաւառակը
(Մէրֆէզ գագա), որուն ենթակայ էր Արսլանպէկ,
եւ Գանտրա, Գարամուսալ, Ատափազար, Եալովա,
Կէյվէ: Գաւառը ունի մօտաւորապէս 13·000 քառ.
քիլմ. տարածութիւն ուր կը բնակէին շուրջ 300,000
հոգի, առաջին համաշխարհային պատերազմէն ա-
ռաջ:

Այլատարր բնակչութիւն, որուն 120,000ը

թուրք էր, 100·000ը գաղթական (մուհաճիք), բաղ-
կացած Չէրքէզներէ, Կիւրճիներէ, Լազերէ, Սըրմի
Թաթարներէ, Պոչնաքներէ, Չէչէններէ, եւայլն:
Հայերուն թիւն էր 56·000: Կային նաեւ 7-8·000
չայ-չոռոմներ:

Մահմետական գաղթականները բիւթանական
գաւառները բերուեցան սկսեալ 19րդ դարու 50ական
թուականներէն, ինչպէս 1851ին Թաթարները, 1864-
ին Չերքէզները: 1877-78ի ուս եւ թուրք պատե-
րազմէն ետք Ռուսիոյ կցուած հողամասերէն եւ ան-
կախութեան տիրացած երկիրներէն, Ռուսմանիա-
յէն, Տոպրուճայէն եկած գաղթականներ զետեղ-
ուեցան գաւառին մէջ, տեղի տալով հողային ան-
վերջ վէճերու եւ ամէն տեսակ բախումներու:

ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ՀԱՅ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ

Պոլսոյ գրաւումէն առաջ Պրուսայի շրջանին մէջ հայկական գաղութի մը գոյութիւնը յայտնի է: Իսոյց գրաւոր ցանցաւ վկայութիւնները եւ բերանացի աւանդութիւնները Նիկոմիդիոյ ծոցին հարաւը, Սաքարիայի արեւելեան եւ արեւմտեան ափերուն վրայ Հայերու ներկայութիւնը կը հաստատեն սկսեալ ԺԶ. դարու վերջին քառորդէն եւ ԺԷ դարու առաջին տարիներէն: Հաւանաբար փոքրաթիւ եւ ցրուած Հայեր կային այնտեղ որոնք կ'աշխատէին թուրք հողատէրերու հաշտոյն, բայց հայկական բնակավայրերու եւ հաւաքական կեանքի յիշատակութիւնը կը գտնենք ԺԶ. դարու վերջին եւ ԺԷ դարու առաջին տասնամեակներուն, իբր հետեւանք նորեկ գաղթականութիւններու:

Այդ գաղթականութիւններուն առաջին, ուղղակի եւ անուղղակի պատճառները եղան թուրք եւ պարսիկ պատերազմները որոնք սկսած էին Ֆաթիհի օրով, շարունակուեցան Յաւուզի սուլթան Սելիմի եւ սուլթան Սիւլէյմանի, յետոյ Մուրաա Գ.ի (1546–1596) եւ Շահ Աբբասի (1585–1628) շրջանին, որ կազմակերպեց Հայոց հռչակաւոր բռնագաղթը գէպի Սպահան (1604):

Ասոնց հետեւեցաւ համայնատարած սովը, որուն աղէխարչ նկարագրութիւնը կը կատարեն ժա-

մանակակից պատմիչները, քանիցս կրկնուած հայ գրողներու կողմէ :

Այս աղէտներուն յաջորդեց ձէլալիներու աւերիչ ապստամբութիւնը որ բռնադատեց Թուրքիոյ արեւելեան եւ կեդրոնական նահանգներու ոչ միայն հայ, այլ եւ մահմետական բնակչութիւնը գաղթելու գէպի աւելի ապահով վայրեր, գէպի մայրաքաղաքը եւ անոր շրջակայքը :

Ձէլալիներու ապստամբութիւնը ընկերային կամ քաղաքական շարժում մը չէր, այլ յելուզակային արշաւ մը : Ծագում առած Ուրֆայէն 1598ին գլխաւորութեամբ Գարայ Եազըճիի, արագօրէն հասաւ մինչեւ Թոքատ, տարածուեցաւ Տրապիզոն, Պաղտատ, Գամասիոս, ասպատակելով եւ քանդելով, մահ եւ աւեր սփռելով երկրին եւ բնակչութեան մէջ անխտիր :

Ապստամբութիւնը, որ աւելց տասը տարի, պահ մը վտանգի տակ դրաւ սուլթաններու իշխանութիւնը : Երկար պատերազմներ պէտք եղան զրպելու համար ապստամբները, որոնք բազմաթիւ խումբերու բաժնուած էին բազմաթիւ պետերով, որոնցմէ Գարա Եազըճի ինքզինքը սուլթան հռչակած էր Կեսարիոյ մէջ : Ահմէտ Ա. ի վէզիրը Գուլյուճը Մուրատ փաշա անձամբ վարելով գործողութիւնները մէկ ու կէս տարի աւելոյ կռիւններէ ետք յաջողեցաւ ամբողջովին նուաճել ապստամբները եւ կարգը վերահաստատել (1608) :

Հարիւր հազարաւոր փախստականներ ապաստանած էին ուր որ կրցած էին եւ մանաւանդ լեյուած էին Կոստանդնուպոլիս եւ շրջակայքը : Այս գաղթին է որ կ'ակնարկէ Առաքել Գալիփեցի երբ կը գրէ. «Եւ յայտմ ժամանակի եղեւ ցիր ու ցան սղգն Հայոց եւ գնացին իւրաքանչիւր ոք հանդէպ

երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ եւ ապրելոյ : Ոմանք յԱռումէլի, ոմանք ի Բուղղան, ոմանք ի լեհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովերան Պոնտոսի, ոմանք Թավրէզ եւ յԱրտաէլ՝ եւ ի գաւառս սոցա : Զի յաղէն Հայոց որքան զարիպականք կան յուսացեալ գաւառս, յայս ժամանակիս եւ յայս պատճառէս են գնացեալ» :

Յովհաննէս քահանայ Մովեան իր ձեռագիր Պատմութիւն Արմաշու Վանուցին մէջ արտագրած է հետեւեալ տողերը անանուն գրչի մը որ կը պատմէ Արմաշի վանքին շինութիւնը. «Թաղէսս ոմն եպո. նուիրակ եկեալ յէջմիածնէ ի գաւառս Նիկոմիդիայ, որ կոչի Գոճայ Իլի, ուր Հայք յիսուն կամ վաթսուն տամբ ճապաղեալ անդանօր գիւղս շինեալ հողագործութեամբ ապրէին, որոց հարք եւ ծերք ի ձէլալաց էին վախուցեալ ի գաւառս յայտոսիկ, եւ ի ծովեղերեայս յայլս, կամ յԱստամպոլ եւ յԱռումէլի» : (*)

Նիկոմիդիոյ Սասկալ գիւղի եկեղեցւոյն մէջ պահուած Մաշթոցի մը յիշատակարանը կ'ըսէր. «ՌՃԸ (1609) ի մայրաքաղաքն Ստամպոլ՝ ի դուռն կումրուկու սուրբ Նիկողայոսին. առաջնորդութեան կեսարացի Գրիգոր քաջ բարունապետին, թագաւորութեան սուլթան Ահմատին. Աստուած իւր սուրն կարուկ անէ : Զեռամբ անարժան թոխաթցի Միքայէլին ի վայելումն խասկարցի տէր Միքայէլին. . . Արգ զրեցաւ սա ՚ի գտուն եւ ՚ի դիժար ժամանակիս, զի խեղճ քրիստոնեայքն ձալալաց համար

(*) Յիշուած Մ. Գաթապեանէ, Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ :

վախան եւ եկին ի Ստամպոլ, եւ դոքա այլ կու հա-
յածին ի Ստամպոլու»: (*)

Ճեւալիներու արշաւանքին հետեւանքով հայ
զաղթականութիւններու Նիկոմիդիոյ գաւառին մէջ
հաստատութեան վերաբերեալ վկայութիւն մը կը
զանենք նաև պարտիզակցի Յովհ. Աւագ քհն.
Մկրեանի մօտ.

«Հայր Մահտեսի Մկրտիչ Սողոմոն, զորմէ չու-
նիմք ծանօթութիւն հաւաստի, որպէս եւ զՏօրէ սո-
րա զԴաւթէ, որ կարծէ լինել մին յօթն սանուակ-
րանց հիմնարկողաց Պաղչէճիկ (Պարտիզակ) գիւ-
ղի՝ որ է հանդէպ քաղաքին Նիկոմիդիոյ, գաղթեալ
որպէս ես հաւանեալ եւ ստուգեալ եմ ի Պաղչէճիկ
գիւղէ Սերաստիա (Սըվազ) քաղաքի, յաւուրս Սուլ-
թան Մուրատ Դ.ի արքայի Օսմանեանց, որ յամին
1638, յարշաւել իւրում ի վերայ Պաղտատի, անց-
եալ ընդ Նիկոմիդիա (Իզմիր) եւ տեսեալ զխաղաւ
ի հանդիպակաց լերին ի բարձրաբերձ ծառաստանին
զխրճիթս ի ծառոց շինեալ, խնդրեալ որոնէ եւ իմա-
նայ զնոր հաստատութենէ գիւղին:

«Ըստ նախնեաց մերոց այս՝ Հայոց զաղթելոց
ի Սերաստիոյ, գտանին եւ նոյնքան տունք Տաճկաց՝
վախուցեալք եւ նոքին յահէ եւ ի բունութենէ ճեւալ-
եանց, այլ սոքա յեա 20-30 ամաց ելեալ գնան ի
Պաղչէճիկէ ի Գուճլար Տաճկաց՝ հնարիմաց ջանիւք
իշխանի ժամանակին»: (**)

Իսկ Մաղաքիա արք. Օրմանեան կը գրէ. «Պա-
տերազմական տազնապներ եւ բռնի դատութի ա-

(*) Յիշուած Հ. Ներսէս Սարգիսեանէ, Տեղագրու-
րիւն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

(**) Յովհ. քհն. Մկրեան, Մահարձանի եւ Յիշատակա-
րան, էջ 227: Կ. Պոլիս 1877:

դէտներ չեն միայն որ Արեւելքը եւ աւելի սաստկու-
թեամբ հայ տարրը կը ճնշէին: Զաւալի կամ ճեւալի
կոչուած յեւրոզակներուն փորձանքը, եթէ մեծա-
գոյնը չէր, համահաւասար արկած մըն էր: (...)
Հայերուն իրենց բնագաւառէն հեռանալը, որ զանա-
զան պատճառներով արդէն ընդարձակութիւն գտած
էր, այս անգամ եւս կ'աճէր եւ կը տարածուէր եւ
ոյ կրնար, կեանքը ազատել կ'աշխատէր եւ պան-
դըխտութեան ճամբան կը բռնէր: Պարսկաստան,
Ասորիք, Կովկաս, Լեհաստան, Հունգարիա եւ Կոս-
տանդնուպոլսոյ շրջակայքը նոր հայաբնակութեամբ
կը լեցուէին»: (Ազգապատում, հատուած 1593):

Մինաս Գ. Գասապեան որ առաջին համաշխար-
հային պատերազմէն առաջ շրջած էր Նիկոմիդիոյ
գաւառին մէջ ուր ծնած էր եւ անձամբ հարցուփոր-
ցած էր բնիկները, կը գրէ. «Ճանապարհորդը Նի-
կոմիդիոյ հայաբնակ գիւղերու ծերունիներէն կամ
մամիկներէն, մինչեւ այսօր, կը լսէ ճեւալիներու
սարսափի յիշատակները»: (*)

Վիթալ Գիւրիէ, իր վերոյիշեալ գործին մէջ,
խօսելով Նիկոմիդիոյ Հայոց մասին, կ'ըսէ.

«Գրիգորեան կոչուած ծէսին պատկանող հայ-
կական համայնքը, որուն տակաւին բաւական սեր-
տորէն կը կապուին Բողոքականները, որովհետեւ
երբ անկէ կը բաժնուին՝ շուտով վարձեալ անոր
ծոյր վերադառնալու վաճառքը կ'ունենան, կը ներ-
կայացնէ Իզմիթի միւլթէսարը՝ թուրքական բնակչնե-
րուն մօտաւորապէս մէկ քառորդը: Այս համայնքը,
թէեւ յարաբերաբար բազմամարդ, այնտեղ զըտ-
նուող ամենէն հին համայնքներուն կարգը չի գաս-
ուիր: Իր գալստեան թուականը կը հասնի միայն

(*) Հայերը Նիկոմիդիոյ Գաւառին մէջ, 1913:

1608ին երբ, փախչելով Պարսից թագաւորին, Ար-
րատ Մեծի բռնութենէն, լքեց իր երկիրը զոր այս
վերջինը ժամանակաւորապէս նուաճած էր: Այս
գաղութը, ամբողջապէս կազմուած հարուստներէ
և ջանասէր արհեստաւորներէ, բերաւ ամէն գագա-
թի, ամէն քաղաքի եւ գիւղի մէջ ուր հայ գաղթող-
ներ հաստատուած են, նոր տարր մը բարգաւաճու-
մի որ բնաւ չէ գաղբած շարունակուելէ, մանաւանդ
Ատափագար քաղաքին մէջ, որ այս նոր բնակչու-
թեան գալէն ետք գարձաւ կարեւոր քաղաք մը, ինչ-
պէս նաեւ առեւարական եւ ճարտարարուեստական
կեդրոններուն մէջ, եւ կամ անոնց մէջ որ նուիր-
ուած են բարձր ուսմանց, ինչպէս Արմաշ, Ասլան
Պէյ եւ Պաղչէճիկ, ուր գրեթէ միայն Հայեր կը
բնակին»:

Այս տողերուն մէջ այստեղ նկատի պիտի առ-
նենք միայն Նիկոմիդիոյ մէջ հայ գաղութին հաս-
տատման համար յիշատակուած թուականը, որու
մասին հեղինակը ազբիւրներ չի տար, բայց որ կը
համապատասխանէ մինչեւ հիմա ծանօթ վկայու-
թիւններուն:

Ճերայիներու բնաջնջումէն ետք թէեւ վէզիր
Գուլյուճը Մուրատ փաշան թագաւորէն հրամանա-
գիր առաւ մայրաքաղաքին մէջ եւ շրջակայքը հա-
ւաքուած գաղթականները իրենց տեղերը վերադար-
ձնելու, բայց հակառակ գործածուած բռնի միջոց-
ներուն անոնցմէ շատեր մնացին իրենց նոր բնակա-
վայրերուն մէջ կամ ցրուեցան վերադարձի ճամբուն
վրայ:

Նիկոմիդիոյ մէջ տեղաւորուած Հայերը լայն
ուստարէզ ունէին ամայացած եւ բերրի հողի մը վը-
րայ ընտրելու իրենց յարմար թուած վայրերը: Ու-
մանք կազմեցին զուտ հայկական համայնքներ,

խմբուելով համաձայն հայրենակցական կապերու,
ուրիշներ հաստատուեցան մահմետական գիւղերու
շուրջ: Այս վերջիններէն մէկ քանիին մէջ ոչ-հայ-
կական տարրերը ժամանակի ընթացքին անհետա-
ցան: Սկզբնական շրջանին, նորեկներուն մեծ մասը
մտաւ թուրք աւատապետներու ծառայութեան մէջ,
վայելելու համար անոնց պաշտպանութիւնը: Բայց
հետզհետէ վարձկանները ձեռք բերին իրենց աշխա-
տանքի անկախութիւնը, տէր գարձան հողի եւ հիմ-
նեցին նոր գիւղեր:

Եթէ հոսանքը ամենէն աւելի զօրաւոր եղաւ
ժէ. գարու առաջին տասնամեակին, (*) գաղթա-
կանութիւնը իրը հաւաքական շարժում տարածուե-
ցաւ նոյն եւ նախորդ գարուն վրայ գրեթէ հարիւր
տարուան աւելողութեան մը ընթացքին, ստեղծելով
բազմատարր հայկական բնակչութիւն մը բազմա-
զան բարբառներով, բարքերով, աւանդութիւննե-
րով, տարազներով եւ Ֆիզիքական յատկանիշերով,
որուն մէջ ներկայացուած էին Հայաստանի եւ արե-
ւելեան նահանգներու գրեթէ բոլոր շրջանները, Կա-
րինը եւ Ակնը, Սերաստիան եւ Պարբերգը, Արա-
րատեան գաշար եւ Վասպուրականը, Ղարապաղը
և Կիլիկիան:

(*) Անանուն յօդուածադիր մը Արեւելի մէջ կը գրէ.

«Այս ստոյգ է սակայն թէ Նիկոմիդիոյ գիւղերուն հիմ-
նարկութիւնք ընդհանրապէս կը բարձրանան մինչեւ վերջ
կոյս վեշտասաներորդ դարու եւ այդ տիրոջ կարճեաց հե-
տեւելով վարձանեալ Տ. Յովհաննէս Քհնյ. Մալեան իր
մէկ պատմական ձեռագրին մէջ կ'ըսէ. « Յաւուրց անտի կա-
րողիկոսացն Դաւթի Ե. Մելիսեդեկի եւ Մովսիսի Տաթե-
ւացոյ (1586 - 1632) բազմացեալ էին հայ բնակիչք ի քա-
ղաքս եւ ի գիւղս Նիկոմիդիացոց եւ հայ այցելուք չգաղա-
սէին յաճախել առ նոսա խրատել եւ ուսուցանել բանիւ եւ
օրինակաւ անձին պարկեշտութեան»: (Արեւել, Կ. Պոլիս,
1894, քք. 3177 - 3179):

Այստեղ Դաւիթ Ե. պէտք է կարգաւ Դաւիթ Գ.:

ԱՐՍԼԱՆՊԷԿ

Իզմիրի ի կեդրոնական գաւառակիրն Արսլանպէկ գիւղը կը գտնուի Իզմիրի կամ Նիկոմիդիա քաղաքէն 20 քիլոմետր հեռու, ծոցին հարաւ-արեւելքը, իր հարաւային արեւմտեան կողմը ունենալով Պարալի-զակը գրեթէ նոյն հեռաւորութեան վրայ եւ Օվաճը-գը շատ աւելի մօտ՝ դէպի արեւմուտք:

Հեռուն ցրուած էին դրացի գիւղերը: Համեմատաբար փոքր տարածութիւն ունեցող Նիկոմիդիոյ գաւառին մէջ արագօրէն աճած է բնակչութիւնը, ստեղծուած են իրարու մօտ բազմաթիւ գիւղեր որոնցմէ շատեր զուտ հայաբնակ էին: Բացի Պարալի-զակէն եւ Օվաճըգէն, Արսլանպէկը կը շրջապատեն Տէօնկէլ, Սապանճա, Տաղ-Գիւղ, Արմաչ, Խասկալ, եւայլն:

Արսլանպէկ կը տարածուի Կէօք-Տաղի ստորոտը: Ասոր ամենաբարձր գագաթը, Բէլ - Թէփէ (Ճաղատ - Գագաթ), կ'իջիտ գիւղին վրայ: Հակառակն բլլալով լեռնաշղթային, գագաթը գուրկ է բուսականութենէ: Խիտ եւ դարաւոր ծառերու անտառներով ծածկուած լեռնաշղթան կը զբաւէ հարաւային հորիզոնը, ստեղծելով տպաւորիչ պատկեր մը: Մեծ է Քէլ-Թէփէի համբաւը գաւառին մէջ: Այն ատեն իսկ երբ գիւղը բնակուած էր Հայերէ, եւրոպացի զբօսաշրջիկներ կուգային գիտելու հա-

մայնապատկերը: Գիւղէն ոտքով կարելի է հասնիլ անդնդախոր ձորերու վրայ կանգնած գաղաթը: Մինչեւ որոշ սահման մը կարելի է բարձրանալ ձիով: Հիւսիսակողմը, Նիկոմիդիայէն մինչեւ Սապանճայի արեւմտեան ափը երկարող անսահման գաշտը կը տարածուի զիտողին սուջեւ: Պայծառ օրերուն կը նշմարուին Նիկոմիդիոյ քաղաքը եւ ծռօցը: Հեռագիրատկով կարելի է տեսնել Մարմարայի Իշխանաց կղզիները:

Արսլանպէկի հիմնարկութեան, այնտեղ հայ բնակչութեան հաստատման մասին կարելի չէ գրտնել գրաւոր վկայութիւններ: Ամէն ինչ հիմնուած է բերանացի աւանդութիւններու վրայ, որոնց չեն հակասեր ինչ որ զիտենք գաւառին բնօրհանուր հասթեան ծաղման մասին, դարձեալ հիմնուած աւանդութիւններու եւ երբեմն հաստատար արձանագրութիւններու կամ հաղուսպէղ ձեռագիրներու յիշատակարաններուն վրայ:

Արսլանպէկի մէջ տիրող համոզումը այն էր որ իր առաջին բնակիչները գաղթած են Պարսկահաստանի զիւղերէն, թուրքեւպարսիկ պատերազմներու հետեւանքով, ժ.Ձ.րդ գարու վերջին տարիներուն: Արսլանպէկցիք, աւելի մանրամասնելով աւանդութիւնը, կը հաւաստեն թէ իրենց նախնիքներուն օրրանը եղած է Ղարապաղի մէջ Աւետարանաց կոչուած գիւղ մը: Առաջին եկեղծները եղած են եօթը ընտանիք, 21 հոգիով: Հաւանաբար այս է նաեւ վկայութիւնը Ստեփան վարժապետ Գաղանձեանի իր Պատմութիւն Արսլանպէկի ձեռագիրը աշխատութեան մէջ, զոր տեսած է Մ. Գ. Գասապեան:

Կայ նաեւ զօրաւոր աւանդութիւնը ձելալիներու արշաւանքէն խոյս տուող Հայերու խումբի մը որ հաստատուած է Արսլանպէկ, կամ վերագարձի

ճամբուն վրայ յաջողած է մնալ այնտեղ, ինչ որ ենթադրել կուտայ գաղթականական երկրորդ ալիք մը, ժ.Ի.րդ գարու առաջին տասնամեակին: Այս գաղթողներուն ծագման մասին ոչինչ կարելի է րտնել որ վաւերական ըլլայ: Կարծողներ կան որ եղած են Տիգրիկցի, Երզնկացի, Ակնցի, Կամախցի: (*) Այնուհետեւ Կարինէն մէկ տունի եւ Սերասախայէն երկու ընտանիքներու գալուստը կը յիշէ Մ. Գ. Գասապեան, առանց ուրիշ մանրամասնութեան: Անտարակոյս, ժամանակի ընթացքին եղած են նոր եկուորներ, ինչպէս գանուած են մեկնողներ: Այսպէս կը յիշուի թէ անցեալ գարու ԱՊական թուականներուն Արսլանպէկի մօտակայ ասուիի գօրծարանին շինութեան առթիւ եկած են հիւաներ, որմնաղիւրներ որոնք մնացած են տեղւոյն վրայ: Կը յիշուի նաեւ Արսլանպէկցի քանի մը ընտանիքներու վտտադրութիւնը հանդիպակաց Տաղ զիւղը: 1830ին Մարգուանի Սիմ-Հաճի զիւղէն Արսլանպէկ գաղթած են ջուհակ Ստեփանի եւ Տէր-Կարապետեան ընտանիքները (**): Այս վերջիններէն էր Կարապետ Տէր-Կարապետեան որ մետաքսի մանարան մը ունէր Արսլանպէկի մէջ տարադրութենէն առաջ: Առանց յիշելու այս երկու ընտանիքները, Արեւելի վերոյիշեալ անանուն թղթակիցը կը տեղեկացնէ թէ «Արցէն 1830ի գաղթականներուն մէջ գանուած է եւ Հաֆի զիւղցի ոմն տիրացու Յովհաննէս Քելշիշեան»: Մուշեղ Աւերեան կը յիշէ նաեւ քանի մը ըն-

(*) Պարթեւ Ն. Ստեփանեան:

(**) Պարթեւ Ն. Ստեփանեան կը յիշէ Արսլանպէկի զեբեղմանատան մէջ տեսած ըլլալ Մկրտիչ Տէր-Կարապետեանի մահարձանը որու վրայ գրուած էր. «Այր աստուածաւախ, բարուք ծանրախոհ, եկած է այսր իւր ծնողքին հետ Մարգուանի Սիմ-Հաճի զիւղէն 1830ին»:

տանիքներու Արսլանյէկի գաղթը Վասպուրականէն: (Հայրենիք ամսագիր, 1958): Առ ի տեղեկութիւն, յիշատակենք դարձեալ Արեւելի թղթակցութիւնը սրու հեղինակը կը կարծէ թէ «այդ գիւղի հիմնադիրք Սարբերգի կամ Սերաստիոյ գաղթականներ եղած լինին»:

Գիւղը կը կրէ, կը պատմէին բնիկները, զիրենք պաշտպանող թուրք հոգատէրի մը անունը: Նորեկ գաղթականները մտած էին արքունի Պօսթաւնը պաշտ Արսլան պէյի ծառայութեան մէջ եւ կ'աշխատէին անոր հողերուն վրայ ուր յետոյ շինուեցաւ ասուրի հռչակաւոր գործարանը: Բայց միշտ ենթակայ էին դրացի տէրէպէյիներու եւ յերուզակային խումբերու հարձանքին եւ հարստահարութիւններուն: Արսլան պէյ, որ գոհ էր իր վարձկան հողագործներուն աշխատութենէն եւ հաւատարմութենէն, պաշտպանելու համար զանոնք, հայ գաղթականները կը տեղաւորէ իր սեփական հողերուն մէջ մասին վրայ, սարալանջին ստորոտը: Նորահաստա գիւղացիները իրենց բնակավայրը կը կոչեն Արսլանյէկ կամ Արսլանյէյ, ինչպէս երբեմն գրուած է (*):

(*) Հ. Ս. Էփրեկեան Բնաշխարհիկ բառարանին Բ. տպագրութեան մէջ (Վենետիկ, 1903) կը գրէ:

(Արսլանյէկ, Արսլանրէյ, Արսլանյէյ: Գիւղին անուանակոչութեան պատճառն է եօթը բնանիւթ բաղկացած Գաւապպի հայ գաղթականներու ի սկզբան Արսլանյէկ անուն թուրքի կալուածքին մէջ հաստատուելը: Բնակչեաց թիւն է մօտ 4000: 1886 Նոյ. 22ին մեծ հրդեհէ մը մոխիր դարձաւ եւ 450 տունէն 15 տուն մնաց: 1888ին շինեցին մատուռ մը: Արսլանյէկը այժմ կառուցուած է նախկին տեղէն քառորդ ժամ հեռու: Շին տեղը մնացած է միայն մետաքսի գործարանը, ուր հարիւրաւոր օրիորդներ կ'աշխատին: Քէլ Թէփէ լեքան մօտ կը գտնուի Ս. Թոմաս առաքելի քարակիր եւ

Նրկար Ժամանակ Արսլանյէկցին ապրեցաւ այնտեղ պարզ, նախնական կեանք մը: Այդ էր նաեւ ամբողջ գաւառին բնակչութեան պարզած պատկերը: Չկային այն ասեւ յետագայի հարիւրաւոր հայ եւ թրքական գիւղերը, յունական մասամբ վերականգնած երգիքները: Պրուսայի եւ յետոյ կոստանդնուպոլսոյ գրաւումէն ետք յունական տարրը գիմած էր բռնի կամ կամուտը արտագաղթի, դէպի կղզիները, Կոստանդնուպոլիս, Բուքարէս կամ յունական թերակղզիներ: Լքուած էին քաղաքները եւ գիւղերը, հնութեան շինութիւնները, որոնց վրաստակները միայն կ'երեւէին: Ասոր փոխարէն ճոխ բուսականութիւն մը անկարգօրէն կ'ուսմանար, ծածկելով դաշտերը եւ լեռները, հասնելով մինչեւ ամառացած քաղաքները: Նրկիւրը դարձած էր անասման արօտատեղի մը վաչկատուն ցեղախումբերուն համար, թաղուած յետամնաց կեանքի մը մթութեան մէջ:

Ապացոյց մը չկայ որ թուրք իշխանութիւնը արդելք յարուցած ըլլայ Նիկոմիդիոյ մէջ Հայերու հաստատման: Գէթ սկիզբի շրջանին, աղբեցիկ սեփականատէրեր, ինչպէս Սալիլ փաշայ Պաղչէճիկի մէջ, Արսլան պէյ Արսլանյէկի մէջ, քաջալերած եւ պաշտպանած են Հայոց բնակութիւնը Նիկոմիդիա ուր հայկական կամ հայախառն գիւղերը շարունա-

խարխուլ ուխտատեղին: Գործունեայ, աշխատատէր եւ քաջ են Արսլանյէկցիք»:

Նոյն գործին Ա. տպագրութեան մէջ հեղինակը կը յիշատակի դարձեալ Արսլանյէկը, հետեւելով Հր. Աճառեանի գրքոյին հակիրճ տեղեկութիւններուն:

Մի. վրդ. Պոսուրեան իր Հայ Հանրագիտակին մէջ (Պուքրէշ, 1938) Արսլանյէկի կը յատկացնէ քանի մը հարեւանքի եւ անճիշտ տողեր:

կեցին բազմանալ գրեթէ մինչև 19րդ դարու վերջին քառորդը:

Սակայն այս փոքրաթիւ համայնքները յառաջգրեմելու համար ձգուած էին իրենց սեփական միջոցներուն: Միջոցներ որոնք գոյութիւն չունէին: Այս գաւառը, այնքան մօտիկ մայրաքաղաքին, կարուած էր աշխարհէն: Պետական օգնութեան խօսք չէր կրնար բլլալ: Բաւական է մտարեբել այդ շրջաններու պոլսահայութեան վիճակը հասկնալու համար որ գաւառը ոչինչ կրնար սպասել անկէ, մինչև ժ.թ. րդ դարու կէսը: Արսլանպէկ եւ ամբողջ Նիկոմիդիան սպրեցան ժ.թ. րդ եւ ժ.Ը. րդ դարերը առանց պատմութեան:

Եթէ դպրոցի յիշատակութիւն չենք գտներ, Արսլանպէկ ունեցաւ, ինչպէս ամէն տեղ գաւառին մէջ, իր նոր սրբատեղիները, ուխտատեղիները: Ունեցաւ իր անշուք եկեղեցին, որ մաս կը կազմէր Արմաշի թեմին:

1780ական թուականներուն սկիզբը կազգուանցի Չաքարիա պատրիարքին կողմէ Արմաշի վանահայր եւ առաջնորդ Պետրոս արք. Ղափանցիի արքունած կոնդակը կը յիշէ Արսլանպէկը Արմաշի վիճակին մէջ:

«Ի վերայ Արմաշու Չարիստիան Ս. Աստուածածնայ վանուց թեմի եւ վիճակի, եւ Իղնիմիտու, Ատարազարու, Ֆէհրիզլու, Թամլըխու, Նոր գեղու, Ֆրնտրիսլըյու, Արմայուի, Խասկալու, Տաղ գեղու, Արսլան պէկու... եւլն:» Կոնդակը կը շարունակէ յիշատակել Արմաշ-Նիկոմիդիա ընդարձակ թեմին ենթակայ գեո 26 ուրիշ գիւղերը, հրահանգելով որ պաղոյ, կնուների, հարսների, հոգեբաժնի, կտակներու, մատաղներու, պատկերի օժման, թաղման, քահանայի օրհնութեան, «գիշերա-

ժամից եւ քառասնեայ» բոլոր տուրքերը միմիայն առաջնորդին կամ անոր փոխանորդներուն տրուին, եւ թէ առաջնորդը միջամուխ չըլլայ քաղաքային գործերուն, «այլ միայն եկեղեցական եւ հոգեւորական իր խրգովքին վրայ մնալուց է»: Այս ատեն արդէն համեստ Արսլանպէկը ունէր պողատու եկեղեցի մը որ իր տուրքը կը վճարէր էջմիածնի, ինչպէս կը վկայէ Սիմէոն կաթողիկոս Երեւանցի (1763-1780) ցանկը Չամբոնի մէջ:

«Ի յերկրին Արեւմտեան, որք գոն ընդ իշխանութեամբ Օսմանցուց: Առաջին՝ մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս: Ընդ որով են եւ ներքոյ գրեալը:

«Յովածըղ, Ղլիճ գիւղ, Ասլան-բէկ, Ղուրթպէլանք, Օրթագիւղ, Ատարազար, Արմաշ, Խասկալ...» եւայլն:

Կաթողիկոսը կը բացատրէ թէ փոխանակ մէկ նուիրակի, որ 5-6 տարուան մէջ կրնար աւարտել պողատուութեան գործը, որոշած է երկու նուիրակ ուղարկել «յերկրին Արեւմտեան», որոնք երեք տարուան մէջ պիտի կատարեն իրենց շրջանը: Այսպէս է որ կը յիշէ Արսլանպէկը Կոստանդնուպոլսոյ եւ շրջակայքի նուիրակին ենթակայ եկեղեցիներուն մէջ:

Այս յիշատակութիւնները մեզի կը տանին ժ.Ը. դարուն վերջին տարիները: Արսլանպէկ գեո պիտի շարունակէր իր խոնարհ կեանքը մինչև շուրջ կէս դար, իր լեռներուն եւ անտառներուն հովանիին տակ ու անոնց բերքին երախտաւոր, երբ ասուիի գործարանին հիմնարկութիւնը իրեն բերաւ անսպասելի փոփոխութիւններ: «Չուխայի թագաւորական գործարանը, կը գրէր Հայաստան թերթը (*),

(*) Հայաստան Կ. Պոլիս, թ. 13-66, 27 Սեպտ. 1847:

որ Իզնիմիտու եւ Պաղչէճիզու մէջտեղը շինուեցաւ, այն կողմերու հեռուոր բնակիչներուն անգամ թէ մտաւոր կրթութեան եւ թէ սպրուստի շատ մեծ օգուտ բրաւ»:

Ատիկա ճիշդ էր մանաւանդ Արսլանպէկի համար: Գործարանը կը հայթայթէր նոյնիսկ տնային աշխատանք: Նոյն թերթը կը շարունակէ. «Չուխայի գործարանին մէջ բանող բազմաթիւ բանուորները գրեթէ ամէնքն ալ հայոց աղջէն են, եւ այն կողմի վիւղերէն: Տնէն դուրս չի կրցող ելլող կնիկ մարդոցը անգամ, նոյն գործարանէն անոնց յարմար բանելու բան կը խրկեն, որպէսզի բանին ու վատարկին»:

Պետութիւնը որոշած էր բրդեղէն ասուրի գործարան (չուխահակէ) մը հիմնել Արսլանպէկի մօտը: Քիլիզ գետին զօրաւոր հոսանքը, որ կը բխի Օվաճըզի եւ Արսլանպէկի ետեւի լեռներէն, ընտրել տուած էր այս վայրը: Ծրագրին գործադրութիւնը յանձնուած էր վաստղապետ Յովհաննէս պէյ Տատեանի որ իբր վարդեա մեքենադէտ թագաւորին հրամանով ուղարկուած էր Անգլիա ուսումնասիրելու հիւսուածեղէնի գործիքները: Յովհաննէս Տատեան յատուկ յանձնախումբով մը եկաւ տեղը որոշելու եւ յատկազիրը պատրաստելու: Իրեն ընկերացողներն էին հայ մասնագէտներ, Պօղոս պէյ Տատեան, ճարտարապետ Կարապետ պէյ Պալեան, Եսգըճը Պօղոս Օտեան եւ Յարութիւն Չօղանեան: Յանձնախումբին անդամները այցելեցին Արսլանպէկ եւ իջեանեցան Ալեքսան Զորպաճի Գասապեանի տունը:

Գործարանը կառուցուեցաւ 1836ին: Գործել սկսաւ վիթխարի անիւր (մեծ չարխը) զոր շինած էին հայ ճարտարագէտները, շարժման մէջ դնելով

տասնեակներով մեքենաներ: Շրջակայ վիւղերու թուրքերէն տեղի Արսլանպէկէն, Օվաճըզէն, Պարտիզակէն հայ բանուորներ սկսան աշխատիլ գործարանին մէջ: Այնտեղ վարպետի պաշտօն ստացաւ Սիմ-Հաճի վիւղէն գաղթած Չուհակ Ստեփանը, որու ծննդավայրին մէջ ոստայնանկութիւնը տարածուած էր անային արհեստի ձեւին տակ: Իրմէ սերած է Արսլանպէկի Տէր-Ստեփանեան ընտանիքը որ տուած է քահանայ եւ ուսուցիչ եւ ներկայիս Սելանիկ ապրող Պ. Պարթեւ Ստեփանեանը:

Գործարանը կ'աշխատէր բանակին համար, արտադրելով տարեկան մօտաւորապէս 200-000 քիլօ ասուրի եւ ուրիշ բրդեղէն կերպաններ, որոնց հիւսուացքին համար մասամբ կը գործածուէր էնկիւրիի քիֆթիկը:

Վ. Քիւրնէ կը խօսի իր ժամանակ (1890ական թուականներուն) գոյութիւն ունեցող Ֆէսի գործարանի մը մասին, շատ աւելի մօտ հին Արսլանպէկի քան ասուրի գործարանը, որու յիշատակութիւնը կը գտնենք 1849ին անոր վերատեսուչ Գույումճեան Յովհաննէս պատուելիի նուիրատուութեան առթիւ, եւ որ հաւանաբար փակուած է տեղը տալով Գարամուսալի, ուր կային նաեւ Ֆէսի եւ շայաֆի (բրդեղէն կերպաս) երկու գործարաններ:

Արսլանպէկի ասուրի գործարանին հիմնադրութիւնը անուղղակիօրէն պատճառ հանդիսացաւ Եէտի-Գուլէի (Կոստանդնուպօլիս) Ալզ. Հիւանդանոցին հացագինի յատկացումին պետութեան կողմէ: Ապտ-իւլ-Մէճիա կայսրը (1823-1861) քննական այցելութիւն տուաւ նորակառոյց գործարանին 1845 Ապրիլ 9ին: Գոհ մնաց: Երկու անգամ խիլայով (*) պատուեց Նիկոմիդիոյ առաջնորդ Ալաւնի

(*) Պատուոյ հացուստ:

եպս.ը որուն շնորհեց պատուանշան: Ուզեց պարգեւատրել գործարանին հիմնադիրը, վաստղապետ Յովհաննէս պէյ Տատեանը: Այս վերջինը խնդրեց որ փոխանակ իրեն պարգեւ տալու, պետութիւնը հացազին մը շնորհէ Ազդ. Հիւանդանոցին: Այսպէսով է որ սկսաւ Հիւանդանոցին պետական հացագինի ծանօթ յատկացումը, որ սկիզբը օրական 37 ու կէս օխա էր (չուրջ 45 քիլօ) եւ յետոյ բարձրացաւ, վրան աւելցուելով նաեւ մսագինի յատկացում մը:

Գործարանին հիմնադրութիւնը Արսլանպէկի համար առիթ եղաւ ուրիշ յաջողութեան մը: Ծիւնութեան յանձնախումբին անգամները տեսան գիւղին անչուք եկեղեցին, թելազրեցին որ գիւղացիները դիմեն Արմաշի վանահայր եւ առաջնորդ Ստեփաննոս Աղաւնի Զաքարեան եպիսկոպոսին, նոր եկեղեցիի մը շինութեան արածնութիւն խնդրելու համար պետութենէն, եւ խոստացան միջնորդել ստանալու համար կայսերական հրովարտակը:

1846 յունուար 17ին հրովարտակը Արմաշ բերաւ պատրիարքարանի հոշակաւոր ժամկոչ Մարգարը:

Աղաւնի եպս. Մայիս 5ին գնաց Արսլանպէկ եկեղեցիին յատակագիծը պատրաստելու, եւ Մայիս 10ին կատարեց հիմնարկութեան օծումը: Եկեղեցին, Ս. Աստուածածիմ, կառուցուեցաւ Մինաս Զրաղեան ճարտարապետին ձեռքով եւ օծումը տեղի ունեցաւ 25 Օգոստոս 1846ին (հին տոմար): Այդ օրը Աղաւնի եպիսկոպոս իր օրագրութեան մէջ գրեց. «Օծումն եւ Տեառնագրութիւն նորաչէն եւ չքնաղ եկեղեցւոյն Արսլանպէկի»: (*)

(*) Արեւելք, Կ. Պոլիս, 1894, թ. 3177-79:

Արսլանպէկցիք, այր եւ կին, մեծ եւ պզտիկ անդուլ աշխատած էին արագօրէն աւարտելու համար շինութիւնը: Կառուցին մեծ եւ շքեղ, ամբակաւ եկեղեցի մը: Մուշեղ Սերորեան կ'ըսէ թէ (*) անոր խոյակները յար եւ նման էին գործարանին մօտ շինուած կայսերական փէշիկին խոյակներուն եւ կը հետեւցնէ թէ հաւանաբար բերուած էին ճարտարապետ Զրաղեանի կողմէ:

Այս եկեղեցիին մասին է որ կը խօսի Էօթէն Պոռէ Հայաստան շարաթաթերթին ուղղուած նամակի մը մէջ, 1847ին: Է. Պոռէ Փրանսացի ճամբորդը, հատոր մը (**), հրատարակած էր 1840ին իր ճամբորդութեանը մասին Թուրքիոյ մէջ, ուր այցելած էր Փոքր Հայք եւ Արեւելեան նահանգները: Աւելի ետքը, դարձեալ Թուրքիա գալով, ուզած էր այցելել նաեւ բիւթանական գաւառները, ինչպէս կ'երեւի իր նամակէն ուր կը ներկայացնէ իր սպաւորութիւնները եւ կը կատարէ քանի մը թելազրութիւններ: Հայաստան շարաթաթերթը, որուն իմբաստիրն էր հռչակաւոր Պրուսացի Յովհաննէս Տիրոյեց Տէր Կարապետեան – Զամուրձեան պատուելին, հետեւալ տողերով կը ներկայացնէ Է. Պոռէն եւ իր նամակը.

«Իմաստուն եւ արհուական Գաղղիացի մը, Պ. Էօթէն Պորէ, որ քանի մը տարիէ ի վեր Սաամպուլ գանուելով այս օրերս Պրուսայու եւ Իդնիմիտու կողմերն ալ ճանապարհորդութիւն ըրեր է, ճանապարհորդութենէն վերադարձ ընելէն ետքը իր այս անգամ ճանապարհորդութեանը ըրած դիտողու-

(*) Հայրեմիթ Ամսագիր, Հոկտեմբեր 1958:

(**) Correspondances et mémoire d'un voyageur en Orient, 2 volumes, Paris 1840.

Թիւնները ստանձին զբոլ մեզի կը ծանուցանէ, խնդրելով որ նոյն նամակը թարգմանեմք եւ լրագրոյս միջոցաւ հրատարակեմք: Յիշեալ ազնուական անձը մեր գրարար եւ աշխարհարար լեզուններուն ալ հմտութիւն ունենալով՝ ազգերնուս վրայ ալ յատուկ սէր ունի, որ այս անգամ աւելի շատցեր է. ուստի անաչառութեամբ եւ սիրողաբար խօսածներն ալ իրեն ազնիւ ոգւոյն նշան մը բունելու եմք: Գրած նամակին թարգմանութիւնն է այս»:

Արսլանպէկի վերաբերեալ հատուածը միայն կ'ստենք այլ թարգմանութենէն որ կը խօսի նաեւ Պրուսայէն զատ, Պաղչէճիքի, Ատարագարի, Նիկոմիդիոյ եւ Սապանճայի վրայ:

«Արսլանպէկ զիւզ մըն է Պաղչէճիքէն երեք ժամու շափ հեռու: Ջերմեռանդ կրօնասիրութեան քանի մը վարմանայի գործեր տեսանք հոն: Բնակիչները 150 տուն հազիւ կ'ելլեն, այն ալ ըստ մեծի մասի Բէօմիլբնի եւ պէկիբնի. բայց քանի մը ամսուան մէջ մէկ մեծ եւ գեղեցիկ եկեղեցի շինելու կարող եղեր են, որ կոստանդնուպոլսոյ մէջ գտնուած եկեղեցիներուն կը հաւասարի: Աստուածային բաներուն նախանձաւորութիւնը ի՞նչ բաներ չի կրնար ընել: Ազգապետ յարգելեաց մէկը իրեն առատաձեռնութիւնովը 10·000 զուրուշ շնորհեր է գիւղացւոց, որ կարող ըլլան եկեղեցիին քով մէկ զպրատուն մըն ալ շինելու, որ մօտերս կը լմննայ եւ կը բացուի: Այս բարեսէր քրիստոնեայս իր անունը ծածկել ուզեր է, որպէսզի իր ըրած ոգորմութեան վարձքը մարդոցմէ չըլլայ, Աստուծմէ ըլլայ ամբողջ: Բայց ազգը ասոր ասանկ բարեգործութիւնները վայելելու անանկ սորված է որ՝ անունը չի տալովն ալ գուշակելը գժուար բան մը չէ»: (*)

(*) Հայաստան, 1847, թ. 51:

Արսլանպէկ ունեցաւ իր Մամիկոնեան վարժարանը, նորակառոյց եկեղեցիին կից:

Մինչեւ 1880ական թուականները գիւղը որ կը հաշուէր շուրջ 450 տուն 2·000է աւելի բնակչութեամբ կը շարունակէր իր խոնարհ կեանքը երբ մեծ հրդեհ մը գոյն բերաւ այժմէականութեան բեմին վրայ եւ իր անունը տեղ գրաւեց թերթերուն մէջ օրերով:

Հրդեհները մաս կազմած են Արսլանպէկի ճակատագրին: Առաջին հրդեհ մը որ անցողակի կերպով կը յիշուի թերթերու մէջ տեղի ունեցած է 1780ի շուրջ: Ոչ մէկ մանրամասնութիւն կարելի է քաղել անոր մասին, գէթ մինչեւ այժմ: Երկրորդ հրդեհը որ հիմնայատակ փճացուց գիւղը պատահեցաւ 1886ին:

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԴԵՀԸ

1886 Նոյեմբեր 24ին (6 Դեկտեմբեր) Արեւելի օրաթերթը կը հաղորդէր․

«Հրկիզումն Արսլանպէկ գիւղի․— Նիկոմիդիայէն խմբազրութեանս ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ այս շարաթ առաւօտ (*) ցաւալի հրդեհ մը ծագելով յԱրսլանպէկ, որ քաղաքէն երկուք ու կէս ժամ հեռաւորութեամբ հայարնակ գիւղ մ'է, 500 տունէ բաղկացեալ, գրեթէ ամբողջութեամբ գիւղն հրոյ ճարակ եղեր է։ Նիկոմիդիայէն պաշտօնական անձինք եւ ստիկանք օգնութեան գնացեր են։ Հեռագիր զարնուած պահուն հրդեհը կը շարունակուի եղեր։»

Հրդեհը ծագած էր այրի կնոջ մը լաթ յուսցած պահուն։ Կից կը գտնուէր նպարավաճառի խանութ մը որուն վառելանիւթի թիթեղները կրակ առած եւ տարածած էին բոցերը «վեց ճիւղի բաժնուած»։ Հրկիզուած էր ամբողջ գիւղը։ Ազատած էին միայն 14 տուներ, գիւղին երկու ծայրամասերուն վրայ։

Թերթը յաջորդ օրը կը հրատարակէր Նիկոմիդիոյ թագ․ Պորհուրդին տեղեկատուութիւնը, 24 Նոյեմբեր թուակիր․

(*) 22 Նոյեմբեր - 4 Դեկտեմբեր։

«Ազգային Թագական խորհուրդս անհրաժեշտ հարկի մը տակ կը կարծէ զինք ցաւ ի սիրտ հազար-դէլու բարեւէր ընթերցողաց եւ Մայրաքաղաքիդ համօրէն հայ ազգարնակութեան թէ քաղաքիս հան-դիպակաց Արսլանպէկ զիւզն մին ի թեմօրէից վի-ճակին, ամսոյս 22 շարաթ օրն միջօրէէն երկու ժամ առաջ ամբողջովին այրիացաւեր դարձաւ, յանհա-րին թշուառութիւն մասնելով 2200 հոգիներու բազ-մութիւն մը:

«Հրդեհն ծագեցաւ տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից Պէյօղլու Մահլէսի կոչուած փողո-ցէն, եւ նոյն պահուն յերեւան եկած սաստկաշունչ հողմն եւս զօրավիզ առած օձապտոյտ կ'արշաւէր եւ վերջապէս ամենուտեք զրուած արգելքն առ ո-չինչ գրելով յաջողեցաւ զիւզն ամբողջ պարփակել:

«Վիճակին բարեխնամ Առաջնորդ Գեր. Տ. Ստեփաննոս Ս. Արքեպիսկոպոս Յովակիմեան, որ զժբախտ Արսլանպէկի մէջ հովուական այցելու-թեամբ քանի մը շաբաթներ մնալէ յետոյ մեկնած էր յՕվաճըզ, զժբախտ արկածին տեղեկանալով փութացած էր անմիջապէս հրդեհին վայրն՝ ի միև-թարութիւն եւ ի քաջալերութիւն. նոյնպէս քաղա-քին Վսեմ Միւթէսարրըֆ պէյն իւր սովորական բա-րեւէր հողածութեամբ փութով յուղարկած էր բարձրաստիճան պաշտօնատարներ, ոստիկան զին-ւորներ, ջրհան եւայլն, եւ սակայն ապարդիւն:

«450 տուներ պարունակող Արսլանպէկ մի քանի ժամէն հրատոյժը հողակոյտ մը կը դառնայ. Աս-տուծոյ Տաճար, Կրթութեան Յարկ, բնակարանք ողջոյն, առուծախի կրպակք ամբողջովին, կահիւք կարասեօք, արմտեօք եւ զգեստիւք, ոչ եւս կը մնան: (Ի բաց տուել 15 տուներ միայն):

«Այսօրինակ զժբախտութեան մը հարկ եղած գարմանը տանելու բաւական չէ ամբողջ Նիկոմի-դիոյ վիճակը, վասնզի յիշատակեալ ժողովուրդն ոչ միայն անպատուար մնացած է այսօր, այլև ամ-բողջ տարւոյն մէջ եւ թերեւս բազմաթիւ տարինե-րու շարունակութեան մէջ իւր կեանքն ապահովելու բաւականացող արմտիքն եւ ապրանքը կորսուած է:

«Արզարեւ Միւթէսարրըֆ պէյն կողմանէ աւ կեղբոնական կառավարութիւնն, իսկ տեղւոյս Ազ-գային Գաւառ. Վարչութեան կողմանէ յԱզգ. Պատ-րիարքարան հեռագրուած լինելով յուսալից եմք թէ Օգոստոսիա եւ Ուորմած կայսեր բարձր գթու-թիւնը պիտի հասնի, Որոյ պայծառ բարեբաստու-թեան եւ երջանիկ արեւշատութեան համար Ամենա-կալին զիմաց անդադար կ'ազօթէ թշուառացեալ ան-մեզ մանուկներու բազմութիւն մը, ինչպէս նաեւ Բարձրաչնորհ Սրբազան Պատրիարք Հայրն եւս իւր հայրական հողածութեամբ, քաջայոյս եմք թէ պիտի բարեհաճի ազգովին օժանդակութեան մը ձեռնարկութիւնն հրամայել:

«Չմոռնանք յաւելուլ թէ սոյն աղիտարեր հըր-դեհին առթիւ երկու մանկանց եւ մէկ կնոջ կորուստ կը կարծուի. առ այժմ սասոյզ տեղեկութիւն կը պակսի այս մասին»:

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ Նիկոմիդիա քաղաքի
Ատենազպիր Ատենապետ
Գ. Պաղտասարեան Ռ. Գապասագալեան

Ազէաներու տարի մը եղած էր 1886ը, ինչպէս կը գրէ Մաղաքիա արք. Օրմանեան. «Ազէաներ ալ պակաս չեղան, ինչպէս են Արսլանպէկի, Իւսկիւտա-րի, Սասքէօյի, Վանայ, Նիկոմիդիոյ, Նիկոպոլոսոյ,

Ձէյթունի եւ ուրիշ տեղերու հրդեհները, Կիլիկիոյ եւ Փոքրասիոյ գաւառներու մէջ երաշտութեան պատճառած կարօտութիւնն ու սովը, որոնց օգնութեան ձեռնարկներ եղան եւ հոգարարձութիւններ կազմուեցան, միշտ պատրիարքին (*) հետապնդելով եւ յորդորելովը» (**): Ասոնց վրայ պէտք է աւելցնել Շապին-Գարահիսարի մեծ հրդեհը: Բայց Արսլանպէկի աղէտը ամենէն աւելի արձագանգ պատու եւ տպաւորութիւն գործեց, որովհետեւ ամբողջ զիւր մը փճացած էր եւ ամբողջ բնակչութիւն մը անպատուար մնացած, իւրաքանչիւրին պարէնն ու պաշարը, ամենէն անհրաժեշտ իրերը մոխիրի վերածուած:

Օգնութեան գործը շուտով կազմակերպուեցաւ: Նիկոմիդիոյ թագաւականութեան կոչին հրատարակութեան օրն իսկ ծանուցուեցաւ որ սուլթանը, Ապտիւլ Համիտ Բ., 1000 ոսկի նուիրած է ի նպաստ հրկիզեալներուն եւ հրամայած է օգնութեան յանձնախումբ մը կազմել իր նախագահութեան եւ գաւառական նախարար ձէյլտէթ փաշայի փոխ-նախագահութեան տակ: Հրամայած է նաեւ հրահանգել Իզմիրի կառավարիչին օժանդակութեան անհրաժեշտ միջոցները ձեռք առնելու համար:

Կազմուած յանձնախումբը, որ կը պարունակէր միայն մէկ հայ, կաթողիկէ եւ Եհիթ Էմանէթի խորհուրդի անդամ, 700.000 զրուշի (7000 ոսկի) 5 եւ 20 զրուշնոց հանգանակութեան տոմսեր հրատարակ հանեց: Ասոնցմէ 100.000 զրուշի տոմս ուղարկուեցաւ Հայոց Պատրիարքարանը, սպառելու հա-

(*) Յարութիւն արք. Վեհապետեան:

(**) Ազգապատում, հատուած 2935:

մար: Յանձնախումբը կազմեց հանգանակիչ մարմին մը որուն մաս կը կազմէին Պաւլ օրօմանի տնօրէն Ծոսթեր, Քոնտի Ժեներալ դրամատան տնօրէն Թուպինի եւ Թագապետական Զրդ շրջանի տնօրէն Պլաք պէյ:

Պատրիարքարնը իր կարգին կազմած էր իր յանձնախումբը, նախագահութեամբ պատրիարքական փոխանորդ Գէորգ Ծ. Վ. Իւթիւճեանի: Կիրակի օր մը կարդացուեցաւ պատրիարքական շրջաբերականը Կոստանդնուպոլսոյ եկեղեցիներուն մէջ ուր յատուկ պնակ պտացուցին աղէտեալներուն համար: Թագերուն մէջ կազմուեցան յանձնախումբեր: Գաւըր Գիւլի հանգանակութիւններուն հրատարակուած առաջին երեք ցանկերը 200 ոսկին կ'անցնէին: Վաճառականները Նիկոմիդիա կ'ուղարկէին կերպասի եւ «ճերմակ»ի ծրարներ: Բողոքականները կազմած էին իրենց յանձնախումբը:

Օգնութիւնը գործնականապէս Իզմիրի մէջ կը կազմակերպուէր: Այնտեղ ալ ստեղծուեցաւ յանձնախումբ մը, ատենապետութեամբ Տօքթ. Աշոտ Պարտիզպանեանի, ատենադպրութեամբ զեղազործ Յովսէփ Էֆ. Պուլութեանի եւ գանձապետութեամբ Գրիգոր Էֆ. Կառաճեանի: Բժիշկը եւ զեղազործը իրենց հետ ունենալով պէտք եղած զեղօրայքը, աղէտին յաջորդ առաւօտուն գացին Արսլանպէկ: Իրենց հետեւեցան քաղաքապետական բժիշկ Տօքթ. Գրիգոր ձեւրահեան եւ զեղազործ Յակոբոս Էֆէնտի:

Հրդեհին միջոցին տեղւոյն վրայ փութացած էին Նիկոմիդիոյ զին. հրամանատար Սաստէթտին փաշա, գայմազամ Շէյլքէթ պէյ, զինուորականներ, ջրհանկիրներ, բայց շատ ուշ էր: Նիկոմիդիոյ կա-

ուսվարելը տրամադրեց 80 վրան եւ քաղաքապետա-
կան ժողովը երկու օրուան մէջ ուղարկեց 4000 հաց:

Դրացի գիւղերը անտարրեր չմնացին: Արմաշի
վանահայրը, որ այն ատեն Խորէն եղւոյն Աշքեանն
էր, իր հետ ունենալով Արսլանպէկի Մամբրէ վրդ-
նալպանտեանը, զնաց Իգմիթ խորհրդակցելու միւ-
թէնտարրֆին հետ: Արմաշիք հաւաքեցին արմտիք
եւ 1000 զրուշ: Ատափազարի եւ Գուրապէլէնի մէջ
նմանապէս հաւաքեցին ցորեն, հազուստ եւ զրամ:
Իգմիթի սանձադին զագաներէն Գանաբայի գայ-
մազամ Մուհարրէմ էֆէնտի հրկիղեալներուն ու-
ղարկեց 1000 զրիւ ցորեն եւ 4000 զրուշ: Իգմիթի
Յոյները նուիրեցին 1000 Ֆրանք:

Կարելի եղաւ ազէտեալներէն մաս մը առժա-
մապէս տեղաւորել շրջակայ գիւղերուն մէջ: 50-60
ընտանիք ապաստանեցան մօտակայ յունական Գա-
րա-Թէֆէ գիւղը, 50 ընտանիք զացին Օվաճըզ, 25-
30 ընտանիք՝ Իգմիթ եւ ուրիշներ Ատափազար եւ
Սապանձա:

Բայց աղէտեալներուն մեծ մասը կը մնար տեղ-
ւոյն վրայ, ժամանակաւոր ապաստանարաններու
մէջ: Աղէտէն զրեթէ ամիս մը ետք Իգմիթի կառա-
վարիչը կը տեղեկագրէր կայսերական յանձնաժո-
ղովին թէ 776 հոգի օգնութեան կարօտ են, որոնց
ամէն օր հաց կը բաշխուի, եւ կը թերլագրէր որ 2000
զրիւ ցորեն տրամադրուի:

Օգնութեան գործը շարունակուեցաւ մինչեւ յա-
ջորդ տարուան զրեթէ կէսը: Եգիպտոսէն Թազուր
փաշայի նախագահութեամբ կազմուած յանձնա-
խումբ մը ուղարկեց 112 ոսկի: Մամբրէ վրդ. Նալ-
պանտեան 1887ի յունուարին շրջապատոյտ մը կատա-
րեց Պրուսայի վերայէթին մէջ, օգնութեան կոչ
ուղղելով հասարակութեան ի նպաստ Արսլանպէկի:

Թղթակից մը Արեւելքի մէջ կը նկարագրէ անոր
երկու օրուան այցելութիւնը Սէօլէօղ 16-18 Յուն-
ուարին, սրաածմլիկ քարոյները եւ արդիւնաւոր
հանգանակութիւնը:

Պատրիարքարանին կազմած նպաստամատոյց
յանձնախումբը իր վերջին նիստը գումարեց 22
Մարտ — 3 Ապրիլ 1887ին եւ յանձնեց իր գործունէ-
ութեան տեղեկագրերը Ազգային վարչութեան:

Իսկ սուլթանին նախագահութեան տակ կազ-
մուած յանձնաժողովը որ հանգանակութիւն կատա-
րած էր ի նպաստ Արսլանպէկի, ինչպէս եւ նոր
հրկիղուած Շապին-Գարահիսարի, 2800 ոսկիի բա-
ժին մը հանած էր Արսլանպէկի համար: Այս գումա-
րը Իգմիթ տարին Շիւքրիւ էֆէնտի եւ Արսէն էֆէն-
տի Մինասեան: 22 Մարտ — 3 Ապրիլ 1887ին զրամ
բաշխուեցաւ Արսլանպէկիներուն, ներկայութեամբ
Իգմիթի կառավարիչին, Արմաշի վանահօր, բազմա-
թիւ ազգայիններու եւ կառավարական պաշտօնեա-
ներու: Աղէտեալներէն մինչեւ 10 տարեկան եղող-
ներուն տրուեցաւ 90ական զրուշ, 10 տարեկանէն
վեր եղողները ստացան 180ական զրուշ:

31 Դեկտեմբերի ամսավերջի խմբագրական տե-
սութեան մէջ Արեւելք կը գրէր. «1886 տարւոյն
վերաբերող դժբախտ արկածից կարգին մէջ կարե-
ւոր տեղ մը կը բռնեն Շապին-Գարահիսարի նոր
հրկիղումն եւ Արսլանպէկի հայկական գիւղին ամ-
բողջական հրկիղումն: Եթէ Շապին-Գարահիսարի
հեռաւորութիւնն արգելք եղաւ ժամանակին նպաստ
զրկելու, Կ. Պոլսոյ հայ ժողովուրդը խորապէս
յուզուեցաւ ի լուր դժբախտութեան Արսլանպէկ-
ցոց, եւ ձեռնարկեց անմիջական նպաստներ զըր-
կել»:

Նիկոմիդիոյ թեմին առաջնորդը, Ստեփաննոս

արք., երկար առեն մնաց հրկիդեայներուն մօտ: Ազէտէն ետք պէտք էր վերաշինել: Տարեդուրսը մօտ էր: Հակառակ գիւղին քանդումին, պէտք էր վերականգնել թաղային կազմակերպութիւնը որ պաշտօն պիտի ունենար մասնակցելու վերաշինման գործին:

Այս օրերուն է որ կը դուզալիպի Պետրոս Տօնապետեանի ճամբորդութիւնը Արարկայէկ, որուն նկարագրութիւնը կուտայ կործանած գիւղին կեանքէն պատկեր մը ազէտէն շուրջ ամիս մը ետք.

«Արարկայէկ բազմահայ գիւղը այրուել էր, եւ կարգացինք որ սուլթան Համիդ 5000 ոսկի (*) էր նուիրել նորոգութեան համար: Ծնունդի ժամանակ Միհրանի (***) հետ գնացի իւր հիւրասէր հօր տունը: Լսեցինք որ Առաջնորդը Ծնունդը անցնում էր կիսաւեր Արարկայէկի սգասիրտ բնակիչներին մէջ: Ծնունդի կէսօրը անցել էր, երբ Միհրան եւ ես նստանք ձիերի վրայ եւ ձիւնապատ եւ գժուարին ճանապարհով մեկնեցանք ուր էր ժողովրդանուէր հոգեւորականը: Գիւղի ցածից անկարելի էր ձիերով վեր բարձրանալ, այնքան որ գետինը լարծուն էր: Այդտեղ երեւում էր մի հողաչէն ցած երկար անարուեստ հաստատութիւն: Ժամանակաւոր եկեղեցին էր եւ ասեցին ժողովուրդը եւ Առաջնորդ այնտեղ էին: Մտանք ներս, տեղը լի էր ազօթողներով, եւ Ստեփաննոս Եպիսկոպոս կանգնած սեղանի վրայ քարոզում էր: Երբ նայեցայ այդ տեսարանին եւ միտքս սաւառնեց այն երկիրը, ուր այս հաւատացեալների աստուածային տէրը տասն-

(*) Պէտք է կարգալ 1000 ոսկի:

(**) Միհրան Աթանասեան, Նիկոմիդիացի, դասընկեր Տօնապետեանի, զոր կ'առաջնորդէ իր գաւառին մէջ:

եւ ութ դար առաջ քարոզում էր իր աշակերտներին եւ հաւատացեալներին եւ մտածեցի որ արդեօք պատահե՞ց որ քարոզէր այսպիսի գժբախտութեամբ հարուածուած մի ժողովուրդին, որպէս եկել էր այդտեղ, եւ քարոզում էր նրա այս հայազգի պաշտօնեան:

Ժամերգութիւնը վերջացաւ, ժողովուրդը ցըրում էր, ոմանք գլխիկոր: Առաջնորդը տեսաւ մեզ, ժպտեց եւ ողջունեց, եւ օրհնեց մեզ, մեր մտածութեան համար, ինչ մտածումով որ նա էր եկել այնտեղ: Եկեղեցւոյ ներսում կային 2 թէ 3 քուէատուփեր, գրուած թուղթեր պատի վրայ, ցոյց տալով որո՞նք էին ընտրուել գիւղի վարչութեան անդամներ եւ որքան քուէներով, քուէարկողների թիւը հասնում էր շատ հարիւրների եւ քուէարկութիւնը կատարուել էր Առաջնորդի եւ քահանաների հսկողութեան տակ, եւ ներկայացուցչների մասնակցութեամբ:

«Առաջնորդը տարաւ մեզ ուր ինք էր իջեալ եւ առաջարկեց մեզ մի երկու օր մնալ եւ տեսնել գիւղի վիճակը: Մինչ նստած էինք իր բնակատեղիում, որ եւ մերն էր, եւ նմանում էր Թիֆլիզի եւ Երեւանի բալկոնաւոր տուններին, մի սոսկալի կուսածայն գորգոսաց, լսուեց ցածից, բարձրանալով դէպի վեր: «Նորէն այս անգամ եւ անսիրտ մարդիկը», ասաց եպիսկոպոսը, ցաւալի սիրտով:

«— Հայր Սուրբ, մենք չենք ուզեր այդ մարդիկը ըլլան գիւղի գլխաւորները, նոր ընտրութիւն կը պահանջենք, մեր ուզած մարդիկը կ'ուզենք որ ըլլան գիւղի մեծաւորները»:

«Ձաւակներս, այս քանի անգամ է որ կուզաք եւ ասանկ աղմուկներ կը հանէք, կը համոզուիք խօսքերուս, եւ գտնուիլի պէս հեղաբար կ'երթաք,

և կատարած առիւծի պէս կը վերադառնաք: Ամբողջ գիւզը մասնակցեց քուէարկութեան, իմ եւ ձեր քահանաներու եւ գեղի մեծերու ներկայութեամբ: Գացէք տուներնիդ եւ մտածեցէք ձեր անբախտ վիճակի վրայ, եւ շինեցէք ձեր այրուած գիւզը»:

Մարդիկը գնացին, բայց հետեւեալ օրը նորէն եկան աւելի բուռն բարկութեամբ եւ մի այլ նոր ընկերով, եւ գոռալով Առաջնորդին:

«Համբերատար եպիսկոպոսը ոտքի ելաւ, բրունեց երկուքի թեւերից, եւ հրամայեց իւր մօտ եղած անձերին, եւ զայրոյթալից ձայնով գոչեց՝ բռնեցէք այդ անդամներուն, եւ կողպեցէք գուռը, եւ դառնալով խառնակիչներուն, գոչեց՝ «Դուք թշուառականներ, այս քանի անգամ կ'ըլլայ ձեր բրածները, ասանկ այդ սենեակի մէջ փակուած պիտի մնաք, մինչեւ որ խոստովանիք եւ լսէք ինձ թէ որո՞նք են որ կը սորվեցնեն ձեզ ասանկ խառնակութիւն ընէք սա անբախտ գիւզի խաղաղութիւնը տակն ու վրայ ընելու համար»:

«Ամբողջ գիւզեր բանտարկեալ մնացին, եւ հետեւեալ օրը յուսահատ խոստովանեցին: Առաջնորդը կանչեց բուն գլխաւոր եւ անյաջող աղաներին, եւ նրանց ներկայութեամբ հրամայեց բանտարկեալներին իրենց գրգռող այդ մարդոց անունները (բսել):

«Եւ այսպէս Արսլանբէգի տուների հրդեհից յետոյ նա իջեցրեց, եւ մարեց Արսլանբէգի մարդոց կրքի եւ առելութեան հրդեհը:

«... Երբ հեռացանք այրուած գիւզից, ըստ երեւոյթին առելութեան հրդեհը մարել էր, նրանց այրուած գիւզի հրդեհին նման:» (*)

(*) «Հայաստան եւ հայ ժողովուրդը դարերու միջով», Պետրոս Ծոնապետեան (Վազինակ), Փարիզ, 1941:

Աթոռի կռիւը արգելք չէր որ Արսլանպէկցիները ձեռնարկեն իրենց գիւզին վերաշինութեան: Եղան դրամահաւաքութիւններ, կատարուեցան փոխառութիւններ: Պետութիւնը պաշտօնեաներ գրկեց քննելու համար վերաշինութեան գործը:

1887 Մարտին Իգմիթէն Արսլանպէկ եկաւ կառավարութեան ներկայացուցիչ Քէօսէ զատէ Հաճի Մէհմէտ էֆ., իրեն հետ ունենալով երկրաչափ Սամի էֆ. եւ ճարտարապետ Պետրոս էֆ.:

Որոշուեցաւ նոր Արսլանպէկը կառուցանել աւելի «վար», նախկին գիւզէն քառորդ ժամ հեռու գէպի հիւսիս, ուրիշ բլրակի մը վրայ, «քէգլիսի երի» կոչուած, ուր նախապէս շինուած էր կարապետ Գալֆայի գործարանը:

Երկրաչափը եւ ճարտարապետը պատրաստեցին «յատակագիծ» մը: Գիւզին վերաշինութիւնը պիտի չըլլար ըստ կամս, տուները պիտի չշինուէին համաձայն իւրաքանչիւրին նախասիրութեան, այլ համաձայն ծրարի մը:

Յատակագիծը Իգմիթէն բերուեցաւ գիւզ: Յույսագրուեցաւ եկեղեցիին մէջ հանգիստուոր արարողութեան մը ընթացքին: Գաւառական ժողովը հրահանգեց գաւառին եկեղեցիներուն ազօթքներ՝ Արսլանպէկի հանգէպ կայսերական հոգածութեան առթիւ: Պարտիզակի մէջ Եղիշէ Ծ. Վ. Դուբեան խօսեցաւ կայսրը գրուատող քարոզ մը:

Մեծ էր գիւզացիներուն խանդավառութիւնը որ սակայն չուտով փոխուեցաւ յուսաբեկութեան եւ նոյնիսկ զայրոյթի, երբ տեսան թէ վերիվայր կը չըջին իրենց տեղերը նոր գիւզին մէջ: Ամէն ոք կարծած էր թէ պիտի գրաւէր իր նախկին գիւզը, բայց նոր յատակագիծը տեղափոխած էր ամէն ինչ, իրարմէ հեռացած էին տուները, խանութները,

գրացիները: Երբ երկրաչափը մեկնեցաւ, գիւղացիները արգելք եղան պեղումներուն եւ հիմնադրութեանց: Գացին Իզմիթ, կառավարութեան «գուռ», բողոք բարձրացնելու:

Կառավարիչը ուղարկեց երկու հոգի, Քէօսէ գատէ Հաճի Մէհմէտը եւ Նասյի Պիպիեան, խաղաղեցնելու համար հրկիզեալները, առանց յաջողութեան: Ի վերջոյ, կառավարութեան հաւանութեամբ տեղացիները կազմեցին յանձնախումբ մը, ճարտարապետին հետ պատրաստելու համար նոր յատակագիծ մը որ հանդարտեցուց միտքերը պահպանելով հանդերձ սկզբնական տուեալները:

Նիկոմիդիոյ գաւառին մէջ Արսլանպէկ միակ գիւղը եղաւ որ կառուցուած էր կանխապատրաստուած յատակագիծի մը վրայ, խաշաձեւ իրար կտրող լայն փողոցներով ու շուկայով, քաղաքային շէնքերը յիշեցնող տուներով:

Շնորհիւ գիւղացիներուն կորովին եւ աշխատութեան, Արսլանպէկ վերագտաւ իր ամբողջութիւնը: Բայց հրդեհը մեծ հարուած մը եղած էր իր անտեսութեան համար, որ աղէտէն առաջ յառաջգիւժութեան նշաններ սկսած էր ցոյց տալ, շնորհիւ մանր առեւտուրին տարածման եւ շերամարումութեան որուն կը յարէր բնակչութիւնը: Գիւղը վերաշինուեցաւ, բայց կը մնային դեռ մեծ պակասներ: Պէտք էր վերստեղծել պահեստները, խողակը եւ ամէն տեսակ մթերքները որոնք փճացած էին, սալարկել փողոցները, բանալ աղբիւրներ, կառուցանել յարմար եկեղեցի մը եւ դպրոց մը: Այդ նպատակով ձեռնարկուած դրամահաւաքութիւնները մեծ արդիւնք չտուին: Կարելի եղաւ միայն քանի մը մանր ստացուածք գնել եկեղեցիին համար եւ շինել կրպակ մը իբր հասոյթի միջոց դպրոցին համար,

որմէ կը սպասուէր 1500 դրուշի եկամուտ մը: Խօսք չէր կրնար ըլլալ նախկինին նման չքեղ եկեղեցի մը կառուցանելու: Գիւղացիները կը մխիթարուէին ամէն տարի ուխտի երթալով «վերի գիւղ» եկեղեցիին աւերակներուն, որուն հաստատուն պատերը անվըթար մնացած էին: Սովորութիւն եղած էր նախկին Արսլանպէկը կոչելու վերի գիւղը, եւ նորը վարի գիւղը:

Բայց հրդեհին հետքերը կ'անհետանային: Արսլանպէկցին կը վերադռնէր իր բնական գուարթախոհութիւնը: Կազմակերպուած էր համանքային կեանքը: Մանարանատէր Կարապետ Տէր-Կարապետեան կը ներկայացնէր Արսլանպէկը Նիկոմիդիոյ Գաւառական Վարչութեան մէջ, որուն ատենադպիրն էր: 3 - 15 Փետրուար 1892ին Օրմանեան Սրբազան, վանահայր Արմաշի, այցելեց Արսլանպէկ, յաջորդ օրը, Կիրակի, քարոզեց, խրատուեց աղէտահար ժողովուրդը որ կարճ ժամանակի մէջ կըրցած էր «գարձեալ տուն-տեղ ըլլալ»: Իջեւանած էր գիւղին երեւելիներէն Հայրապետ Սերօրեանի տունը, որ հայրն էր Մուշեղ Սերօրեանի: Գիւղին թաղականները գացին այնտեղ ողջունելու ականաւոր հիւրը:

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԴԵՀԸ

Բայց վերջ գտած չէին Արսլանպէկի զժբախտութիւնները: Նոր ազէտ մը կը սպասէր գիւղացիներուն: Երրորդ հրդեհ մը դարձեալ աւերակ դարձուց Արսլանպէկը:

Հազիւ ութը տարի անցած էր 1886 Նոյեմբեր 22ի ազէտալի շարաթ օրէն երբ 31 Յուլիս (12 Օգոստոս) 1894ին, կիրակի, Երեկոյեան դէմ երրորդ հրդեհ մը փճացուց նորաչէն Արսլանպէկը:

Հրդեհը ծագած էր Սաչատուր աղա Պալթայեանի տան մէջ որուն ամբարները լեցուն էին քթանի դէզերով, որոնց կրակ տուած էին այնտեղ խաղացող պզտիկ տղաք: Տնեցիները փորձեր էին կրակը մարել առանց ոչ ոքի իմաց տալու: Յետոյ ստիպուած եղած էին բերել գիւղին մէջ գտնուող միակ ջրհանը, առանց արդիւնքի: Այն ատեն հաւաքուած գիւղացիները, յիշելով անցեալի ազէտը, ձգած գացած էին իրենց տունները որոնց կը սպառնար տարածուող կրակը, աճապարանքով փրկելու համար ինչ որ կրնային:

Մինչեւ որ հասան մօտակայ արքունի գործարանին եւ Իզմիթի ջրհանկիրները, Արսլանպէկի 517 տուններէն 11ը միայն մնացած էին, որոնց մէջ մետաքսի մանարանը որ քաղաքին ծայրը կը գտնուէր: Եկեղեցին, դպրոցը, եկեղեցիին պատկանող քանի

մը կալուածները փճացած էին: Անդամ մը եւս մոխիրի վերածուած էին տուներուն եւ խանութներուն պաշարները: Իգմիթցի Յովհանէս աղա Հելվաճեան կ'ողբար Արսլանպէկի մէջ իր ունեցած 300 քիւէ խոզակին կորուստը:

Երբ աղէտին լուրը Իգմիթ հասաւ, Սանճաքին կառավարիչ Սելիմ Սըբրի փաշա եւ զինուորական հրամանատար Սաասէթտին փաշա փութացին տեղւոյն վրայ, կազմակերպելու համար հրկիզեալներուն պատասպարման եւ օժանդակութեան գործը: Եկաւ նաեւ թեմին առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս որ Ատափազար կը գտնուէր այդ միջոցին:

Նիկոմիդիայէն եւ շրջակայ զիւղերէն դարձեալ օչնութեան հասան: Այդ օրերուն թղթակից մը կը յիշէ ուղարկուած պարէնը. «835 քիւօ հաց Նիկոմիդիոյ թաղապետութենէն, 400 քիւօ հաց աղ. փուռէն եւ 25 քիւօ ձիթապտուղ ձեռամբ Թաղ. Խորհրդոյ անդամոց, որք փութացեր էին հասնել օչնութեան: 200 քիւօ հաց՝ Թանաշաքի էֆ., 100 քիւօ հաց՝ Մելքոն էֆ. Գասպարեան, մէկ տակառ աղած ձուկ Մ. Գասպար էֆ. Աղասեան, Պարտիզակէն արժ. Կարապետ վարդապետ, քահանայ հայրեր, Թաղական Խորհրդոյ անդամք ոմանք կը հասնէին հոն հեաերնին բերելով 750 քիւօ հաց եւ 110 օխա ձիթապտուղ:»

Բայց ժամանակները փոխուած էին: Այս վերջին հրդեհին պատճառած աղէտը աւելի զգալի եղաւ Արսլանպէկցիներուն համար քան նախորդինը: Քաղաքական միջնորդարը նոյնը չէր քան ութը տարի առաջ: Հայ տարրը դարձած էր հարածանքի առարկայ: Այլեւս հարց չէր կրնար ըլլալ որ սուլթանը հազար ոսկի նուիրէ եւ հրամայէ օչնութեան յանձ-

նախումը կազմել: Սանճաքին իշխանութիւնները ըրին պարզապէս ինչ որ իրենց պաշտօնը կը պահանջէր: Բայց պետութիւնը չհետաքրքրուեցաւ աղէտեալներով: Պատրիարքարանը եւ աղ. մարմինները անտարբեր մնացին: Մամուլը գրեթէ արձագանգ չտուաւ: Արսլանպէկցիները մնացին լքուած իրենց ճակատագրին:

Կար ուրիշ պատճառ մը որ ստուերի մէջ կը ձգէր Արսլանպէկի երկրորդ ամբողջական հրկիզումը: Հազիւ 2-3 ամիս առաջ պատահած էր Կոստանուպոլսոյ եւ շրջակայքի մեծ երկրաշարժը: Շատ վայրեր քանդուած էին եւ զոհերուն թիւը հարիւրներու կը հասնէր: Պոլսահայութիւնը իր օչնութիւնը կը փութացնէր մանաւանդ Գոււմ-Գափուի աղէտեալներուն: Յնցումը տարածուած էր զանազան ուղիւթիւններով: Պրուսայէն Գասթեմունիի լեռները երկարող գիծի մը վրայ մարդիկ եւ բնակութիւններ առաւել կամ նուազ չափով ենթակայ եղած էին կորուստի եւ քանդումի: Ատափազարի մէջ 700ի մօտ առններ փրած կամ խարխլած էին: Այնտեղ է որ կը գտնուէր առաջնորդ Ստեփաննոս արք.ը որ զրազած էր արկածեալներուն վերարնակութեան խնդրով, երբ հասաւ Արսլանպէկի հրդեհին լուրը:

Հակառակ շուրջը տիրող աւերներուն, հետը առած քանի մը քահանաներ, առաջնորդը շրջեցաւ ամէն կողմ, հաւաքեց պաշար ու ծածկոց, եւ տարաւ Արսլանպէկ: Պարտիզակի Տէր Գրիգոր քահանան կը պատմէր թէ «Սրբազանը պաշարը ձիերու վրայ բեռցուց եւ միասին մեկնեցանք Արսլանպէկ, երկու ժամ հեռու: Երբ հասանք ու տեսաւ մոխիրի վերածուած զիւղը, սկսաւ տղու մը պէս լալ: Ամբողջ օրը ոտքի վրայ էինք եւ պատառ մը բան չէր զրած բերանը: Չէր թողուր որ նստիմ, երեսուն

ժամէ ի վեր ոտքի էինք: Անօթութեանէ կը տանջուէի երբ յանդգնեցայ ըսել. «Սրբազան, քիչ մը բան ուսանե՞ք»: «Ո՞ւր է հացը որ ուտենք», պատասխանեց սրտմտութեամբ: «Հացէն աւելի ի՞նչ կայ, ամէն կողմերէն լեցուն հաց բերած ենք»: Պատասխանեց. «Անոնք մերը չեն, այլ այս թշուառ մարդոց իրաւունքն են»: Գիշեր էր արդէն, երբ հրկիզեալ գիւղացիներուն մօտ շրջելով, բաժնելով ինչ որ բերած էինք, մխիթարելով եւ յուսադրելով, վշտարեկ կը մեկնէր: Ճամբան զգաց յոգնութիւնը եւ անօթութիւնը: Առուի մը քով իջաւ եւ Գէղէոնի զինուորին պէս տարածուելով հողին վրայ բերանովը ջուր խմեց, աման չըլլալուն: 35 ժամ ետք միայն կրցաւ հաց ուտել: (*)

Ժամանակ մը այս կամ այն ձեւով պատուարուելէ եւ մատակարարուելէ ետք, Արսլանպէկցիները վարձեալ անցան գործի: Առաջնորդը հոս ու հոն գիմեց, եւ մանաւանդ գումար մը ապահովեց Արիկ Ունձեանէն, պետական յանձնառու, սզգային ջոջ, բարերար եւ խնամակալ Արմաշի:

1895-96 տարիներուն գեռ Արսլանպէկցիներուն ձեռքն էին բահն ու բրիչը, մուրճը եւ սոցոյր: Մինչ գիւղացիները կը բանէին, շրջան կ'ընէին ջարդի շուկներ: Տուները շինողները օրը քանի մը անգամ կ'ընդհատէին իրենց գործը, կը հաչուէին իրենց ուժերը եւ զէնքերը, կը կազմէին պաշտպանութեան ծրագիրներ հաւանական յարձակումներու դէմ: Այրերուն հետ էին կիները որոնք բարձր կը բռնէին աշխատողներուն կորովը: Ասոնց մէջ էր այն ատեն նշանաւոր վարձած Պապայէկ Մաման, որ զինուած

սուրով եւ դարապաղ ատրճանակով, կը շրջէր խումբէ խումբ, սրտապնդելով ամէնը: Այս Պապայէկ Մաման է որ երբ վերաշինուեցաւ գիւղը եւ ժամանակուան մը համար դադրեցան սարսափները կազմակերպեց օգնութեան գործ մը Կոստանդնուպոլսոյ Ազգ. Հիւանդանոցին համար, ամէն տարի պատասպարեալներուն ուղարկելով տեղական արտադրութիւններէն ծրար մը:

Արսլանպէկցիները իրենց գիւղը վերաշինեցին նախկին գիրքին վրայ, այսինքն «վարի գիւղի» գեանին վրայ:

Ինթանիոյ գիւղերուն եւ գիւղացիներուն բնակարանները, ուրիշ շատ տեղերու պէս, շինուած էին հակառակ ճաշակի, ողջմտութեան եւ առողջապահութեան բոլոր կանոններուն: Նեղ փողոցներ, արեւէ եւ օդէ զուրկ, իրարու փակած, դէմ դէմի եկած տուններ, սրոնց տանիքները իրարու կը կպին գրեթէ, իբր հետեւանք չըլլամայի գրութեան, այսինքն դէպի փողոցը հակած գերաններու վրայ կառուցուած սենեակներու, սրոնք հետզհետէ կը յառաջանան դէպի փողոցին կեդրոնը քանի յարկերը կը բարձրանան: Այս ամէնը «տեղ շահելու համար», պիտի ըսէ գիւղացին, երբ ոչինչ աւելի շատ էր քան տեղը:

Արսլանպէկցիները արդար հպարտութեամբ կ'ըսէին թէ իրենց գիւղը շինած են «յատակագծի վրայ»: Այստեղ տունները կառուցած էին իրարմէ հեռու, մեծ մասամբ պարտէզներով շրջապատուած: Գիւղին մէջտեղէն կը հոսէր փոքր առու մը:

Գլխաւոր շուկան ունէր երկու կարգի վրայ խանութներ եւ սրճարաններ: Պէտքովը թաղը եւ Սերեփենց թաղը կը գրաւէին գիւղին արեւելեան եւ ա-

(*) Յիշուած Պ. Ն. Ստեփանեանէ:

բեւմտեան մասերը: Շէքսպէթ եւ Կալեր հրապարակ-
ները կը գտնուէին գիւղին հարաւակողմը ուր կը
վերջանար Տէրաէրենց թաղը: Հասանին Վրայ հրա-
պարակը, որ գիւղին մուտքը կը կազմէր, կը շրջա-
պատուէր Ալեքսան Զորպաճիի, Պալթայեան տունե-
րով, որոնք մաս կը կազմէին գիւղին ծանօթ ընտա-
նիքներու խումբին, որուն մէջ պէտք է յիշել նաեւ
Տէր - Կարապետեանները, Տէր - Ստեփանեանները
թովմասեանները, Սերոբեանները, եւն.:

Գիւղին արեւմտեան կողմը կը գտնուէր ընդար-
ձակ գերեզմանատունը: «Գեռ մանուկ էինք (*),
կը պատմէ Մուշեղ Սերոբեան, երբ գիւղացին որո-
շեց ցանկապատել գերեզմանատունը, լեռնէն կըտ-
րուած եւ տաշուած ձողերով: Այդ բարերաստիկ
պարտականութեան կատարումին կը նախապահէր
Իզմիտի Առաջնորդ Ստեփաննոս վարդապետ (յե-
տոյ Եպիսկոպոս), որ իբր գործաւոր ալ աշխատե-
ցաւ՝ տալուի եւ գունճայի նուագարանի ձայնե-
րով խրախուսուած»:

1894ի աղէտին յաջորդող վերաշինութենէն ետք
զուտ հաշարեակ Արսլանպէկ գիւղին կը մնար ապ-
բիլ քսան տարուան շրջան մը: Այդ կարճատեւ մի-
ջոյր, որուն վախճանը պիտի ըլլար վերջնական
կործանումը, ժամանակակիցներուն կ'երեւէր յու-
սալից հեռանկարներով: Վերջին հրկէհը գուժող
թղթակից մը կը գրէր Արեւելքի մէջ (**), պատմե-
լով Արսլանպէկի յառաջգիմութիւնը. «Քիչ մը եւս
բարեգարգուելով Իզմիտի գեղեցկագոյն գիւղը պի-
տի դառնար»: Իսկ Մ. Գ. Գասապեան կ'ըսէր

(*) Պէտք է հասկնալ 1880ի շուրջ:

(**) Արեւելք, 5 - 17 Օգոստոս 1894:

1912ին. «Գիւղը... շրջականերու կեդրոն ըլլալու
ամէն յարմարութիւն ունի» (*):

Այդ ժամանակաշրջանին Արսլանպէկ գտաւ իր
վերջնական գիմագիծը, իր շրջապատով, իր բարձե-
րով, իր սովորութիւններով, աւանդութիւններով
եւ հաւատալիքներով, իր բարբառով, իր աշխա-
տանքներով եւ զուարճութիւններով, զորս պահած
եւ մշակած էր իբր ժառանգ եւ արգասիք իր երեք
հարիւր տարուան պատմութեան:

(*) Հայերը Նիկովիդիոյ Գաւառին մէջ:

ՈՒԽՏԱՏԵՂԻՆԵՐԸ ԵՒ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ

Արսլանպէկ շինուած էր գեղեցիկ եւ ճոխ բնութեան մը ծոցին մէջ: Թխաստաններ, պողատու խիտ ծառերու պարտէզներ կը շրջապատէին գիւղը: Զինջ եւ մշատահոս ակեր բազմաթիւ էին:

Գիւղացիներուն համար լեռներուն մէջ այցելութեան վայրեր էին Միոյլուջը, Պալլը Ղալէն, Դանիէլ Պապուն ձորը, Ղուշլուխին ձորը, Պաղ Զուրը, Քարդակին աղբիւրը: Գիւղէն գէպի հիւսիս կէս ժամուան հեռաւորութեամբ կը տարածուի ընդարձակ դաշտ մը ուր կը մշակուէր ցորեն եւ կը բուսնէր առատ խոտ: Այնտեղ էին Քթանին ձորը եւ Թամօլու փոսը ուր յետոյ, առաջին համաշխարհային պատերազմէն ետք, մնացորդ Հայերը մղեցին վերջին կռիւները: Կը պատմեն թէ Թամօլու փոսը Յունաստանի անկախութեան պատերազմի միջոցին ծառայած է իրր թաքստոց, ուր Հելլէն մարտիկները կուգային օգնութիւն ստանալու մօտակայ յունական Գարա-Թէփէ գիւղին բնակիչներէն:

Գիւղին արեւմտեան կողմն էր Թոմասենց Ձորը որ անուանի էր: Լեռներէն իջնող ջուրերը հոսանք մը կազմէին անոր խորքին մէջ որ երբեմն կը յորդէր հեղեղային անձրեւներու ատեն, պատճառ դառնալով արկածներու: Անձրեւներու եղանակին պակաս չէին ըլլար անոր մէջ խեղդուողները, մա-

նաւանդ երբ անցորդները ծանօթ չէին տեղին: Ձորին վրայ էր Ջազայցըին աղբիւրը ուր կար հսկայական քար մը որուն տակ մայրերը «կը գտնէին» իրենց նորածինները, ինչպէս կը պատմէին իրենց անչափահաս զաւակներուն:

Արեւելեան կողմն էր Լազարենց Ձորը որ կ'եղերէր Ձէփնի թրքական գիւղը տանող ճամբան: Այստեղ կը հոսէր լեւնարնակ Լազերու ձորերէն իջնող ջուրը որ իր կարգին անձրեւներու եզանակին կը յորդեցնէր ձորին հոսանքը, երբեմն իրեն հետ քշելով լազ գիւղացիներու դիակներ: Փոքր բնակութիւն մը կար այս ձորին արեւելակողմը որ էր Թէճիր Կապէ Տայիին (Թէճիր Կարապետ Տայի) թաղամասը, «Թէճիրենց գիւղը» անուանով: Գիւղին աւջեւը, գէպի արեւմուտք կը գտնուէր Գարաշալըլըք անուամբ բնդարձակ մացառուտը:

Հակառակ համեմատաբար նոր գաղութ մը ըլլալուն, Արսլանպէկ հարուստ էր ուխտատեղիներով, հրաշագործ աղբիւրներով, սուրբ քարերով, քարայրներով:

Սէլս Տէտէ.— Ասոնց մէջ ամենէն նշանաւորն էր Սէլս Տէտէն կամ Թումաս Առաքեալի ուխտատեղին, գիւղէն շուրջ երկուք ու կէս ժամ հեռու, ծառախիտ լեռան մը վրայ: Գիւղին մէջ մեծ եղելութիւն մըն էր Սէլս Տէտէյի ուխտագնացութիւնը որ ամէն տարի տեղի կ'ունենար Ձատիկէն ետք, երբ բնութիւնը կ'արթնար եւ շրջապատի հարուստ բուսականութիւնը կը սկսէր ծաղկիլ: Նախորդ օրուրէն գործի կը սկսէին: Նախաձեռնարկ խումբերը տեղւոյն վրայ կը գիշերէին պատրաստութիւն տեսնելու համար: Միայն ուխտի օրերուն չէ որ ժողովուրդը կը գիմէր սրբավայր, այլեւ երաշտութեան տարիներուն: Տասնեակ մը կովեր եւ հորթեր կը

մորթուէին: Հսկայական կաթսաներու մէջ եկամ պուլուրի փիլաւը կը ճաշակէին ուխտաւորները ինչպէս եւ անցնող Յոյները եւ Թուրքերը:

Սրբավայրը քարերու մէջ բացուած լայն խոռոչ մըն էր ուր գետեղուած էր պատարագի բացութեայ սեղան մը: Տեսակ մը բացօթեայ մատուռ ուր կը պատարագէր քահանան: Քարայրին ճակատը կար տափարակ սեւ քար մը որ քաշողական զօրութիւն մը ունէր, կ'ըսէին: Երբ ուխտաւոր մը անկեղծ հաւատքով դրամ մը կը դնէր այդ քարին վրայ, զրամը կը մնար փակած եւ քահանան միայն իրաւունք ունէր գայն վերցնելու, իր մոմի եւ խոռնկի ծախքերուն համար: Բիւրակն ազգազբաղական հանդէսին մէջ աշխատակից մը, Թագուհի Ռ. Գապասագալեան, կը գրէ .

«Նոյն գիւղին (Արսլանպէկ) վերի կողմը լեռան մը մէկ խորշը կը գտնուի «Թումաս առաքեալ» անուն քարայր մը, այս եւ ուրիշ շատ մը սուրբերու անուանակոչութեան շարժառիթը ամէնուրեք մթին կը մնան մեզի, միայն ատենով ջերմեռանդներու սրբատեղի մըն է եղեր, հիմակ իսկ գիւղացիք ստատորինակ կարծիքն ունին որ, եթէ այդ քարայրին պատերուն վրայ ստակ մը փակցուի, անմիջապէս կը փակչի ու չիյնար»: (*)

Մատուռին մօտերը կը գտնուէին քարաշէն սուներու աւերակներ, կը պատմէ Մ. Սերոբեան իր յուշերուն մէջ (**), որ կ'աւելցնէ թէ աւերի հին ժամանակ բնակչութիւն կար հաւանաբար այնտեղ, «կամ ո՛ր վրտէ, թերեւ հին Արսլանպէկը հոն շինուած էր, երբ գաղթականները, Ղարարաղէն ու

(*) Բիւրակն, Կ. Պոլիս, 1899, էջ 585:

(**) Հայրենիք Անսագիր, 1958, Հոկտեմբեր:

Ղզլարէն փախտաւան, ուզած էին ապաստանիլ այլ սաղարթախիտ անտառին մէջ, զերծ վտանգէ եւ հետապնդումներէ: Տեսնուած կարկանդակներուն եւ աւերակներուն քարերը հեռուէն բերուած էին, քանի որ քարահանք կը պակսէր տեղւոյն մէջ»:

Ամէն տեղեկութիւն կը պակսի այս ուխտատեղիին ծագման ինչպէս անոր «Թոմաս առաքեալի քարայր» անուանումին պատճառներուն մասին: Աւանդութիւն մը կ'ուզէ զայն կապել «մաճառ իշխան»ին պատմութեան հետ:

Երբ մեծ-եպարքոս Գարա Մուսթաֆա փաշա սախպուեցաւ վերցնել Վիէննայի պաշարումը, հունգարացի իշխան էմրիք Թէքէլի, որ Աւստրիոյ զէմ կը կուէր թրքական բանակին կողքին, ուղեց շարունակել պատերազմը օժանդակելով նոր մեծ եպարքոսին: Իր յաջորդական ձախողութիւնները պատճառ եղան որ Մէհմէտ Գ. զինքը բերել տայ Կոստանդնուպոլիս եւ յետոյ աքսորէ Իզմիրթ, ուր մեռաւ 1705ին եւ թաղուեցաւ Հայոց գերեզմանատունը: Իշխանին, իշխանուհիին եւ իրենց որդւոյն աճիւնները 1904ին վերադարձուեցան Հունգարիոյ, աւստրուհունգարական կառավարութեան զիմումին վրայ:

Վերոյիշեալ աւանդութեան համաձայն հունգարացի իշխանը իր մահէն ետք Թովմաս Առաքեալի անունով կը յայտնուի Արսլանպէկցի քահանայ Տէր Մարտիրոսի, երբ այս վերջինը, ղեռ երիտասարդ աշխարհական, անտառ գացած էր փայտ բերելու: Իշխանը կը տեղեկացնէ թէ Սէխ Տէտէյի մատուռը ինքն է որ շինած է երբ իր ողջութեանը կ'առանձնանար անտառին մէջ, եւ ապագայ քահանային կը յանձնարարէ այնտեղ ուխտ կատարել ամէն տարի:

Մաճառ իշխանը Օվաճրզի մօտ հոգեր գնած եւ

սաղարակ շինել տուած էր: Նոյն աւանդութեան մաս կը կազմէ այն պատմութեամբ թէ իշխանը առաւօտ մը ձիով իր կալուածներէն Իզմիրթ գացած միջոցին ձին կը սայլաքի եւ ձիաւորը փոսի մը մէջ կը գլորի «տափակ քարերուն» մօտ: Այլ վայրը, ուր իշխանը մատուռ մը շինել տուած էր, կոչուեցաւ «Մաճառին ձիուն կլլածը»: Թոմաս առաքեալի քարայրը կամ բուն անունով Սէխ Տէտէ, որ «Շահգասէ»ի ազաւազում մը համարողներ կան իշխանական շինութեան պատճառով, եւ որ Արսլանպէկէն բաւական հեռու կը գանուէր, կոխներու պտտմառ եղած է մօտակայ յունական Գարա-Թէվէ գիւղին բնակիչներուն հետ, որոնք կ'ուզէին իւրացնել զայն եւ զատական վճիռով մնացած է Արսլանպէկցիներուն:

Այս պատմութեան հէքեաթային հանգամանքը յայտնի է: Բայց ան ցոյց կուտայ թէ Արսլանպէկցիներուն մօտ, ինչպէս Բիւթանիոյ մէջ ընդհանրապէս, վառ մնացած էր հունգարացի տարագիրին արկածալից կեանքին յիշատակը:

Այսպէս.— Գիւղէն կէս ժամուան հեռաւորութեամբ, զէպի հարաւ-արեւմուտք, ձորակի մը կողքին կը բխէր վճիռ աղբիւր մը, զոր կը հովանաւորէին տասնեակ մը հսկայական ծառեր: Վայրի վարդենիներ կը շրջապատէին ծառերուն բունները: Վայրը որ կը կոչուէր Այսպէս՝ ուխտատեղի մըն էր, հաւանաբար շարունակելով յունական սովորութիւն մը: Անոր կը զիմէին մանաւանդ ամուլ կիները: Ամէն տարի Աւետման տօնին օրը ուխտաւորները, Հայերու հեռ Յոյներ եւ Թուրքեր, կ'երթային խմելու աղբիւրին ջուրը, կը մորթուէին աջազաններ, կիները իրենց զգեստներէն կտորներ, նորահաս աղջիկները մագի փնջիկներ կը կախէին ծառերուն ճիւղերէն:

Ս. Խաչ Աղբիւրը.— Արարանպէկի հարաւորեւելեան կողմը կը գտնուէր Ս. Խաչ Աղբիւրը ուր ուխտի կ'երթային աղջիկ գաւակ ծնանելու ցանկացող կիները, Վարդապետի Կիրակի օրը: Պատարագին աւարտումէն ետք, մտներով ու խոնկով ուխտաւորները կը դիմէին Ս. Խաչ աղբիւրին, այնտեղ եւս իրենց հագուստներէն կտորներ կապելով շուրջի ծառերու ճիւղերուն:

Սուրբ Տիրուհին.— Այսպէս կը կոչուէր հրաշագործ քար մը որուն խորտակումը կը պատմէ Թագուհի Ռ. Գապասադայեան Բիւրակնի մէջ. «Նիկոմիդիոյ գաւառին մէջ Արարանպէկ գիւղը բաւական ուշադրութիւնս շարժած էր փոքրիկ հետազոտութիւն մը բրած ժամանակս, ժողովուրդը գիտէ թէ ո՞ւր է սուրբ Տիրուհին՝ թէպէտ կրնամ բնել թէ միայն անունը մնացած է, ասիկա քար մըն է եղեր ընդարձակ մակերեսով՝ որն որ դեռ քանի մը տարի առաջ բարեպաշտներու սրբավայր մըն էր: 40 տարի առաջ Մաղաքիա անունով եպիսկոպոսի մը առաջնորդութեամբ (*) ճամբու շինութեան համար այդ քարը հանդիսաւորապէս կը խորտակեն. խիստ կրօնասէր գեղջկուհի մը՝ որուն սիրտը հաւատքի առատութեամբ կը բարխէր, կանխաւ կտոր մը քար փրցուցած էր այն սուրբ Տիրուհիէն ու իր պարտէզին մէկ անկիւնը գետեղած էր մեծ խնամքով, ու ամէն շաբաթ իրիկուն կ'երթար խոնկ կը ծխէր ու աղօթքներ կը մրմնջէր: Բայց հէզ կնկան իղձերը սրբապղծուեր էին, վասնզի Մաղաքիա ե-

(*) Հաւանաբար Ստեփաննոս արք. Մաղաքեան, Ատափաղարցի, որ Արմաշի վանահայր էր 1855-1865 եւ պատրիարքական տեղապահ եղաւ 1861-63ին: Թ. Ռ. Գապասադայեանի ցոյց տուած ժամանակը կը համապատասխանէ Մաղաքեանի Արմաշի մէջ պաշտօնավարութեան:

պիսկոպոս, գիւղացի մեծերու ամբաստանութեանը վրայ՝ կ'ինը կը կանչէ ու «կոտապաշտ, քարապաշտ» մակղերններով խեղճ կնոջ լեղին կը փրցնէ» (*):

Ուխտատեղիները չափահասներու համար զրօտավայրեր էին ուր գուարթ խումբեր դաշտային կերուխումներ կը սարքէին: Երխտասարգութիւնը կը հաւաքուէր խաղավայրերուն մէջ որոնք բազմաթիւ էին: Գերեզմանատան ընդարձակ հրապարակին վրայ տեղի կ'ունենար ըմբշամարտութիւն, նուազի ընկերակցութեամբ: Նուազը շատ յաճախ կը խրախուսէր եւ կը գուարթացնէր գիւղացիներուն աշխատանքը եւ արարողութիւնները: Երխասարգներուն ուրիշ խաղավայրերն էին Երպաթ, Կալեր, Հասանիմ վրայ հրապարակները, Պէյօլլու թաղին ճեմավայրը, ուր կը խաղային զնդակ, չեփիկ-չոմախ, աչք-կապուկ, «Էրկան-էշ», եւայլն:

Գեղեցիկ եղանակին դաշտագնացութիւններ տեղի կ'ունենային ծառախիտ պարտէզներուն մէջ եւ վճիռ ջուրերուն մօտ: Պտոյտի նշանաւոր վայրերն էին Բէտտանէյիմ Աղբիւրը, Զըրնապը, Օղիկենց Փոսը կամ Աղբիւրը, Թօփ ծառերը, ուր ամբողջ օրը կ'անցնէր բազմադան ուտելիքներով ծածկուած սփոռցներու շուրջ:


Զատիւուն երեք օրերը եկեղեցիէն ետք աղաք եւ աղջիկներ կը հաւաքուէին ծառերով զարդարուն գերեզմանատան մէջ ուր տեղի կ'ունենային պարեր եւ երգեր, նշանածները իրար կրնային նշմարել, հեռուէն, փեսացուները բարեկամներու միջոցով իրենց հարսնջուներուն կ'ընծայէին նուէրներ, որոնք կ'ըլլային այնտեղ ծախուող շաքարեղէններ կամ չոր պտուղներ:

(*) Բիւրակն, նոյն տեղ:

Որսորդները պակաս չէին: Մօտակայ լեռներու անտառներուն մէջ կ'որսային նապաստակ, վայրի խող, եղջերու: Ձմեռը, երբ ձիւնի խաւը կ'ըլլար բարձր եւ կակուղ, որսորդները իրենց սաքերուն կը կապէին շրջանակաձեւ հետեր զորս գիւղացին կը կոչէր խասնախ, եւ որոնք թոյլ կուտային քայլել սանց մխրճուելու ձիւնին մէջ: Թէեւ Նիկոմիդիոյ մէջ կլիման շատ խիստ չէ, բայց Կէօք-Տաղի կողերուն վրայ ձմեռը ջերմաչափը երբեմն կ'իջնէ գէրոյէն վար 8-10 աստիճան: Արարանդէկի տանիքներուն վրայ ձիւնը կը բարձրանար թանձր խաւերով եւ գիւղացին թիերով գայն կը թափէր վար, անանցանելի դարձնելով փողոցները: Տուններուն ցուխքներէն երբեմն սառը կը կախուէր սուրբու նման, սպառնալով անցորդներուն:

«Կը յիշեմ դեռ մօրս հայրը... կը պատմէ Մ. Սերոբեան, ամէն ձմրան, երբ լեռներուն վրայ ձիւնը զիգուած կ'ըլլար, շաբաթ մը կը թողուր աունը եւ հրացանը ուսին, միս մինակը, կուրծքը բաց՝ լեռ կը բարձրանար՝ եղջերուի իր սիրական որսորդութիւնը ընելու համար: Այդ ամբողջ շաբթուան ընթացքին գիշերները կը պատկէր բացօթեայ, ձիւնին վրայ, երբ ցրտութեան աստիճանը կ'իջնէր 10-15 աստիճան գէրոյէն վար: Քանի մը հատ եղջերու սպաննելէ եւ անոնց փորերը մաքրելէ վերջ, ան կը վերադառնար գիւղ եւ իր զաւակները ձիերով կը զրկէր լեռ՝ իր որսացած եղջերուները գիւղ փոխադրելու համար: (*)

(*) Հայրենիք Ամսագիր, 1958, Սեպտեմբեր:



Արարանդէկի եկեղեցապատկան որձարանին խնամակալաբերը: Սաքի վրայ՝ ձախէն.

Հեքում Մազմանեան, Մինաս Անանիկեան, Արսէն Թորոսեան, Մինաս Չափչեան, Նշան Վելիբեան, Նստած՝ ձախէն. Թումաս Թումանեան, (հայր Պ. Գրիգոր Թումանեանի), Յարութիւն Կրկոտեան, Վազար Խորոզեան, Պօղոս Գալստօղլոսեան:

ԱՐՍԼԱՆՊԷԿՑԻՆԵՐԸ

Իր բնավայրին մէջ Արսլանպէկցին ուշագրաւ էր իր Փիղիքական տիպարով: Բարձրահասակ, թուխ եւ փայլուն աչքերով, կարմիր այտերով, ուժի եւ առողջութեան տպաւորութիւն կը գործէր այցելուներուն վրայ: Փիւղին աշխարհագրական դիրքը ապահովաբար մեծ դեր ունեցած է բնակիչներուն Փիղիքական բարեմասնութիւններուն վրայ, ինչ որ ընդհանուր չէր Նիկոմիդիոյ գաւառին մէջ:

Անցեալին, ջերմը տարածուած էր գաւառին մէջ: 1889ին կառավարութիւնը ձեռնարկեց չորցնելու Իգմիթի շրջակայքի ճահիճները: Սաքարիայի եւ Սապանճա լիճին յորդումները կը կազմէին ճահիճներ որոնք ջերմի կեդրոններ դարձուցած էին Իգմիթը եւ Ատափազարը, որոնց բնակիչները, դեղնած եւ ընկճուած, վատառողջ կեանք մը քարշ կուտային: Հիւանդութիւններու ուրիշ պատճառ մըն էին ազբիւրները, որոնց ջուրերը կը հոսէին դէպի դիւղերը բաց առուններով: Վերջին շրջանին հազիւ քանի մը գիւղեր կրցան ունենալ մետաղեայ ջրատար խողովակներ: 1909–1911ին Պարսիկայ, Օվաճըզ, Հայոց գիւղ, Ֆէրիդլի եւայլն, հարիւրաւոր ազաք զո՛հ տուին սփարլաքիներն: 1865ին քոլերան աւերներ գործեց գաւառին մէջ, ուր զոհեր

տուն մանաւանդ Օւլաճըզ եւ Տէօնկէլ, բայց Արս-
լանպէկ եւ Պարաիզակ զերծ մնացին աղէտէն (*):

Արսլանպէկ, դաշտային եւ լեռնային համայն-
նապատները մը գլուխը, իր բարձր գիրքով, մո-
տակայ լեռնաշղթայով եւ մանաւանդ շրջապատի
խիտ անտառներով, կը վայելէր առողջ կլիմայ մը:
Լեռը եւ անտառը որոնք մեծ մասամբ կ'ապահովէին
Արսլանպէկցիին սպորուտը, անոր կը պարտազրէին
չարքաչ կեանք մը: Գիւղին մէջ աչքառու էր մեծ
թիւը յստաջացած տարիքով ծերունիներու որոնք
կը շարունակէին աշխատիլ երիտասարդներու պէս:

Արսլանպէկցիին զուարթ էր, համարձակախօս եւ
սրամիտ: Աւելի քան ուրիշ տեղ, նուազը, ուրա-
խութիւնները, հաճոյքի պահերը կարեւոր բաժին
ունէին անոր կեանքին մէջ: Հիւրասէր՝ միշտ մօտ
էր կերուխումի եւ բազմամարդ սեղաններու: Մի-
նաս Գասապեան հաշուած է որ իր ժամանակ (1910ի
չուրջ) Արսլանպէկ կը սպասէր տարեկան «25,000
քիլօ» օղի, հազար ոսկի արժէքով, «1,000 օխտ»
գինի, 200 ոսկի արժէքով, եւ 3,000 շիշ գարեջուր
60 ոսկի արժէքով: Գինին եւ օղին Արսլանպէկցիին
մասամբ կը պատրաստէր իր խաղողով:

Յատկանշական էր Արսլանպէկցիներուն տա-
րազը: Պէտք է երեւակայել զայն, համաձայն արը-
ուած նկարագրութիւններուն, գլուխը վաթթուած
էէֆիլայով, այսինքն գունաւոր եւ բանուած մե-
տաքսեայ թաշկինակով որուն կը զարնուի Ֆէսին
ծոպը, հագած ֆամէտան, այսինքն մութ կապոյտ
կտաւով բաճկոնը մինչեւ մէջքը ամուր կոճկուած,
թեւերը սեղմ, կուրծքը եւ թեղանիքները ոսկեթելե-
րով բանուած, փամփշտակայլը քաշուած ուսէն

(*) Յոյս, պաշտօնաթերթ Արմաշի, Սեպտ. 1865:

մինչեւ մէջքը, որ սեղմուած է քարապլուսով, այ-
սինքն մետաքսեայ գունաւոր դօտիով, զփղայ, այ-
սինքն ճերմակ կտաւէ շալվարով որ բնի-հանրապէս
տունը գործուած է եւ շատ մաքուր պէտք է ըլլայ,
որունքները պահպանուած չամուրլըխով զոր հար-
սընցու աղջիկները կը գործեն եւ սաքին եէմէնի կօ-
շիկ, որ այժի կաշիով շինուած է, ներբանը առանց
կարի, երեսները միացած կաշիէ կապերով: Ուսին
ունի չիֆթէն, հրացանը, մէջքէն կախուած են
զամպիրը, կեռ գանակ, եւ ֆէօթօլուն, այսինքն
բերը:

Կիները, իրենց գունաւոր լաշակներով, ծոծրա-
կին վրայ իջնող հիւսուած մազի ծոպերով նուազ
բարդ եւ պճնուած տարազ ունէին:

Արսլանպէկցիին պատուախնդիր է, մեծապէս
ուշադիր իր պղտիկ ծննդավայրին համբաւին: Ըն-
տանեկան կեանքի եւ վարքի մասին ունի աններող
եւ անգիջող կանոններ, որոնցմէ զազափար անգամ
չունի թէ կարելի է շեղիլ:

Բազմաթիւ էին կիներ, աւելի քան հազար վեր-
ջին տարիներուն, որոնք Իզմիթի գաւառէն կ'երթա-
յին ծառայութիւն ստանձնելու Պոլսոյ մէջ: Կարելի
էր անոնց մէջ գանել Արսլանպէկցի կիներ:

Ազգասէր եւ եկեղեցասէր, «հայ-քրիստոնեայ»
Արսլանպէկցիին ջերմօրէն կապուած էր իր եկեղե-
ցիին, որ իր գիւղին միակ իշխանութիւնն էր: Այ-
սուհանդերձ, Մ. Սերոբեանի կարծիքով, իր եկե-
ղեցատիրութիւնը չէր նշանակեր կրօնական խոր
հաւատք. «կրօնական տեսակէտով, Արսլանպէկցիին
սովորութեամբ միայն հաւատացեալ մըն էր: Իր
կրօնական համոզումը մակերեսային էր, եւ ի յայտ

կույտը գլխավորապես մկրտութեան, հարսնիքի եւ յուզարկաւորութեան պահերուն» կ'ըսէ ան: (*)

Սակայն, այդ մտկերեսային համոզումը պատճառ մը չէր որ Արսլանյակցին թոյլատու ըլլար իր գիւղին մէջ կաթողիկէ եւ բողոքական եկեղեցիներու հաստատման: Կրօնական անհանգուրժողութիւնը Արսլանյակի մէջ աւելի զօրաւոր եղած է քան Նիկոմիդիոյ միւս վայրերուն մէջ: Տարագրութեան ատեն Արսլանյակի մէջ կային միայն մէկ բողոքական եւ մէկ շարաթապահ ընտանիք: «Շարաթապահ Սիրականը» վերագարձաւ տարագրութենէն եւ իր բազմանգամ ընտանիքին հետ հաստատուեցաւ Յունաստան ուր կը գրադէր աւելաւորով: «1915ի տարագրութեան օրերուն հազիւ 2-3 բողոքական եւ մէկ շարաթապահ Արսլանյակցիներ կային գիւղին մէջ», կ'ըսէ գարձեալ Մ. Սերոբեան որ կը պատմէ:

«Կը յիշեմ, 1881ի ատենները Տէլի Պետրոս անուն մէկը միտիոնար մը հրաւիրած էր իր տունը՝ բողոքականութիւն ընդունելով: Գիւղացիք երբ տեսան թէ միտիոնարը խօսք հասկնալ չուզեր, կերակի օր մը, ձմեռ եղանակին, Տէլի Պետրոսի ժողովարանը կ'երթան կը հաւաքուին: Հոն ամէն մէկ ներկայի Աւետարան եւ երգարան կը արուի: Հազիւ պաշտամունքը սկսած, կը պատուեն գիւղերը, մէկ մասը կը նետեն կրակարանը, իսկ միւս մասը պատուհաններէն դուրս եւ կը պահանջեն միտիոնարէն որ նոյն օրն իսկ մեկնի գիւղէն» (**): Ամէն ինչ կը վերջանայ ժողովարանին քանդումով:

Արսլանյակի գուտ հայաբնակ էր: Ոչ միայն չկար ոչ-հայ բնակչութիւն, այլեւ չկար կառավար-

րական պաշտօնէութիւն եւ ոստիկանութիւն, մինչեւ վերջին տարիները: Աւելի քան 3000 հօգինոց բնակչութիւնը կը կառավարուէր իր թաղական խորհուրդով: Գոյութիւն ունէր միայն Հանրային Պարտուց Վարչութեան ներկայացուցիչ մը, Օրթագիւղցի (Կէյվէյի շրջան) Ազարիկ Էֆէնտին, որ պաշտօն ունէր գանձելու խոզակի տուրքը: Հաղուապէս գատական վէճերը կը լուծուէին Իգմիթի մէջ:

Բայց Արսլանյակցին ունէր բուն խոսնուածք, իր լաւ եւ գէշ արդիւնքներով: Կոուազան էր եւ անխնայ հայհոյող: «Արսլանյակցի այրերն ու կիները շափազանց կոուազան էին եւ համեմուած հայհոյանքով կը սկսէր կռիւր» (*): Եւ կը պատահէր որ գանակի հարուածը չուտով կը արուէր նախատինքի մը եւ անարգանքի մը համար: Նման պարագայի մը հետեւանքով է որ Իգմիթի կառավարչութիւնը ի վերջոյ ոստիկանական պահականոց մը հաստատուեց Արսլանյակի մէջ 1910ին:

Մինչեւ այն ատեն Արսլանյակցիները կը կատարէին իրենց սեփական ոստիկանութիւնը: Առիթները չէին պակսեր ի գործ գնելու իրենց գերը: Եթէ շրջակայ թրքական գիւղերու հետ համակեցութեան սրտը կլլիմայ մը ստեղծուած էր, կային մահմետական ուրիշ նորեկ տարրեր որոնք հակում ունէին հայկական գիւղը շահատակութեան ասպարէզ նկատելու:

Իգմիթի սանձաքը ունէր 300,000էն քիչ մը ա-

(*) Նօթագրութիւն Արսլանյակցի Պ. Մահակ Կակարեանի (Աղեբանգրիտ):

«Ռամիկ ժողովուրդին մեծ մասը սոսկայի հայհոյիչ է», կը գրէ թղթակից մը, Գ. Գոպլեան, Մանգումէի մէջ (1883, ք. 517):

(*) Հայրենիք Ամսագիր, Սեպտ. 1958:

(**) Նոյն տեղ:

ւելի բնակչութիւն, որուն 55-60,000ը հայ եւ 120 հազարը թուրք: Այս վերջինները այնտեղ հաստատուած էին սկսեալ օսմանեան գրաւման շրջանէն: Աւելի ետքը եկած էին 100,000 մահմետական գաղթականներ, որոնց 60,000ը չէրքէզ, մնացեալը կիւրճի, լազ, պօշնաք, չէչէն, եւայլն: 1877-78ի սուս եւթուրք պատերազմին հետեւանքով կառավարութիւնը Նիկոմիդիոյ մէջ հաստատեց մեծ թիւով գաղթական Չէրքէզներ որոնք զուրկ սպրուստի կանոնաւոր միջոցներէ, կը կարծէին իրենց դոյութիւնը ապահովել կարենալ յափշտակութեամբ եւ կոչոպուսով: Արսլանպէկի ձիերը իրենց մասնաւոր ուշագրութեան առարկան էին:

Այսպէս ծագում առաւ պաշտպանութեան հարց մը ուր Արսլանպէկցին ցոյց տուաւ քաջութեան, յանգճութեան, հնարամտութեան եւ կաղմակերպութեան սպասցոյցներ: Կազմուեցան ինքնապաշտպանութեան խումբեր, երիտասարդները զինուեցան եւ սկսան զինավարժութեան: Չէրքէզներուն արգիլուեցաւ մուտք գործել զիւզին «սահմաններէն» ներս: Տեղի ունեցան սպաննութիւններ: Յաճախ ճամբուն վրայ կամ մացաններուն մէջ կը գտնուէր չէրքէզ գիւղացիի մը կամ պէկի մը գիւղեր: Արսլանպէկցիները տունին քանի մը զոհեր, որոնց մէջ Գրիգոր Կորկոտեան եւ Արմենակ Էգաճեան, առաջինը գործի ընկեր եւ երկրորդը ազգական Հայրապետ Սերոբեանի, որ կը ղեկավարէր ինքնապաշտպանութիւնը: Բայց, ըստ Մուշեղ Սերոբեանի, սպաննուած Չէրքէզներուն թիւը հասաւ 250ի: Կառավարութեան հետապնդումները, երբ տեղի կ'ունենային, կը մնային սպարդիւն, առ ի չգոյ՛է սպասցոյցի եւ վկայութեան: Ի տես Արսլան-

պէկցիներու անվահեր կեցուածքին, Իզմիթի զինուորական Կառավարիչ Սաատէթաօնի փաշա Արսլանպէկը կոչեց «Սանճաքին Գարատաղը», կը պատմեն Արսլանպէկցիները: Ինչ որ ալ ըլլայ, Արսլանպէկցիները միշտ պահեցին խիզախ եւ աննկուն մարդոց համբաւը:

Ի վերջոյ Չէրքէզները վհատեցան: Իրենցմէ պատուիրակութիւն մը եկաւ Արսլանպէկ ուր ճոխ սեղանի մը շուրջ կնքուեցան համաձայնութիւն եւ պայմանագրութիւն, որոնք երբեմն կը խախտուէին Չէրքէզներուն կողմէ, բայց Արսլանպէկցին միշտ կը ստանար իր հասուցումը:

Արսլանպէկի երեւելիները, անուս եւ անգրագէտ մեծ մասամբ, զիտէին սակայն իրենց ողջմտութեամբ եւ ճկուն վարուեալերպով կառավարական շրջանակներուն հետ, պաշտպանել իրենց եւ զիւզին շահերը, ձեռք բերել բարւոք կարգադրութիւններ երբ պէտք ըլլար:

Համիտեան շրջանին Նիկոմիդիոյ գաւառին մէջ, բացի ձերբակալութիւններէ եւ անհաստական սպաննութիւններէ, տեղի չունեցան կազմակերպուած ջարդեր ինչպէս Թուրքիոյ միւս մասերուն մէջ: Բայց Ազ-Հիսարի մէջ (Կէյվէյի շրջան) գործադրուեցաւ կազմակերպուած ջարդ մը, 1895 Սեպտեմբեր 27 չորեքշաբթի օր, որ զիւզին շարաթական տօնավաճառի (պաղար) օրն էր: Հայերը այնտեղ տուին 27 զոհ, որոնց մէջ երկու Արսլանպէկցի որոնք իրենց փոքր անուններովը ծանօթ են, Համադասպ եւ Հայթայ: Առաջինը մեռաւ վեց ամիս ետք իր ստացած վէրքերէն, երկրորդը սպաննեց ջարդարար մը, մեռնելէ առաջ: Ուրիշ երկու Արսլանպէկցիներ, Նազարէթ Պօյաճեան եւ Նշան Գասապեան, որոնք նոյն օրը Ազ-Հիսար կը գրտ-

նուէին, յաջողեցան փախչիլ եւ դառնալ իրենց
գիւղը:

1895-1908 շրջանին զանազան պարագաներու
մէջ սպաննուած Արսլանպէկցիներուն թիւը եղած է
բոտ Մ. Գասապեանի (*) 14: Նոյն տարիներուն ըն-
թացքին ամբողջ Նիկոմիդիոյ գաւառին մէջ սպան-
նուած են 136 հոգի:

Չալըլըքի գրաւումը.— Պետական ապօրինու-
թեանց կարգին կը մտնէ Արսլանպէկի Չալըլըքին
(մացառուտ) գրաւումը: 1878 սուսեւթուրք պա-
տերազմէն ետք պետութիւնը Նիկոմիդիոյ գաւա-
ռին մէջ, մասնաւորաբար հայ եւ յոյն գիւղերուն
շրջակայքը բնակեցուց հազարաւոր մահմետական
գաղթականներ որոնք կուգային գրաւուած հողա-
մասերէն: Նորեկներուն յատկացուեցան պետական
հողեր, ինչ որ օրինաւոր էր, բայց նաեւ գիւղերու
պատկանող հողեր, անտառ, մացառուտ, արօտա-
տեղի, որոնց սահմանները ճշգրտած էին յատուկ
Փէրմաններով եւ որոնք կը ծառայէին գիւղացիներ-
ուն պէտքերուն, ինչպէս նաեւ մշակուած գիւղա-
կան հողեր, արտ, այգի, մրգաստան, որոնք հա-
մապատասխան վաւերացութեան (սէնէտ) սե-
փականութիւնն էին գիւղերուն: Այս վերջիններուն
գրաւումը մեծ հարուած մըն էր գիւղերուն անտե-
սութեան:

Այդ շրջանին է որ ասուիի զործարանին այն
տաննուան տնօրէն Իւրֆէթ պէյի կողմէ գրաւուե-
ցաւ գիւղէն քառորդ ժամ հեռու, ասուիի զործա-
րանին մօտ գտնուող Չալըլըքը որ կը պատկանէր
Արսլանպէկի եւ կը ծառայէր իբր վաւերափայտի
անտառ: Գիւղացիները ունէին քափու, կալուա-

ծագիր, զոր դատաւարութեան ընթացքին կառա-
վարութիւնը անվաւեր յայտատարեց, առարկելով
թէ այնտեղ անտառին տարածութիւնը գնահատ-
ուած էր 500 արտավար, մինչդեռ բուն տարածու-
թիւնն էր 5000 արտավար: Օսմանեան սահմանա-
դրութենէն ետք երբ Պորհրդարանի Նախագահ Ահ-
մէտ Բիւլա այցելեց զործարանը, գիւղացիները ի-
րենց քահանաներով գիւղացի անտը, որ յանձնարա-
րեց դատ բանալ: Գիւղացիները վարանեցան ծախ-
քերուն առջեւ:

(*) Հայերը Նիկոմիդիոյ Գաւառին մէջ:

ԲԱՐՔԵՐ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կայսրութեան մէկ ծայրէն միւսը տեղափոխուած հայկական զաղթականութիւններ իրենց հետ կը տանէին սովորութիւններ, աւանդութիւններ որոնք կը մնային կամ կը ձեւափոխուէին ժամանակի ընթացքին, կամ կը մոռցուէին: Բիւթանիոյ հայութիւնը խառնուրդ մըն էր ուր կարելի էր գտնել հին Ղարապաղցին կամ Վասպուրականցին, կամ Սեպաստացին եւ կամ Կարնոյ հիւսիսակողմի Հէմշինցիները, որոնք դարձած էին Նիկոմիդիոյ «հայ Լազերը»: Հայկական հեռաւոր օրրանը երբեմն կը վերապրէր նոր բնակավայրին մէջ անսպասելիօրէն: Բաֆֆիի Կայծերուն մէջ նկարագրուած խնձորը, օրինակի համար, կը վերադրուենք Արսլանպէկի սովորութիւններուն մէջ: Այստեղ ալ, հարսնիքի հրուէրը կը կատարուէր մետաքսէ թաշկինակով մը փաթթուած խնձորով մը:

Արսլանպէկի «խօսք—կապ»ը եւ հարսնիքը պէտք է յիշեցնեն ուրիշ զանազան վայրերու սովորութիւններ: «Բանակցութիւնները» եւ համաձայնութիւնները կատարուած էին անտարակոյս կանխաւ: Բայց ահա օր մը փեսացուին կողմէ կուգային, քահանային առաջնորդութեամբ, աղջկան տունը ուր արդէն հաւաքուած էին հօրը եւ մօրը ազգականներ:

րը: Ժամ մը սարէն—ձորէն խօսելէ ետք ազջկան ազգականներէն տարէց մէկը կ'ըսէր.

— Դուք, սիրելի ազբբտանք, աս իրիկուն մեր խոստուր աղբոր տունը եկած էք, ձեր միտքին մէջ նիյէք (նպատակ) մը կայ համբ, մենք չենք հասկնար:

Քահանան կամ ուրիշ տարէց մը կը պատասխանէր.

— Տէրօջը կամքով աս իրիկուն եկած ենք ձեր տունը Էմանէթի (աւանդ) մը տէր ըլլալու, մեր աղային, Մկրին համար ձեր ազջիկը ուզելու: Ինչպէս մեր ու ձեր փափաքն է, արժանի ըլլան սուրբ պատկին: Կ'ուզենք տեսնել մեր հարսնցուն ու նշան մը կապել:

Այն ատեն միայն ազջիկը ամօթխած ներս կը մտնէր ու կը սկսէր համբուրել ամենուն ձեռքը: Նշանը կ'օրհնուէր ու զանազան ոսկեղէն նուէրներ կը կախուէին ազջկան կուրծքին: Կը սկսէին նշանուտքի պատուասիրութիւնները:

Նշանուտքը շատ յաճախ տեղի կ'ունենար առանց ենթականերուն հաւանութիւնը առնելու: Մինչեւ հարսանիք, նշանածները իրաւունք չունէին իրար տեսնելու:

Չորեքշաբթի կամ հինգշաբթի տեղի կ'ունենար հարսնցունին հինայի արարողութիւնը, իսկ շաբաթ օր կը կատարուէր փեսացունին բաղնիքի եւ ամիլու ուելու արարողութիւնը: Կիրակի օր եկեղեցիին մէջ տեղի կ'ունենար փեսային եւ կնքահօր, ինչպէս եւ հարսին հաղուսաներուն օրհնութիւնը, որմէ ետք փեսան եւ կնքահայրը կ'առաջնորդուէին «Ուրախ լեր» շարականով փեսին տունը, ուր գիշերը կը լուսնար կերուխումով:

Երկուշաբթի առաւօտ հարսնեւորները կ'երթա-

յին «հարսանէք» ի հարսին տունը ուր քահանան կը սպասէր: Այնտեղ կը կատարուէր կարճ արարողութիւն մը, ամուսնացեալները ձեռք ձեռքի կուտային քահանային օրհնութիւններով:

Բայց պսակը պէտք էր տեղի ունենար պատարագով: Փեսան եւ հարսը կ'առաջնորդուէին եկեղեցի: Պսակի արարողութենէն ետք ամուսնացեալները կը տարուէին փեսային տունը շարականներով եւ աղբային երգերով, զրեթէ միշտ նուագածութեամբ: Տան առջեւ կը մօրթուէր դառնուկ մը կամ հաւեղէն մը որուն արիւնը պէտք էր քսել հարսին կօշիկին, չարը խափանելու համար: Սովորութիւն կար նաեւ այլ պահուն իւղի մէջ հաւկիթ եփելու դրան առջեւ: Բայց հարսին եղբայրները եւ մօտիկ ազգականները դուռը փակած կ'ըլլային, զոր չէին բանար մինչեւ որ հարսնեւորները նուէր մը խոստանային զոյգ դրան պահապաններուն: Հարսին ներս մտած միջոցին կ'ըլլային մաղթանքներ եւ կը պարպուէին զինիլ բաժակներ, գլխուն կը թափուէին ցօրեն, բրինձ եւ մանր դրամներ, տան վրայ հրաւիրելու համար պերէֆէք, բարգաւաճութիւն:

Սովորութիւն կար կիրակի օր պարել տալու հարսը, իր տունը կամ բացօթեայ ըստ եզանակի, եւ այլ միջոցին հարսին կը նուիրէին ոսկի եւ զարդեղէններ:

Հարսանեկան թափօրին փեսուն տունը հասնելէն ետք տեղի կ'ունենար «ձեռք-պագ» ի արարողութիւնը, ուր հարսը կը համբուրէր բոլոր ներկաներուն ձեռքը, սկսելով ամենէն տարեցէն, մինչ ափսէի մը մէջ կ'իյնային հարսին տրուած դրամական նուէրները:

Կար նաեւ հարսին մազերը հլուելու սովորութիւնը, որով կ'իյնէր կը քակէին անոր «արդար մա-

ղերը» եւ կը հիւսէին «ժեղաւոր մաղերը», երգելով մեկամաղձիկ եղանակներ: Կիները սովորութիւն ունէին դարձեալ հինայելու փեսային եւ կնքահօր ձախ ձեռքին ձեռքով:

Հարսնիքի խրախճանքը կը տեւէր մինչեւ հինգ-շաբթի: Չորեքշաբթի իրիկուն տեղի կ'ունենար վերջին եւ մեծագոյն կերուխումը կամ գինարբուքը: Նոյն գիշերը, համաձայն ուրիշ տեղեր ալ բաւական տարածուած սովորութեան մը, ամուսնացեալներուն մօտիկ ազգականներուն կը ներկայացուէր հարսին «կուսութեան ապացոյցը»:

Հինգշաբթի առաւօտ աւանդական «փաշայ»ով վերջ կը գտնէր ամէն ինչ:

Մահերու պարագային վարձկան եղբրամայրեր չկային, բայց հաւաքուած կիները ծայր կուտային ազմկալի լացուկոծի մը եւ ողբասացութեան մը, կատարելով ննջեցեալին գովքը: Նոյն լացուկոծը կը շարունակուէր մինչեւ գերեզմանատուն, որուն դրան առջեւ թաղումէն ետք մեռեալին պարագաներուն կողմէ յուղարկաւորներուն կը հրամցուէր գաւաթ մը օղի եւ կտոր մը փիտէ:

Նիկոմիդիոյ խայտարդէտ բնակչութեան մէջ Արսլանպէկի ժողովուրդը ուրոյն տեղ մը կը գրաւէր, ցցուն համրաւ մը ունէր ոչ միայն իր գուարթ եւ հաճոյասէր կենցաղով, փայլուն արտաքինով, այլեւ իր անկախ նկարագրով: Սեփականութեան մասին ինքնաշատուկ հասկացողութիւն մը ունէր: Կորովի կերպով կը պաշտպանէր իր ձիերը որոնք իր աշխատանքի կարեւոր միջոցն էին: Իսկ «ոչխարի գողութեան» պատմութիւնները որոնք շրջան կ'ընէին դրացի գիւղերուն մէջ, տեղի տուած էին գուարձալի գրուագի մը:

Անատուրէն Իգմիթի ճամբով Պոլիս տարուած

հազարաւոր ոչխարներու հօտերը կ'անցնէին Արսլանպէկէն որուն հողերուն վրայ կանգ կ'առնէին ասածելու եւ հանգչելու համար: Գիւղէն անցնելէ ետք Նիկոմիդիոյ դաշտին մէջ նեղ կամուրջ մը թոյլ կուտար որ հովիւները համբեկ իրենց ոչխարները, որոնցմէ տասնեակ մը պակասած կ'ըլլար: Արգարեւ, գիւղին փողոցներէն անցնելու պահուն պատահած կ'ըլլար որ ոչխարները մտնէին բաց դուռներէն ներս եւ անհետ կորսուէին: Հովիւներուն գանգատին վրայ Իգմիթի կառավարիչը պատուիրած էր առաջնորդ սրբազանին յորդորելու Արսլանպէկցիները աւելի ուշադրութեամբ վարուելու անցնող անհատուած հօտերուն հետ: Այդ է որ առիթ տուած է Յովակիմեան արք.ին խօսելու քարոզ մը Արսլանպէկի եկեղեցիին մէջ, զոր յետոյ կրկնած է ուրիշ գիւղերու մէջ ալ: Բնաբան առնելով կորուսեալ ոչխարին առակը, սրբազանը ըսած է. «Լաւ որ հովիւը իր կորուսեալ ոչխարը փնտռելու գացած ատեն մնացեալ իննիսուներինը ոչխարները չէ ձգած Արսլանպէկի հողերուն վրայ, որովհետեւ վերագարձին ոչ մէկը պիտի գտնէր»:

Երգեր. — Թագուհի Ռ. Գաղասագալեան, որ ազգազրական ուսումնասիրութիւններ հրատարակած է Սմբատ Դաւիթեանի Բիւրակներն մէջ, կը գրէ թէ, ի մէջ այլոց, «հաւաքած նիւթերս են սահեակեալները»:

«Ժողովրդական բանահիւսութիւններ, հարսանեկան երգեր, ազօթքներ, սիրերգներ, առակներ, սուածներ: Նաեւ ժողովրդական, գրական երգեր որոնց հեղինակները հին կամ անծանօթ են: Առաջինները աշխարհ սրտատուչ են եւ աշխարհ բնական են որ մարդս համակ կը յուզեն արուեստագէտ բանաստեղծի սիրուն գրուածքի մը պէս: Այս կարգէն

են Արարանդէկի պարզուկ սիրերգներն ու Պարտի-
զակի հիանալի հարսանեկան երգերը»։ (*)

Գժրախտաբար յօգուածագիրը նոյն գրութեան
մէջ չէ հրատարակած երգերը որոնց կ'ակնարկէ:
Մ. Գասապեան կը յիշէ ուրիշներու կարգին Արա-
րանդէկի երեք երգեր՝ Նիկամիդիոյ գաւառին նուիր-
ուած իր ուսումնասիրութեան մէջ: Յաջորդ էջե-
րուն մէջ կ'արտագրենք զանոնք, իրենց վերնագիր-
ներով:

(*) Բիւրակն, 1899, էջ 361: Կ. Պոլիս:

Գ Ո Վ Ք Ե Ր Գ

Եկո՛ւ, մ'երթար գաւակս մեզ մի լացըներ
Հէչ չես խնդացուցեր, հէչ մի լացըներ
Մեր աղէկ օրը սեւով մ'անցուներ
Վա՛խ գաւակըս:

Ես իմ գաւակը հագար նագերով պահեցի,
Պահեցի պահեցի դարտակ մնացի
Սիրուն գաւակիս կարօտ մնացի
Վա՛խ գաւակըս:

Քէշէմ ան ձորերուն քարերն ըլլայի,
Ես իմ գաւակիս մարիկ չըլլայի,
Վա՛խ...

Զաւակիս լաթերը տունը կախ մնաց
Ինչ մուրատ ունէր փոքիկը մնաց
Վա՛խ...

Զելլեմ փէնիբէն դարվար չը նայիմ,
Զաւակս կուգայ ըսելով համբան չը նայիմ
Վա՛խ...

Ահա եկաւ ելաւ Զատկին օրերը
Զաւակ ունեցողը կ'ելլայ կայերը
Զունեցողը մտնայ ներսի տները,
Վա՛խ...

ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Ելի՛ վեր գաւակս գերեզմանին դուռը բաց,
Սիրուն մայրիկդ կու գայ բոպիկ գլխաբաց,
Վա՛րս հավրում:

Գերեզմանին օրքան վարդ մըն է բացուեր,
Տունին մէջէն սիրուն գաւակս է պակսեր
Վա՛րս...

Վարդն է բացուեր վարդեվառ կիրակին,
Զաւակս չի հասաւ սիրտին մուրատին,
Վա՛րս օդուլ:

Վարդին հոտն անուշ է, վախտին կը բացուի,
Մարդը սուտ է եղեր, կու գայ ու կ'անցնի
Վա՛րս...

Մի՛ փշեր գալէմ հոպ, չերերայ տալը,
Կարմիր վարդն է բացուեր, չի կորի տալը,
Զաւակս մատղաշ է չը մեռնի պայ մը:

Գերեզմանս փոքեցին, պօյըս չափեցին,
Ծոցերէս, ուկերէս շաբար քափեցին,
Սիրուն մայրիկս անով խաբեցին
Վա՛րս օդուլ:

Ի՛նչ կէննէնուկ հարեր մտան հողերը
Որուն հարը կու լար, որուն մարիկը,
Ի՛նչ խեղնու՛յ կու լան սիրուն հարերը,
Վա՛րս հարս:

Եա՛ր, հա՛ր, եկո՛ւ, հար տէրտէրուս նար ըրէ,
Գու դրած խոցերուդ դուն մէհլամ ըրէ,
Վա՛րս հարս:

Հ Ա Ր Ս Ն Ե Ր Գ

(Արտանայէկը մէջ Պարտիզակցի
սերունդներէ քաղուած)

Ֆիտան մը ունիմ կանանչ է,
Ոչ աղջիկ է, ոչ մանչ է,
Մենք երկուքս իրար առնենք
Սա դիմանալու բան չէ:

Կաքը զայմախին համար,
Աղջիկը տղուն համար,
Մարերն աղջիկ կը բերեն,
Օտարենց տղուն համար:

Ընկուզին ծառն էլլայի,
Պլպուլի պէս խօսէի,
Առջի հարէս վագ գայի
Սրտիս սիրածն առնէի:

Արտէն սա գիւղը մտնաս
Իմ պառկած օտան գտնաս,
Ինծմէ ուրիշ հար սիրես,
Կէննուկ հողերը մտնաս:

Մեր շա...ին հինգեր է,
Աղջիկ պօյդ երկնցեր է,
Պօյիդ վրայ նայելով
Սէր ու սէվտաս վերցեր է:

Մեր տունը երկու դաք է,
Ներքի վրայ քաւան է,
Տղան ժմներ հար կ'ուզէ
Մարը իրեն հաւան է:

Ամալույսը կուգ ունի,
Բոլորը տերես չունի,
Մեր երկուքին առածը,
Սա գիւղը մէկը չունի:

Մեր օտան քիւյլու խալի
Սրտիս սիրածը առի,
Բարես տարէ՛ք մայրիկիս
Իրեն չուգածը առի:

*Հրաշեայ Աճառեան կը յիշէ քառեակ մը, թուր-
քերէն լեզուով, իր Գննութիւն Արալանբէգի Բար-
բառին գրքոյկին մէջ:*

Արալանպէկ իւշափլարը
Սըքը պաղլար փիւշաղը.
Շաֆա մաֆա տիյնամագ,
Չէքէր վիւրիւր պիւշաղը, *հւայլն.*

*(Արսլանպէկի կարիճը
Գօտին ամուր կը կապէ.
Կատակ մատակ չգիտէ,
Կը քաշէ գանակը կը գարնէ):*

*Պարթև Ատեփանեան յիշողութեամբ կուտայ
քանի մը հատուածներ.*

Առտուն ծագած արելը սարերէն կ'ելլայ
Նարիս բարեւները փոստայէն կ'ելլայ:

Ի՞նչ փորձանք էր գլխուս բերիք
Վախնամ մէկ նար մը չըլլար
Հիմակ ուրիշ որո՞ւ երթամ
Ասանկ գէշ ցաւ մը չըլլար:

Քեզ կ'առնիմ կ'առնիմ ըսելով
Դուն ալ գիս կը խաբէիր
Աղէկ գիս խաբելուդ տեղ
Դանակով մեռցնէիր:

Աղջիկութիւն խաթունութիւն
Հարսնութիւն դալայըխութիւն:

Եկան, եկան ձիաններով եարերը
Գարուն բացուաւ Արալանպէգի սարերը
Հագար նագով աղջիկներուն սերերը
Կրակ առաւ ան եարերուն սըրտերը,
Պաշտօններով դաման մէջքին իկիթներ
Ղուրպան ըլլան Արալանպէկի աղջիկներ,
Հագարներու մէջէն ես եար գատեցի
Գարնան նոր վարդի պէս ես քեզ սիրեցի:

Արսլանպէկի հրդեհէն ետք յօրինուած երգ մը.

Արալանպէկ վառեցաւ տուն մը չմնաց,
Նշանուած աղջիկներ կարգելու մնաց,
Աման Աստուած աման մեզի մեղքըցիր
Մեր եարերուն կրակը շուտով մարեցուր
Վարդին վրայ պիւպիւրը արցունք կը թափէ
Աղջիկներուն սիրտին վրայ կրակ կը վառէ
Օնախնուն կրակը մարուած մնացին
Նշանուած աղջիկները տունը մնացին:

ԱՐՍԼԱՆՊԷԿԻ ԲԱՐԲԱՌԸ

Այս նմոյշները, գառելով լեզուէն, կը համապատասխանեն նորագոյն շրջանի մը մնացորդներուն: Արսլանպէկի բարբառը հետզհետէ ենթարկուած էր փոփոխութեան: Գպրոցը, աւելի յաճախակի յարարերութիւնները արտաքին աշխարհին հետ, տնտեսական պայմաններուն եւ միջոցներուն զարգացումը, մէկ խօսքով թրքահայութեան յարարերական վերելքը իրենց ազդեցութիւնը գրոյժած էին Արսլանպէկցիներուն կենցաղին եւ լեզուին վերայ: Հրաչեայ Աճառեան իր վերոյիշեալ գրքոյկին մէջ կը գրէ. «Ռոյոր այս կանոններէն ետք վիտել պէտք է սակայն թէ, հայ գրական լեզուն եւս սովորական խօսուն լեզուն է դարձած Արսլանբէկի մէջ. ուստի եւ շատ ձեւեր կորսնցուցած են իրենց բնիկ կերպարանքը եւ վերածուած են գրական ձեւին: Ծածկարանութիւնները՝ ինչպէս որ յետոյ պիտի տեսնուի, բոլոր գրական լեզուով են, եւ առանց սոյն ձայնական օրէնքներուն»:

Հրաչեայ Աճառեայ 1895-98 Փարիզ բնակութեան շրջանին ծանօթացած է Արսլանպէկցի Աղեքսանդր Նալպանտեանին որմէ քաղած է աեղեկութիւններ Արսլանպէկի բարբառին մասին (*): Ար-

(*) Հր. Աճառեան, Կեանքիս Յուշերից, Երևան, 1967:

դիւնքը եղած է ուսումնասիրութիւն մը, Քննութիւն Ասլանբէգի բարբառին որ հրատարակուած է Բագմավէպի մէջ, եւ յետոյ լոյս տեսած ասանձին գրքոյկով մը:

Հր. Աճառեանի յետ մահու հրատարակուած Յուշերու հատորին մէջ Գ. Գարեգինեան կը գրէ. «Հրաշեայ Աճառեանը, Փարիզում ունենալով հայ ծանօթներէ մի ստուար բազմութիւն, շփուած է նրանց հետ՝ հայ բարբառներէ վերաբերեալ նախնական տեղեկութիւններ քաղում: Այդ շրջանում է, որ նա գրում է իր «Քննութիւն Արսլանպէկի բարբառին» ուսումնասիրութիւնը, որ տպւում է 1898 թուականին «Բագմավէպ»ի ԾԶ հատորում: Այդ գործը գրելու համար հեղինակին օգնել է Ալեքսանդր Նալբանտեանը, բնիկ ասլանբէկցի: Այս գործը հանձարեղ բարբառագէտի անդրանիկ ուսումնասիրութիւնն է հայ բարբառների վերաբերեալ...»:

Աճառեան Արսլանպէկի բարբառին մէջ կը գտնէ 43 տառ, որոնց 11ը ձայնաւոր եւ 32ը բաղաձայն: Կը բացատրէ այս տառերուն մէկ մասին ինքնաշատուկ արտասանութիւնները, եւ բնագիտութիւն կրած փոփոխութիւնները գործածութեան ընթացքին: Այնուհետեւ կ'անցնի հոլովումներուն. «Ասլանբէկի բարբառը ութը հոլովում ունի, որոնք կը համապատասխանեն ճիշդ պոլսական հոլովումներուն», (եզակի եւ յոգնակի): Բայց եթէ, օրինակի համար Մարդ կ'ըլլայ մարդիւ (մարդու), ուրիշ բառեր ալ երբեմն կը հետեւին նոյն ձևին, ինչպէս տանձիւ (տանձի), ցանցիւ (ճանձի): Այսպէս, բոլոր խօսքի մասերը, թուական եւ ստացական անվանները, ղերանունները, բայերը «որոնց լծորդութիւնն ու խոնարհումը համաձայն է պոլսականին», բայց ի-

րենց փոփոխութիւններով, զարտուղութիւններով կը ներկայացուին, բազմաթիւ օրինակներով, եւ կու տան բաւական ամբողջական գաղափար մը այն լեզուին մասին որ եղած է Արսլանպէկի բարբառը:

Բայց աւելի գործնական գաղափար մը կու տայ բարբառային օրինակ մը, Լագէարիւն գէօղիւթիւնը (Լագերուն գողութիւնը), զոր Հ. Աճառեան կը կցէ իր քերականութեան եւ որ կը պատմէ խումբ մը Արսլանպէկցիներու արշաւը երթալ գտնելու համար Յովակիմ ամուճային այգիէն գողցուած խաչողները: Ստորեւ երկու հատուած այդ կենդանի պատկերէն.

ձամփան խօրաթեպէան (խօսելով) իպն իքան (երթալու ժամանակ), Միւսթափա աղան կը տեսնան. էօր կիւ մէօտանան նրա (երբ որ կը մօտենան), Միւնանը Մանիկ ախպօրը կ'ըսէա.

— Ծօի'ը Մանիկի'ը ախպարի'ը. ատի'ը մարդի'ը մաղի'ը ծակի'ը էի'ը, խօսքի'ը փօխի'ը: (*)

Միւսթափա աղային բարեվը կիւտան կ'ասնին:

.

— Հա, ձան մը կիւքրա անկնիս. վէր դիէան ըլլալը պէյիւ (յայտնի) չէա. ձանէարը կիւ խօշըր-

(*) Ծածկարանութեան եզանակ մը. կը կազմուի իւրաքանչիւր բառի ծայրն աւելցնելով իլի մասնիկը (Հ. Աճառեան): Ուրեմն այս ծածկարանութիւնը կը նշանակէ. Ծօ՛ Մանուկ ախպար, առ մարդը ծակ մաղ է, խօսքը փոխէ:

Ծածկարանութիւնը, որուն զիւղացիները «թոշախլու» կամ «ճնճղիկերէն» անունը կու տային, Արսլանպէկցիներուն կը թոյլատրէր իրարու հետ խօսակցիլ ասանց հասկնալի ըլլալու ոչ-Արսլանպէկցիէ մը: Կային ծածկարանական ուրիշ ձևեր ալ նի, խի, պի, եւն. մասնիկներու յաւելումով:

նան. Լագին տղա(ֆ)ն ին. ձեօրին դիւան էա (ձորին կողմէն է) :

— Կէցի նէյիմ, ախպար :

Անկանը հէօղին կը դնէա :

— Ախպար քէօվէրնիս էկէար ին, տահա ի՞՞ կայնէաֆ ինֆ. չիւֆտէա(ն) ձէաոֆ աո :

Ձիւֆտէանէարը կ'առնին, ձեօրէն ի վար կ'իշ-
նան. Լագերն իւր կը տէսնան նրա, Կարրպէտը թէ-
թիկը (հրացանի բլթակ) կը քաշէա :

— Թէպիմիս օլա (անձնատուր եղէք) :

— Քիմէ'օ քիմէ'օ (որո՞ւ, որո՞ւ) :

— Էպէնպէկի տիր (Ասլանրէզցի է) :

— Տէսնա տէօսք սիւնիւզ (չըսէ՞ք բարեկամ էք) :

— Իշի պիլիբ (գործը դիտէ) :

Եւ խաղողները եւ կ'առնուին :

Մուշեղ Աերօրեան, այն ատեն Մուշեղ վարդապետ, խափը քննադատած է Հ. Աճառեանի ուսումնասիրութիւնը ընդարձակ յօդուածով մը զոր հրատարակած է Բիւրակնի մէջ (*): Յօդուածը կը սկսի այսպէս.

«Պ. Աճառեանի ուսումնասիրութիւնը չարժեք այն բերանալիբ շնորհաւորութիւնները որով ոմանք անոր երեւումը ողջունեցին: Ահա թէ ինչու.

Ա.— Պ. Աճառեան «Արսլանրէզի բարբառին» ձայնական կազմութեան եւ քերականական օրէնքներու մասին իր քննութեանը մէջ կը ներկայացընէ այնպիսի զրուցական տարազներ՝ որոնք օտար են Արսլանրէզի, եւ որոնք կարծես ձեւացած են Մարաշի եւ Ուլնիոյ գաւառաբարբառներուն վրայ :

Բ.— Ունի բառերու ազուազում մը, եւ արտա-

սանական անձանաչ ձեւ մը՝ որոնք չեն կարող ուղղակի համեմատել Արսլանրէզի թաւ եւ կոշտ հընչման հետ :

Գ.— Իր Արսլանրէզի բարբառին հոլովական մասին մէջ ցոյց տուած ինչ ինչ հոլովները՝ երբեք չեն լսուած Արսլանրէզցի բերնին մէջ, որչափ կըցած ենք ուշադիր ըլլալ Պոլսական անհազորդ պատաներու ասացուածքին ուր միայն պէտի վնասներ Արսլանրէզի բուն գաւառաբարբառը» :

Յօդուածագիրը մանրամասնօրէն կանգ կ'առնէ Աճառեանի յայտնած կարծիքներուն, տուած օրինակներուն վրայ, հերքելով եւ սխալներ գտնելով անոնց մէջ: Աճառեան իրեն համար ունէր իր գիտական պաշարը, թէեւ այն ատեն տակաւին երիտասարդ, եւ գիտունի գիտողութիւնը: Աերօրեան ունէր բնական եւ ուղղակի ծանօթութիւնը զոր իրեն կու տար իր Արսլանրէզցի հանգամանքը: Որքա՞ն ճիշդ են իր քննադատութիւնները: Չունհատութիւն չունինք իրաւարարի գեր կատարելու :

(*) Բիւրակն, թիւ 39, 1900, Կ. Պոլիս :

ԱՐՍԼԱՆՊԷԿԻ ԲՆԱԿԶՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս ծանօթ է, Թուրքիոյ Հայոց թիւը շատ տեղեր ենթադրութիւններու վրայ հիմնուած է: Այս անունին արժանի վիճակագրութիւններ քիչ կատարուած են: Շատ անգամ կ'արձանագրուէին միայն մկրտեալները, այսինքն նոր քրիստոնեաները: Տեղ տեղ սակայն տրուած են թիւեր որոնց կարելի է վստահիլ: Ասոնցմէ էր Նիկոմիդիոյ թեմը, շնորհիւ հաւանարար առաջնորդին ջանքերուն: Այնտեղ ալ սակայն պատահած են թերացումներ կազմելու համար ծնունդներու, մահերու, պսակներու վիճակագրութիւնը, որուն պահանջը չէր զգացուեր քանի որ, ինչպէս յայտարարած է Ատափազարի քահանան, «Աստուած վերը կը գրէ»: Արսլանպէկ պատասխանած է իրեն ուղղուած հարցումներուն եւ իր բնակչութեան մասին ունինք որոշ տուեալներ:

18րդ դարու կիսուն Արսլանպէկ 130 տուն կը հաշուէր ըստ Մինաս Գասապեանի որ իր աղբիւրը չի յայտնէր: Գրեթէ դար մը ետք, 1847ին, Էօթէն Պոռէ 150 տուն կը հաշուէ Արսլանպէկի մէջ, ինչ որ մօտաւորապէս հազար հոգիի կրնայ համապատասխանել: Ըստ վանեցի Պօղոս վրդ. Նաթանեանի, բնդհանրապէս վստահելի եւ իրագեկ հեղինակ, 1871ին Արսլանպէկ «300 տունէ բաղկացեալ գիւղ

մի է եւ բնակիչք սա հասարակ 1,500ի կը հասնին» (*): Նիկոմիդիոյ Հայոց առաջնորդարանին վիճակագրութեան համաձայն 1885-86 թուականներուն Արսլանպէկ ունէր 446 տուն եւ 2099 բնակիչ, որոնցմէ 1071ը արական եւ 1028ը իգական սեռին պատկանող: Վիթալ Քիւրնէի հաշուով, 1890ական թուականներուն զիւրը ունէր 2800 բնակիչ: 1898ին Հրաչեայ Աճառեան Արսլանպէկի կու տայ 4,000 բնակիչ, ինչ որ չափազանցուած կը թուի: Առաջնորդարանին 1902ի վիճակագրութիւնը Արսլանպէկի համար կ'արձանագրէ 548 տուն եւ 2930 բնակիչ, որոնցմէ 1496ը արական սեռին եւ 1434ը իգական սեռին պատկանող: Իսկ համաձայն Մինաս Գասապեանի կատարած մարդահամարին, 1909-1910 թուականներուն Արսլանպէկ ունէր 570 տուն, 655 ընտանիք եւ 3218 բնակիչ, 1627 արական եւ 1591ը իգական սեռէ: Տրուած ըլլալով Մ. Գասապեանի ընդհանրապէս խղճամիտ քննութիւնը, կը խորհինք թէ իր առած թիւերը 1909-10ի համար, ամենէն մօտիկ թուականը 1915ին, պէտք է տան Արսլանպէկի բնակչութեան թուական պատկերը տարագրութեան օրերուն: Միւս կողմէ, այդ թիւերը չեն հակասեր Առաջնորդարանին 1902ի վիճակագրութեան թիւերուն:

Այդ քննութիւնը կը պարունակէ ուրիշ վիճակագրական աուեսաներ Նիկոմիդիոյ սանձաքին զիւղերուն մէկ մասին վերաբերմամբ, որոնց մէջ նաեւ Արսլանպէկը, որոնք կը հաղորդեն հեռաքրքրական անդէկութիւններ ամուսնութիւններու, ծնունդներու եւ մահներու թիւին եւ տոկոսին մասին, 1899էն

(*) Առաջին Տեղեկագրութիւն վիճակին Նիկոմիդիոյ, Պօզոս վրդ. Նաթանեան, 1871, Կ. Պոլիս:

1909 տասնամէկ տարիներու ընթացքին: Այսպէս, Արսլանպէկի մէջ նոյն ժամանակամիջոցին անգլիանեցած ամուսնութիւնները, ծնունդները եւ մահերը ներկայացնեն հետեւեալ պատկերը:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1899	1900	1901	1902	1903	1904
30	29	22	25	30	42
1905	1906	1907	1908	1909	
31	21	39	24	33	326

ԾՆՈՒՆԳՆԵՐ

54	57	48	74	49	55	67
57	64	58	45	51	62	48
111	121	106	119	100	117	115
49	46	55	57	611		
60	61	50	60	616		
109	107	105	117			1227

Մ Ա Հ Ե Ր

29	20	22	24	28	26
16	28	20	21	20	19
45	48	42	45	48	45
27	43	36	32	29	316
24	14	28	24	38	252
51	57	64	56	67	

Ծնունդներու եւ մահերու ցուցակին մէջ առաջին թիւերը կը ներկայացնեն արական սեռը, երկրորդները իգականը:

Ինչպէս կը տեսնուի, գրեթէ ամէն տեղ գիտուածին նման, մահերու եւ ազջիւններու ծնունդները իրար կը հաւասարակշռեն: Իսկ այլերու մահացութիւնը աւելի մեծ թիւ մը կը ներկայացնէ քան կրննորունը: Այդ թիւերը աւելի բարձր են 1905էն սկսեալ: Առանց ուղելու մասնել բոնապրօսիկ ենթադրութիւններու մէջ, կարելի է մտածել թէ առաջին հրդեհէն ետք գիւղին տեղափոխութիւնը աւելի ցած մակարդակի մը վրայ եւ մանաւանդ երկու հըրդեհներուն յառաջ բերած բարոյական եւ նիւթական թշուառութիւնը քսան տարի ետք սկսած են ազդել բնակչութեան Փիլիքականին վրայ, ինչպէս կը կարծէ նաեւ զիտած ըլլալ Մ. Սերոբեան. իսկ յօդուածագիր մը, զոր արդէն յիշեցինք, կը գրէ. «Կարելի չէ տեսնել ի նոսա գէժք մը՝ որ պահած լինի իւր վրայ նախկին առօրջ եւ վտաւուսն կարմրութեան հետքը. գունատ ու դեղնած պատկերներ եկած են յաջորդել կայտառ սերունդին. քանի մը ժամեր բաւական եղած են սերնդեան մը յեղաշրջութեան համար» (*):

Բայց զիտելի է որ ծնունդներուն թիւը աւելի է քան մահերու թիւին կրկնապատիկը: Բնակչութեան աճումին տեսակէտէն, Արսլանպէկ կուգայ առաջին գիրքերու վրայ, զբաւելով երրորդ կամ չորրորդ տեղը գաւառին մէջ: Բաղդաստելով գաւառին երեք գլխաւոր կեդրոններուն, Իզմիթի, Ատափագարի եւ Պարտիզակի հետ, կը տեսնենք որ Արսլանպէկ իր 3300 բնակիչներով 11 տարուան մէջ ու-

նեցած է 326 ամուսնութիւն, իսկ Իզմիթ, օրինակի համար, իր աւելի քան 4000 հայ բնակիչներուն մէջ ունեցած է 305 ամուսնութիւն: Առոնց նուազագոյն եւ առաւելագոյն թիւերը Իզմիթի մէջ եղած են 19 եւ 39, Արսլանպէկի մէջ այս թիւերն են 21 եւ 42: Մօտաւորապէս նման պատկեր մը կուտայ Ատափագարի եւ Պարտիզակի հետ բաղդաստելիւնը:

Արսլանպէկի այս բնակչութեան մէջ կային, 900ական թուականներուն, 2 համը այլեր, 3 պահասամիտ, որոնց 2ը այլը, 2 իսլամացած այլեր եւ ձուլուած իտալացի մը: Այս վերջինը, Լորենցօ, զեղազօրծ էր ասուիի գործարանին եւ Արսլանպէկի մէջ ամուսնացած, տէր գարձած էր հայացած զաւակներու: Գաւառին մէջ իսլամացումները բռնութեան արդիւնք չէին, այլ հետեւանք ամուսնական հարցերու կամ ծանր յանցանքներու պարագային պատիժէ խուսափելու միջոց (*):

Արսլանպէկի մէջ գոյութիւն չունէին բժիշկ եւ զեղարան: 1912ին միայն Սահակ Կախարեան, զեղազօրծի վկայական ստանալէ ետք եկաւ ու փոքր զեղարան մը բացաւ իր ծննդավայր Արսլանպէկի մէջ: Ծանր հիւանդութիւններու պարագային բժիշկը բերուէր Իզմիթէն կամ Պարտիզակէն, ուրկէ ճամբորդութիւնը կը աւելէր երեք ժամ եւ կ'արժէր 1-2 ոսկի այցեզին: Գիւղական շրջաններու մէջ բժշկական խնամքը կը տրուէր աւանդական միջոցներով: Այսուհանդերձ Նիկոմիդիոյ գաւառը բաղդատարար ամենէն շատ կը հաշուէր բժիշկներ եւ զեղազօրծներ: Բժիշկներուն թիւը կը հասնէր 36ի, որոնց 19ը հայ, եւ զեղազօրծներունը 31, որոնց 21ը հայ:

(*) Արեւելի, p. 3177-79, 1894, Կ. Պոլիս:

(*) Մ. Գասապեան, Հայերը Նիկոմիդիոյ Գաւառին մէջ:

Ինչպէս ամէն տեղ գիւղական վայրերու եւ յաճախ դաւաճական քաղաքներու մէջ, Արսլանպէկըյիները գիրար կը կոչէին գործածելով մականուններէ աւելի մակդիրներ, երբեմն զաւելտական եւ հեզնական, երբեմն միջազգայի մը ակնարկող կամ ցոյց տուող ենթակային արհեստք: Տանք անոնցմէ ինչ որ մնացած է Արսլանպէկըյիներու յիշուութեան մէջ, իբր բարբառային նմոյշ եւ նշխար շատ անգամ զուարթ եւ համեղ կոչումներուն որոնց տակ ապրած եւ գործած է անհետացած բնակչութիւն մը: Այսպէս, Շրխըբցնոյին Սահփանը, Նէխիթէրին Ակորիկը, Քէշիտին Վարդերեսը, Սառննձիինին Արթինը, Ղուուտանին Մինանը(*), Թէճիբենց Կապէն, Իբիզըրիին Ահարոնը, Պոչուկենց Առաքելը, Մածունին Վահրամը, Օֆենց Օղսէնը, Չըթըփըսին Վարդերեսը, Աստուածխարոյին Արտաշը, Տէլի Քէյրոսին Յովսէփը, Ծընկըլըկ մամուն Սէրգիսը, Ղարբպենց Պօղոսը, եւն.:

Մինչեւ անցեալ դարու կէսը Արսլանպէկըյիին կեանքը կը բաւարարուէր լեբան եւ անտառին արտադրութեամբ: Այրերը իրենց փայտը եւ ածուխը կը տանէին ծախելու Իզմիթ: Կիները, նոյնքան շարքաշ որքան այրերը, տունը ընտանեկան ազգակեաններու առջեւ կը գործէին իրենց ջրմանը եւ մանածը: Մաքրասէր եւ հիւրասէր Արսլանպէկըյի կիներ միշտ պատրաստ անկողին մը ունէր զբացի գիւղէն այցելող հիւրին համար: Կիները եւս կ'երթային անտառ հաւաքելու սունկ, շագանակ, թմբի որ կ'արտածուէր, եւ ամէն տեսակ պտուղներ ու բանջարեղէններ: Մանուսանց չքաւորներուն աննդատութեան մէջ մեծ տեղ կը գրուէր շագանակը, որ մեծ քանակութեամբ կը շորցուէր իբր պահեստ ձմրան:

Արսլանպէկի շրջակայքը քիչ յարմարութիւն կը ներկայացնէր ցորենի մշակութեան համար, բայց գրեթէ ամէն տուն ունէր իր այգին: Շատ տուներ ունէին նաեւ իրենց ձին կամ ձիերը որոնց պէտք ունէր ամխաղարծ եւ փայտազործ գիւղացին իր փոխադրութիւններուն համար:

Այս նախնական կենցաղը հեազհետէ փոխուեցաւ: Մանր առեւտուրը տարածուեցաւ գիւղին մէջ: Տնային կառուարծութիւնը պակսեցաւ, որովհետեւ եւրոպական ճարտարարուեստը կը հայթայթէր

(*) Ըստ Աճառեանի Մինան կը համարադասարանէ Միհրանի: Մուշեղ Սերոբեանի համար սեղմումն է Մնացական-Մինասի:

աւելի աժան սպրանք: Գիւղացին աւելի քիչ կ'երթար Իզմիթ գնումներ ընելու: Իզմիթ հեռոցհեռէ կորանցուց իր առեւտրական կեդրոնի հանդամանքը, մանաւանդ Հայտար Փաշայի (Հայտար Փաշա-Էսկի Շէհիր, Էնկիւրի) երկաթուղին շինութենէն ետք, որու բարգաւաճման նպաստելու համար ընկերութիւն փոխադրական արդելիչ սակեր նշանակած էր Անատուրէն Իզմիթ ուղարկուած ապրանքներուն համար: Գաւառին հայարնակ այլ վայրերու առեւտուրը սկսաւ դարձանալ: Պարսիզակէն ետք Արսլանպէկ եւ Օվաճըզ ցոյց կուտային իրենց աւելական առեւտուրին յառաջգիծութեան նշանները:

Արսլանպէկի մէջ բացուեցան խանութներ: Գիւղը կը դառնար առեւտրական պղտիկ կեդրոն մը մերձակայ լազ, կիւրճի, չէքքէզ, թուրք եւ յոյն բնակչութեան համար որ կուգար այնտեղ գնելու նպարեղէն, հիւսուածեղէն, կօշիկ, խոզակի սերմնցու, եւն.: Մ. Սերորեան կը նկարագրէ իր հօրը բազմատեսակ առեւտուրը որ կ'ընդգրկէր հաց, ըմպելիք, կտաւեղէն, կօշիկ, տնային առարկաներ, եւ գրամական փոխատուութիւն, յիշելով նոյն տանն Կարկարեաններու նպարտաւճառատունը, որոնց հետ պէտք է յիշել նաեւ Անդրանիկ եւ Մինաս Կրաշեաններու նպարեղէնի խանութը: Կային արհեստաւորներ, թիթեղագործ եւ ժամագործ, մանաւանդ հիւսներ եւ որմնագիրներ որոնք կը շինէին նաեւ գրացի գիւղերուն տունները:

Ջուրի հոսանքները յարմարութիւն կ'ընծայէին բանեցնելու ջրաղացներ: Արսլանպէկի սահմաններուն մէջ կը յիշուին անոնցմէ եօթը որոնց տէրերն էին Պէքէրեան եղբայրները, Վէխեան եղբայրները, Թոմասեան եղբայրները, Բիւրա Պօղո-

սը, Գէորդ Ջաքարեանը, Յովհաննէս Պալթայեանը:

Ամբողջ գաւառին մէջ ուր մշակուած էր հողին մէկ երրորդը, շուրջ 4000 քառ. քիլօմէթր, հայ բրնակչութեան 70 առ հարիւրը երկրագործ էր: Առեւտուրը եւ արհեստները կը կազմէին մնացեալին գրագումը: Արսլանպէկի համար համեմատութիւնը գրեթէ նոյնն էր, որոշ տարբերութեամբ մշակուած նիւթերու: Արսլանպէկի մէջ այգեգործութիւնը տնային բնոյթ ունէր, արմատիքը քիչ էր, 3500 քիլօցոբեն, 5000 քիլօ վարսակ եւ գարի 1910-11ին: Ածխագործութենէն եւ փայտագործութենէն ետք գըլ-խաւոր գործերն էին ծխախոտի մշակութիւնը եւ շերամարուծութիւնը: Նոյն տարին Արսլանպէկ արտադրած էր 10·000 օխտ ծխախոտ եւ 5,000 օխտ խոզակ: Անտանապահութիւնը հեռոցհեռէ ետ մնացած էր գաւառին մէջ, գիւղերուն պատկանող կամ անոնց կողմէ օգտագործուած արօտավայրերուն գրաւումով եւ նորեկ գաղթականներու յատկացումով: Վերջին տարիներուն Արսլանպէկ կը հաշուէր շուրջ 200 ձի եւ 360 կով, եզ, գոմէշ:

Շերամարուծութիւնը գաւառին գլխաւոր գործերէն մէկը դարձած էր երբ բարձր էր խոզակին գինը: Թթաստանները գրաւեցին ուրիշ մշակութիւններու տեղը: Արտագրութեան յաւելումով տնային մետաքսաշինութիւնը վերջ գտաւ եւ հաստատուեցան մանարաններ որոնց թիւը գաւառին մէջ հասաւ մինչեւ 60ի: Վերջին շրջանին 20 մանրաններ անգործութեան դատապարտուած էին: Հետեւեալ գիները կ'իյնային: Երեւան եկան շերամի յատուկ հիւանդութիւններ որոնց պէմ կարելի չէր եղած արդիւնաւոր կերպով կուրիլ, հակառակ Պրուսայի շերամարուծական վարժարանին հիմնարկու-

թեան, որուն մէջ կ'ուսանէին բազմաթիւ հայեր: Մեծաբարձործութիւնը, իբր անտեսական սղգակ, կը դառնար հետզհետէ խնդրական, մեծ մասամբ անհրաժեշտ գրամագլուխներու եւ զիտական ու ճարտարարուեստական անհրաժեշտ միջոցներու պակասին պատճառով: Վ. Քիւլինէ 1890ին Արսլան-պէկի մէջ գործող մանարաններուն թիւը ութը կը հաշուէ: Ի վերջոյ մնացած էր միայն Կ. Տէր Կարապետեանի մանարանը ուր կ'աշխատէին 160 գործաւորուհիներ եւ 8 գործաւորներ ու պաշտօնեաներ, ըստ Մ. Գասապեանի: Ասոնք վերջին տարիներու թիւեր են: Շատ աւելի առաջ, 1871ին գոյութիւն ունէր զարձեակ մէկ մանարան որ նոյնը կարելի է համարել քանի որ հիմնուած էր վերջին տիրոջ հօր, Մկրտիչ Տէր Կարապետեանի կողմէ: Պօղոս վրդ. Նաթանեան կը գրէ նոյն թուականին. «Յիշեալ գիւղին մէջ շերամի գործարան մը կայ եւ որուն մէջ յիտունէն աւելի ինքնին չափ հասեալ աղքատ օրիորդք կ'աշխատին ըստ արժանոյն: Օրականնին է երկու կամ երեք զուրուջ» (*): Կողմնակից չըլլալով կանանց աշխատանքին, Նաթանեան վարդապետ կ'աւելցնէ. «բայց խիստ ցաւալի տեսարան»:

Մ. Տէր Կարապետեան իր մանարանը բացած էր բնկերակցարար Իգմիթցի Յովհանէս Հելվաճեանի հետ որ Արսլանպէկէն դատ Գուրա-Պէլէնի, Հայ գիւղի եւ Օվաճըղի մէջ մանարաններ կը բաննցնէր իր չորս զաւակներով (**): Այս գործերը ձախողութեան մասնուեցան: Մկրտիչ Տէր Կարապետեանի որդին Կարապետ շարունակեց մանարան-

(*) Առաջին Տեղեկագրութիւն վիճակին Նիկովիդիոյ, Պօղոս վրդ. Նաթանեան, 1871 Կ. Պոլիս:

(**) Ս. Կակարեան:

նի գործը մինչեւ իր մահը 1913ին: Իր չորս զաւակներէն երեքը, չորրորդը՝ Սահակ բժշկութեան հետեւած ըլլալով, բանեցուցին մանարանը գործակցարար պոլսարնակ Վահան Էսայեանի հետ, որուն հայրը եւ հօրեղբայրը հիմնած են Կոստանդնուպոլսոյ Էսայեան վարժարանը:

Ինչպէս ուրիշ տեղեր զաւաւին մէջ, Արսլան-պէկի մանարանի գործաւորուհիներուն տարիքը կ'երթար 10էն 45 տարեկան: Օրական 10 ու կէս ժամ աշխատանքի համար կը ստանային կէսէն մինչեւ չորս զուրուջ: Գաւաւին մէջ մանարանի մը գործաւորուհիին տարեկան վաստակը կարելի էր հաշուել 8 ոսկի, տասը ամսուան աշխատանքի փոխարէն: Պաշտօնեաները, որոնք կը վարձատրուէին ամսականի հաշուով, կը ստանային 3-4 ոսկի ամսաթուշակ:

Օսմանեան սահմանադրութենէն ետք Արսլան-պէկի անտեսական կեանքին մէջ մեծ դեր վերակատարալ առուիլ պետական գործարանը որ Ապտ-իւլ Համիտի օրով երկար առեն վաղ մնացած էր: Գործարանը որ երկրին ցանցաւ ճարտարարուեստական ձեռնարկներէն մէկն էր սկսաւ աշխատիլ աւելի մեծ չափով: Ինչպէս նախորդ կայսրեր, Մէհմէտ Բէշաասուլթանը, որ յաջորդած էր Ապտիւլ Համիտի, այցելեց առուիլ գործարանը Սորհրդարանի Նախագահ Ահմէտ Բիգայի հետ: Սուլթանը 10,000 ոսկիի նուիրատուութիւն մը կատարեց շէնքին վերանորոգման եւ նոր սարքաւորումներու գնման համար: Վերաշինութենէն առաջ գործարանը արդէն սկսած էր բանիլ յաւելեալ գործաւորներով որոնց թիւը կը հասնէր 350ի, մեծ մասամբ հայեր: Ասոնցմէ 150ը Արսլանպէկի էին: Աշխատաւորներուն վաստակը ըլլալով տարեկան չուրջ 20 ոսկի, առուիլ գործա-

րանին միջոցով տարեկան 2500-3000 ոսկիի գումար մը կը մտնէր Արսլանպէկ:

1914-15 շրջանին Արսլանպէկի երկու սեռէ ճարտարարուեստական աշխատաւորներուն թիւը կ'անցնէր 300ը, տարեկան համադումար աւելի քան 4,000 ոսկիի աշխատավարձերով:

1908ի սահմանադրութենէն ետք գաւառին մէջ սկսան կազմուիլ հայկական անտեսական եւ ելմտական ընկերութիւններ, արհեստակցական եւ համագործակցական (քօօփերաթիւ) միութիւններ, խնայողական սնտուկներ եւն., որոնց նպատակն էր օգնել բանուորներուն, զիւղացիներուն, առեւտրականներուն, ստեղծել շինարարական, ճարտարարուեստական եւ առեւտրական ձեռնարկներ, պայքարել վաշխառուական դրութեան դէմ ցած տոկոսով փոխառութիւն կատարելով, հայթայթել արժանապարհ եւ սերմնցու իրենց անդամներուն, եւն.: Բաժնետիրական դրութեամբ հիմնուած այս ընկերութիւնները մուտքի տուրքերով եւ անդամավճարներով որոշուած ժամանակամիջոցի մը մէջ պիտի ստեղծէին անհրաժեշտ զբաղակալութիւնները գործազրկու համար իրենց նպատակները: Բազմաթիւ էին այս ընկերութիւնները: Յիշենք քանի մը անուններ. «Արեւելեան երկրագործական Միութիւն» եւ «Ատաղծագործաց Ընկերութիւն» Ատաղագաւրի, «Երկրագործական եւ Առեւտրական Սնտուկ» Պարտիզակի, «Շահակցական Սպառողական Միութիւն» Արմաշի, «Օսմանեան Պալք Պաղար Ընկերութիւն Երկրամիջոց», Իրմիթի մէջ:

Արսլանպէկի մէջ 1910ին հիմնուեցաւ «Օսմանեան Շահակցական Ընկերութիւն Արսլանպէկի», որուն նպատակն էր «զբաղակալութիւն մը կազմելով ձեռնարկել ճարտարարուեստական կամ առեւտրա-

կան կարեւոր գործի մը, ընկերութեան շահերուն հետ նկատի ունենալով ժողովուրդին շահերը», (Մ. Գասապեան): Ընկերութիւնը պիտի ունենար 200 բաժին, 180 բաժնեակերով: Շարաթավճարն էր մէկ զրուշ եւ մուտքի տուրքը հինգ զրուշ: Գրամագլուխին կազմութիւնը տեղի պիտի ունենար հինգ տարիէն:

Արսլանպէկ անտեսական զարգացման ճամբուն վրայ էր: Ելլելով գիւղի մը վիճակէն, Նիկոմիդիոյ գաւառին յառաջագէժ աւաններէն մէկը դառնալու սահմանուած ըլլալ կը թուէր երբ վրայ հասաւ աղէտը:

ԴՊՐՈՑԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Մինչև անցեալ դարուն առաջին քառորդին վերջը Նիկոմիդիոյ գաւառին մէջ կը թափան ինդիւր գոյութիւն չունէր: Գլորոցներու մասին եղած հարեանցի ակնարկութիւնները ցոյց կուտան հարցին վրաւած անկարեւոր տեղը: Նոյն իսկ Արմաշը կարելի չէր նկատել իբր կը թափան յարկ մը: Այնտեղ կը սորվեցնէին կարգալ գրել, սերտել հին եւ նոր կաակարանները, Նարեկը եւ Յայսմաուրքը: Ամբողջ գաւառին մէջ կարգալ գրել գիտցողները հազուագէպ էին:

Արմաշ հետզհետէ բարձրացաւ, սկսեալ Պրուսայի առաջնորդ կեսարացի Պօղոս արք. Գարազոչի պաշտօնավարութենէն, որուն յանձնուեցաւ Արմաշի առաջնորդութիւնը 1810ին: Իր անուանումէն ետք Գարազոչ միացուց Պրուսայի եւ Արմաշի երկու վիճակները, եւ նուիրուեցաւ Արմաշի վերաշինութեան ու վարդապետան մինչև իր մահը 1825ին:

Գարազոչ Արմաշի երկրորդ հիմնադիրը կը համարուի: Իր յաջորդը եւ ձեռնասունը Ստեփաննոս եպ. Զաքարեան, որուն Աղաւնի մականունը տուած էր Գարազոչ, շարունակեց իր նախորդին գործը: Զարկ տուաւ վանքին ուսումնական յառաջդիմութեան, պաշտօնի կոչեց հայկարան Մուրաա Պօյաձեան վարժապետը, եւ երբ կոչուեցաւ Կոստանդնու-

պորտոյ պատրիարքութեան, առանց լքելու իր առաջնորդական պաշտօնը վանքը ձգեց Յակոբ վրդ. Սինանեանի որ մեծ ծառայութիւններ մատոյց վանքին, եւ զպրօցներու շինութեան ու բարեկաման գործին:

Ստեփաննոս Աղաւնի պատրիարքութենէ հրաժարելէ ետք ալ (1841) իր հոգածութեան առարկայ դարձուց Արմաշը եւ շրջակայ գիւղերու գպրոցաշինութիւնը, հասցնելով մանաւանդ ուսուցիչներ որոնց ամենէն աւելի պէտք կար: Այս շրջանին ծրնունը կ'առնէ դաւառին մէջ կրթական գործին սկզբնաւորութիւնը: Հայաստան լրագրին մէջ Ատափաղարէն թղթակցութիւն մը կ'ըսէ. «Տեղուոյս գիտութեան գասատուն Արմաշու վանքին աշակերտներէն է, որով գպրատունն ալ Արմաշի մէկ բողոքողը կ'ըլլայ»: (*) : Իսկ Պարտիզակի մէջ մարդիկ «Տղայքն Արմաշ վանքին գպրատունը կրթել տուած են պատուելի տիրացու Մուրատ վարժապետին աշակերտութեան յանձնելով եւ հիմա գիւղին վարժապետն ալ անոնցմէ է»: (**):

Իօթէն Պօրէ Հայաստանի խմբագրութեան ուղղած իր նամակին մէջ կ'ըսէ. «Փափաքեցայ քանի մը գիտողութիւններս ձեզի հաղորդել, որ մտաւորական շարժումները յառաջ տանող մարդոց գովեստը ըլլալէն զատ իմ ալ դարմանքս եւ եւ սրտիս ուրախութիւնը կը յայտնեն»: Եւ կը պատմէ թէ Պրուսայի «արու մանկանց գպրատանը մէջ հինգ հարիւրէ աւելի տղայք կան, որոնց երեսուներկուքը գաղիէրէն լեզուի կը վարժուին ներհուն գասատուի մը ձեռք»: Եւ թէ «աղջիկները որ առեն մը մէկ աւա-

(*) Հայաստան, Մայիս 1847, թ. 46:

(**) Նոյն, Սեպտեմբեր 1848, թ. 13:

ղելի նախապաշարում մը կրթութեան աղէկութենէն զրկեր էր, ասոնք ալ գպրատուն մը ունին, ուրտեղ հարիւրքսանի չափ ուսանող հաշուեցի»: Իսկ Իգմիթի գպրոցին համար կ'ըսէ. «Նիկոմիդիոյ Հայոց գպրատան նոր բարեկարգութիւնը տեսնելովնիս մեզ բախտաւոր սեպեցինք: Գպրատան մաքրութիւնը եւ գեղեցկութիւնը կը ցցնէ որ այս տեղի բնակիչները ասոր յառաջընթացութեանը վրայ սիրով վառուած են: 126 տղայ կայ մէջը: Երջանիկ կը սեպեմք անոնք՝ որ պատուելի տիրացու Մուրատի պէս վարժապետ մը ձեռքերնին ինկեր է» (*):

«Նոր բարեկարգութիւն» բռնով կ'ակնարկէ գպրոցին նախկին վիճակին որ այնքան վաղուն չէր եղած հակառակ անոր որ շինուած էր տասներեօթը տարի առաջ «առատ արօք եւ յորդորանօք մեծապատիւ ճանիկ ամիրային»: 1830ին ձանիկ ամիրա Արմաշ գացած էր ուխտի, քաջալերած էր Աղաւնին իր ջանքերուն մէջ եւ կատարած էր նուիրատուութիւններ:

ձանիկ ամիրայ միակը չէր: Այդ շրջանին գաւառին գպրոցները սկսան վայելել հայ մեծատուններուն պաշտպանութիւնը: Ասուի կայսերական գործարանին հիմնարկութիւնը բարօրութեան ազգակ մը եղաւ գաւառին համար ընդհանրապէս եւ Արցախի մէջի համար մանաւորապէս:

Առաջին շրջանին գործարանին վարիչները հայեր էին որոնք իրենց իննամբին եւ հսկողութեան առարկան կը դարձնէին շրջակայքի գպրոցները: «Արքունի վառօդապետ պերճափառ Յովհաննէս ամիրայն Իգնիմիտու կողմերը շինուած արքունի գործարաններուն տեսչութեանը պարտաւոր տեսնը ա-

(*) Նոյն, Յունիս 1847, թ. 51:

պրսպրեր է եւ պէտք եղած բաները իր կողմէն անօրիններ որ Ատարազարու կցորդ չորս հալարնակ գիւղերը, որ են Դամբլիս, Ֆրնտրիսլը, Ալմալը եւ Նոր գեղ, մէկ մէկ դպրատուն շինուի, եւ մէկ մէկ վարժապետ դրուի կարգալ գրել եւ եկեղեցական երաժշտութիւն սորվեցնելու» կը գրէ Հայաստան թերթը (*):

Նոյն թերթը կը գրէ դարձեալ. «Յայտնի է որ՝ այս գործարանին վերակացութիւնը Գերապատի վառօդապետ Տատեան ամիրային յանձնուած է, եւ անոր կողմէն ալ նոյն գործարանը մնայուն վերակացու դրուած է արժանայարգ Ստեփան աղա Յովհաննէսեան Չայեանց: Ասոնց հոն գանուելով Ֆլորիդի, Դամբլիս, Ֆրնտրիսլը եւ Սապանճա դպրատուններն ի կարգ դրուեցաւ: Արմաշու գիւղին տղոցը վարժութեանը համար հաստատուած դպրատանը կարգաւորեալ օգնութիւն կ'ընեն: Իգնիմիտու դարատանը վրայ իննամբին պակաս չէ, եւ Պարչէճիկու դպրատան նորահաստատ թորգոմեան ընկերութեան կամաւոր ատուրք տուողներուն ցուցակին գլուխը այս երկու անունը կը գտնեմք. Առաքել աղա Տատեան եւ Ստեփան աղա Չայեան (**):

Թորգոմեան ընկերութիւնը զոր հիմնած էր Արմաշի Եփրեմ վարդապետը, «նորոգ հաստատուեցաւ» այցելութեամբ արքունի գործակալ Ստեփան Չայեանի, կը գրէ Հայաստանի մէջ Պարտիզակէն թղթակից մը (***) : Այս առթիւ եղան նուիրատուութիւններ, 1000 դրուչ Առաքել Տատեան, 500 դրուչ Ստեփան Չայեան, 300 դրուչ «յարգի Ալէքսան Ազա (Արսլանպէկցի)» եւլն. :

(*) Հայաստան, 2 Օգոստոս 1847, թ. 5-58:

(**) Հայաստան, 1847, թ. 13-66:

(***) Նոյն:

Ինչպէս թորգոմեան ընկերութիւնը Պարտիզակի մէջ, Լուսաւորչեան ընկերութիւնը Իգնիմիտի մէջ, Արամեան ընկերութիւնը Ատափազարի մէջ, 1849ին Սրբոց Դեոնդեանց Ընկերութիւնը հաստատուեցաւ Արսլանպէկի մէջ իբր հետեւանք պատրիարքական կարգադրութիւններուն, նպատակ ունենալով ապահովել գիւղին դպրոցին օժանդակութիւնը: Այդ տարիներուն «այլեւս ամէն ինչ ամիրաներէն եւ ունեւորներէն սպասելու հոգին մեռած էր, եւ ժողովրդական խումբեր ընկերութիւններ կազմելով եւ փոքրիկ նուէրներով ձեռնարկներ կատարելու կը վարժուէին, կը գրէ Մ. Պրմանեան (*): ձամբան ցոյց տուած էր Կ. Պոլիս ուր կը կազմուէին Գում Գափուի Ընթերցասիրաց Միութիւնը, Օրթաքէօյի Վերածնութեան Թանգարանը (Գրագարան), Մեսրոպեան հրատարակչականը, Եղրայրասիրական ընկերութիւնը, եւն. :

Պատրիարքարանը կը հետեւէր մօտիկ Նիկոմիդիոյ ուսումնական շարժումին: Հայաստան կը գրէ որ «Տ. Յակոբ (**) պատրիարքի կոնդակով եւ Յովհաննէս Ամիրայ Տատեանի հաճութեամբ Իգնիմիտի գաւառին բոլոր դպրատանց այցելու կարգուեցան Յովհաննէս Սարկաւազ Ռչտունեան եւ Յակոբ Միքրճեան», որոնց վրայ Յովհաննէս ամիրայ Տատեանի կողմէ փոխանորդարար վերատեսուչ կարգուեցաւ Ստեփան Չայեան, որ Յովհաննէս Տատեանի փեսան էր եւ Հէրէքէի կայսերական գործարանին անօրէնը եւ Արսլանպէկի ասուիի գործարանին մնայուն անօրէնը (***) : Ինչպէս այս վերջին գործարանը,

(*) Ազգապատում, հատուած 2640:

(**) Սերոբեան:

(***) Հայաստան, թ. 66, 1847:

Հէրէքէի գործարանն ալ կառուցուած էր Յովհ. Տատեանի ձեռքով:

Այս անձերը իրենց յանձնուած պաշտօնը «հաստատութեամբ կատարելու համար կարգաւ Իգնիմիտի դաւառի ամէն դպրոցներուն զսա զսա այցելութիւն ըրած ժամանակներն փառաւոր հանգիսիս քննութիւններ ալ ըրեր են»:

Այս առթիւ թերթը կը տեղեկացնէ որ վերոյիշեալ անձերուն միջոցով Նիկիմիդիոյ գիւղերուն մէջ մշակութային ընկերութիւնները կազմուեցին, ինչպէս Ս. Ղեւոնդեանց ընկերութիւնը Արարչայէկի մէջ:

Արարչայէկի դպրոցը բարերար մը եւս ունեցած էր յանձին Յովհ. Գույումճեանի. «Ֆէսի արքունական գործարաններու տեսուչ արժանապատիւ Գույումճեան Յովհաննէս Ազալն Իգնիմիտի Ֆէսի գործարանը այս անգամ այցելութեան գացած ժամանակը նոյն գործարանի վերակեցու արդոյ Ալիքասան Ազալին ձեռքը Արարչայէկի գիւղի ազգային դպրոցին հազար դուրուշ նուէր չնորհեք է: Յիշեալ գիւղի բնակիչները լրագրիս միջոցաւ իրենց սրտին խորին շնորհակալութիւնը կը յայտնեն նուիրամասոյց Ազալին» (*):

Գրեթէ ոչինչ գիտենք դպրոցին առաջին տարիներուն ուսումնական վիճակին եւ ուսուցիչներուն մասին: Արեւելի թղթակիցը 1894ին կը գրէ թէ Հաճիգիւղացի տիրացու Յովհաննէս Քէչիչեան 1830էն սկսեալ «վարժապետութեան պաշտօն կը ստանձնէ Արարչայէկ եւ կը շարունակէ մինչեւ 1842, երբ Ս. Սարգսի կիւրակէն քահանայ կը ձեւնադրուի Պօլոս եպիսկոպոսի թագապետանէն, որ թէպէտ Առաջ-

(*) Հայաստան, 1849, p. 50-155:

նորդ Պրուսայի՝ Նիկիմիդիա եկած էր Ստեփաննոս Աղաւնի Սրբազանին հետ, երբ սա յիւր վիճակ առաջնորդութեան կը դառնար» (*):

Բայց գիտենք թէ Արարչայէկի Մամիկոնեան վարժարանը սկսու գործել 1847էն ետք, երբ կառուցուեցաւ եկեղեցին: Մինչեւ այն ատեն դասաւանդութիւններ տեղի կ'ունենային որեւէ ձեւով: Հայաստան կը գրէ. (**). «Ապամալի գիւղին (Իգնիմիտու) հիմնական ազգապետը (չորպաճին) Պ. Ալէքսան, գիւղը շատ աղէկ կառավարելով իր հայրենակիցները հանգիստ վիճակի մէջ կը պահէ: Գիւղացիք ասոր օրըս աւելի երջանկութեան հասնելու համար քիչ մըն ալ ուսումնական կրթութեան կարօտ են: Մինչեւ հիմա դպրատուն չունէին, գիւղին աղայքը քահանային տունը կը ժողվելէին կարգալ կը սորվէին: Կոստանդնուպոլսէն բարեսէր ազնուական մը Պ. Ալէքսանեանի բարեսէր ջանիցը ձեռնտու ըլլալ ուզելով՝ այնտեղ դպրատուն մը շինելու համար տասն հազար դուրուշ խրկեք է: Ասանկ մարդոց ժամանակն է որ գիտութիւնը կրնայ ծաղկել...» (***):

Արարչայէկի դպրոցին մասին քիչ մը աւելի տեղեկութիւն կրնանք քաղել սկսեալ 1860էն: Նոյն թղթակիցը կը շարունակէ. «Սակայն դպրոցական կարեւոր բարեկարգութիւնն եղած է 1860ին, որովհետեւ այդ տարւոյ Մայիս 24ին ուսուցչական մարմ-

(*) Արեւելի, 1894, p. 3177-79:

(**) Հայաստան, Կ. Պոլիս, 10 Մայիս 1847. Թ. 46:

(***) Մինչեւ վերջին տարիները Սպանիոյ մէջ կ'ապրէր ձերանագրող Գրիգոր Ալէքսանեան, առաջնորդ, որ թոնորդին էր Ալէքսան Չորպաճի: Այս վերջինը տիրացած էր բնագործակ մշակիլի հոգեբու եւ անտասներու կայսերական Ֆէրմանով, ինչպէս ուրիշ Չորպաճիներ:

նոյ կողմանէ շինուած դպրոցական ցուցակ մը ցոյց կուտայ թէ աշակերտաց թիւն հասած է 206ի եւ աշակերտուհեացն 78ի եւ այդ շրջանին մէջ աւանդուած են Տրամարանութիւն, Տոհմային եւ Սրբազան Պատմութիւն, Քերականութիւն, Քրիստոնէական վարդապետութիւն, Բարոյական դաստիարակութիւն եւ Թուարանութիւն: Այս միջոցին դպրոցն իւր գազաթնակէտին հասած է, մանաւանդ յաւուրս ինչիկ Մաքաթ Թորոսեանի եւ Արմենակ Հայկունիի:»

Նոյն 1860 թուականին Մեղու տանօրեայ հանդէսը կը հրատարակէր «Տօքթ. Բարունակ պէյի Տեղեկագիրը» որ կը ներկայացնէ «Ի նիկոմիդիա եւ անոր շրջակաները գտնուած հայ դպրոցները»: Արսւնայէկի մասին կը գրէ.

«Ասլան Պէյ.— Մէկ դպրոց մանչերու. 180 աշակերտ, 2 դասատու: Ուսմունք.— Ընթերցանութիւն, քերականութիւն, Ազգային պատմութիւն, Թուարանութիւն, քրիստոնէական:

Եկամուտ 14,000 զրշ. տեղացիներէն, նոյնչափ ծախք:

Մէկ դպրոց աղջկանց. 80 աշակերտ. 1 դասատու: Ուսմունք.— Ընթերցանութիւն, գիր, քրիստոնէական: Եկամուտ. 4000 զրշ. բարերարէ մը. այնչափ ծախք: Այս դպրոցը գոցուելու վրայ է:»

1860 տարուոյ վերաբերեալ այս տեղեկութիւնները իրարու կը համապատասխանեն ընդհանուր գիծերուն մէջ: Անոնցմէ կը հետեւի որ այդ թուականին դպրոցը արդէն երկտեղ էր: Վերջին տղերուն մէջ ակնարկուած բարերարը պէտք է եղած ըլլայ արքունի ճարտարապետ Կարապետ Պալեան,

(*) Մեղու, Կ. Պոլիս 1860, թ. 97, Մայիս, էջ 98:

եւ անոր մահէն ետք միայն, (1866ին), աղջկանց բաժանումը պէտք է փակուած ըլլայ 2-3 տարի, որովհետեւ Մանգումէի Էֆեմարի մէջ կը կարգանք 3 նոյեմբեր 1869 թուակիր թղթակցութիւն մը «Աղջկանց դաստիարակութիւնը յԱրսւնայէկ » վերնադերով որ կ'ըսէ.

«Քանի մը տարի առաջ Արսւնայէկ գիւղի օրինորդն ալ սոյն խնամքը կը վայելէնի անմահ յիշատակաց արժանի Պալեան Կարապետ Վսեմափայլ Պէյին շնորհիւ, բայց անկէջ մինչեւ ցարզ բազմութիւ օրինորդ ստանց դաստիարակութեան մնալով թշուառ եւ թափառական կացութեան մը մասնուած էին, որ կարեւեր տպաւորութիւն մը ընելով սոյն գիւղի երեւելիներէն Տէր-Կարապետեան Մկրտիչ սղային ազգասէր եւ գիւրազգած որտին վրայ՝ զգաց օրինորդաց ծանր թշուառութիւնը, զգաց նոցա բարոյական նօթութիւնը, զգաց վերջապէս ներկայ դարուս օրինորդաց վայելուչ եւ արժանաւոր պէտքը եւ փութաց սոյն կուսանն սնուցանող եւ կենսատու պարէն հայթայթել՝ դպրոց մը բանալով նախնիթաց ամսոյ սկիզբները իր մէկ սեփական տանը մէջ եւ ուսուցիչ կարգելով ուսումնասէր երիտասարդ մը՝ անոր ամսականներն ալ իրմէն առատաձեռնելով» (*):

Յիշենք նաեւ իբր տեղեկութիւն ինչ որ երկու տարի ետք, 1871ին, Պօղոս վրդ. Նաթանեան կը հաղորդէ Արսւնայէկի դպրոցին մասին.

«(Արսւնայէկ) ունի յանուն Ս. Աստուածածնայ կառուցեալ մի փոռուոր եկեղեցի՝ երեք քահանայիւր. Տ. Մարտիրոս Աւագ քահանայ, Տ. Յով-

(*) Մանգումէի Էֆեմար, Կ. Պոլիս, 22 նոյեմբեր 1869, ք. 1078:

վակիմ եւ Տ. Յովհաննէս եւ ունի եկեղեցին իրեն յատկացեալ դպրոց մը՝ Մամիկոնեան անուն, որուն մէջ երկուս աշակերտք կը դաստիարակուին հայկարանի մը ձեռօք եւ աշակերտաց թիւն է 200 եւ որոնց մէջէն քերականութեան եւ թուագիտութեան պարապող բաւական յառաջադէմ աշակերտք եւ աշակերտուհիք կ'ըլլան, նաեւ Սրբազան պատմութիւն եւ Քրիստոնէական վարդապետութիւն ալ մէկտեղ կ'ընթեանուն: Կայ վեց անձերէ բաղկացեալ Հոգարարձութիւն մը, որ դպրոցի յառաջիմութեան պէտքերը կը հոգան, իսկ դպրոցը եկեղեցւոյ եկամուտովը կը յարստեւէ, առանձին իրեն յատկացեալ եկամտից պակասութենէն, բայց յոյս կայ որ աւելի եւս յառաջգիմութեան շարժման մէջ ըլլան աշուհեալ եւ ունին մի թանգարան (*) ուր կը յաճախեն ժողովուրդք երբեմն եւ ունին սակաւ ինչ փափաք ուսումնասիրութեան: Բայց ներկայ տարուոյս մէջ անկեալ կերպարանքի ենթակայ եղած ըլլալուն՝ բաւական պաղած էին դպրոցէն» (**):

Կը կարծենք թէ այս տարիներուն համար 300ը իբր աշակերտութեան թիւ աւելի կը համապատասխանէ իրականութեան քան վերոյիշեալ 200ը: Իսկ թէ ինչի՞ կ'ակնարկէ «անկեալ կերպարանքը» որուն մատնուած է Արսլանյէկ «ներկայ տարուոյս մէջ» այսինքն 1871ին, մեզի անձանօթ կը մնայ:

Վիթալ Քիւրնէ եւս կը խօսի Արսլանյէկի դրոպրոցին մասին: Ահա Փրանսերէն իր երկասիրութեան մէջ Արսլանյէկի նուիրուած հատուածը որուն ակնարկեցինք աւելի վերը (էջ 11):

(*) Գրողարան:

(**) Առաջին Տեղեկագրութիւն Վիեակիմ Նիկոլիովիչ, Պոլսո վրդ. Նաթանեան, Կ. Պոլիս 1871, էջ 16-17:

«Արսլան Պէյ Քէօյ, նախկին Իչ-Գարա (*), դիւզաքաղաք մըն է որ կը գտնուի տասը քիւմ. հետու հարաւ-արեւելք գինւորական ասուրի կայսերական դործարանէն, Ա քիւմ. դէպի հարաւ Ֆէսի կայսերական դործարանէն, եւ Ա քիւմ. արեւմտակողմը Անատոլուի երկաթուղիին Պէօյիւք-Տէրպէնտ կայսարանէն:

Իր բնակիչները, թիւով 2800, գրեթէ ամէնն ալ լուսաւորչական հայեր, մեծ մասամբ պաշտօնեայ կամ բանուոր են վերոյիշեալ երկու կայսերական դործարաններուն մէջ:

Կան նաեւ ութը մետաքսի մանարաններ:

Գիւզաքաղաքին հանրային վարժարանը երկու բաժանում ունի, մէկը տղոց համար որոնց թիւն է չորսը հարիւր, եւ միւսը աղջկանց համար, թիւով 50: Դասաւանդութիւնը երկու աստիճան ունի, նախ-խակըթարան եւ երկրորդական:

Բնակչութեան ընդհանուր վիճակը միջին բարեկեցութիւն մըն է, շատեր հարուստ են»:

Պէտք չէ ասացիրօրէն անել ինչ որ Վ. Քիւրնէ կ'ըսէ Արսլանյէկի դպրոցին մասին, ոչ աշակերտութեան թիւին եւ ոչ այնտեղ արուած ուսման աստիճաններուն վերաբերմամբ, որոնք անշուշտ երկրորդականի չեն հասած: Վ. Քիւրնէ, որ Պոլիս Հանրային Պարտուց Վարչութեան քարտուղար էր, իր բազմահատոր գործը նուիրած է մասնաւորաբար Օսմ. կայսրութեան վարչական եւ անասական ուսումնասիրութեան, եւ իր տուած յարակից անգեկութիւնները երբեմն ստուգման կարօտ են: Աւելորդ է ըսել որ նոյն թերահաւատութեամբ պէտք է

(*) Այս կոչումին, իբր նախկին անուն Արսլանյէկի, չենք հանդիպիր ուրիշ որեւէ տեղ: Իչ-Գարա կոչուած վայրեր գոյութիւն ունին, Անատոլուի հետուր վերայէթներու մէջ:

կարգալ էր տողերը երբ Արսլանպէկը, Արմաշի կարգին, կը դասէ իրը «բարձրագոյն ուսմանց կեդրոն», (տեսնել նախապէս մեր կատարած մէջլերու մը (էջ 25-26) :

Արսլանպէկի դպրոցը միշտ մնաց գիւղական անշուք դպրոց մը: Տեղեկութիւն մը (*) կ'ըսէ թէ Արսլանպէկի երկրորդ հրդեհէն (1886) յետոյ պետութիւնը տարեկան հինգ ոսկիի յատկացում մը կատարեց Արսլանպէկի դպրոցին, ինչ որ իրաւունք տուաւ գաւառին կրթական քննիչին երբեմն քննական այցելութեան գալու եւ թէ քննիչ Ապախըրրասման պէյի հրահանգով մանչերը եւ աղջիկները տեղափոխեցան առանձին դասարաններու մէջ, 1888էն սկսեալ: Ինչ որ կը նշանակէ թէ աղջիկները Մ. Տէր Կարապետեանի յատկացուցած տունէն յետագային փոխադրուած էին աղայոց վարժարանը:

Իսկ համաձայն Մուշեղ Սերոբեանի, «այդ օրերուն», այսինքն շուրջ 1878-82ին, «բացուեցաւ աղջկանց վարժարան մըն ալ, «որուն ուսուցչութեան հրահարուեցաւ «աղջիկ վարժապետ» անունով ներքինի մը, որ լաւ դերձակ արհեստաւոր մըն էր»:

«Մեր օրերուն, կ'ըսէ վարձեալ Մ. Սերոբեան, դպրոցին ուսուցչութիւնը գրեթէ մենաշնորհն էր տեղացի Ա ուսուցիչներու՝ Սաչիկ եւ Ստեփան Վարժապետեաններուն (վերջինը մականունեալ «Տօբրիթ») եւ Գալֆա եղբայրներուն:

«Շատ յատկանշական էր Գալֆա եղբայրներուն ուսուցչական պաշտօնը: Այդ երկու եղբայրները փոխն ի փոխ վարժապետ կ'ըլլային եւ անտես: Մէկուն վարժապետ եղած ատեն միւսը անտես էր (**):

(*) Նօթագրութիւն Արսլանպէկի Մ. Ալթունեանի, Երեւան:

(**) Հայրենիք Ամսագիր, Պոսթոն, Հոկտեմբեր 1958:

Այս ամենուն համար թերեւս ճիշդ պատկերացում մը կ'ըլլայ ըսել թէ մեր գիւղական եւ նոյնիսկ մեծ քաղաքներու դպրոցներուն մակարդակը կը բարձրանար կամ կը ցածնար համաձայն մէկ-երկու կարող ուսուցիչներու ներկայութեան կամ բացակայութեան: Տրուած տեղեկութիւններէն կը հետեւի նաեւ թէ Արսլանպէկի վարժարանին աղջկանց բաժինը շատ անգամ փակ մնացած է:

Վերոյիշեալներէն զատ ուսուցիչներուն մէջ կը գտնենք, տեղացիներէն, Նշան Տէր Ստեփանեան, Միւրիճոն վարժապետ (Միհրան Գալֆայեան), Սաչիկ վարժապետ եւ որդին Կարապետ, Նէտի-Գուլէի (Կ. Պոլիս) որբանոցէն շրջանաւարտ, որ Արսլանպէկի վերջին հրդեհէն ետք ձգեց գիւղը եւ հաստատուեցաւ Իզմիթ:

Հրդեհները պատճառ եղան որ ուսուցչական թոշակները կանոնաւոր կերպով չ'վճարուին եւ ուսուցիչները յաճախ փոխուին: 1894էն ետք կառուցուած մատուոցը կը ծառայէր նաեւ իրը դպրոց, մինչեւ նոր դպրոցին շինութիւնը: Այնտեղ կը պաշտօնավարէր Թումա վարժապետ (Թումաս Վիէսեան) որ աշակերտած էր Արմենակ Հայկունիի եւ իրը այդ գրաբարագէտի համբաւ ունէր: Թումա վարժապետ միտամանակ թաղական խորհուրդի ատենապետըն էր, եկեղեցապատկան ստացուած քննութեան ատակարարը եւ մարդահամարի պատասխանատուն: Իրեն հետ գործակցելու եկաւ արմաշական Նղիշ վարժապետը (Նղիշ Շիրինեան), միւսնոյն ատեն եկեղեցական երաժիշտ, որ շուտով մեկնեցաւ գաւառներու մէջ ուսուցչութեան: Իրեն տեղ Օվաճրգէն բերուեցաւ Յովհաննէս Չըթըթեան, իրը ուսուցիչ հայերէնի, թուրքերէնի, թուրքաբանութեան եւ իրագիտութեան, որ տարին չ'ըրացած մեկնեցաւ:

Իսկ Թուճա վարժապետին յաջորդեց Միրիճոն վարժապետը, վարժ եկեղեցական երաժշտութեան:

Զըթշըթեանի տեղ բերուեցաւ Արարանպէկցի Մկրտիչ Շէրպէթեանը, որ ուսուցչութիւն բրած էր Գուշ Ասալի (Իզմիր) մէջ եւ շնորհիւ իր տալուտի ձայնին Իզմիրի Մէվլէվիներու քեֆէէին մէջ երգած էր Հիւսէյնի, Սապահի, եւն.: Իր ծննդավայրը վերագտնուէն ետք Շէրպէթեան շուտով մեծուաւ:

Գիւղին վերջնական վերաշինութենէն ետք դպրոցը հեազհեաէ կանոնաւորուեցաւ: Ասոնցմէ առաջ, նախքան յաջորդական երկու հրդեհները, իբր ուսուցիչ կը յիշուին Ստեփան Գազանճեան, որ ուսուցչութիւն բրած էր Պոլսոյ թրքական վարժարաններու մէջ եւ հանգստեան կոչուած՝ կ'աղբէր Արարանպէկ, տեսուչ Սաչիկ Մսրեան եւ իր օգնականը Միհրան Տօնկիլեան: Աւելի առաջ, 1861ին, Գալուստ քահայ. Թիրեաքեան կը յիշուի իբր տեսուչ Արարանպէկի դպրոցին: Այդ շրջանին է որ, 1860ի շուրջ, ուսուցչական պաշտօնի կոչուած է Արմենակ Հայկունի, որուն պաշտօնավարութիւնը փայլուն յիշատակ մը եղած է Արարանպէկցիներուն համար:

Արմենակ Հայկունի (Համբարձում ձիզմէճեան) ծնած էր Պոլիս 1835ին: Աշակերտած էր Տքթ. Հէմլինի նոր բացած վարժարանին: Այնտեղ սորված իր անդիւրէնը թոյլ առաւ որ Խրիմի պատերազմին միջոցին իբր թարգման ծառայէ անգլիական բանակին մէջ: Հրատարակած է բազմաթիւ հատորներ եւ Մուսայի Մասեաց թատերական հանդէսը: Բուն հրատարակագիր, անկախ եւ անդիջող, անփախ քրննադատ կրօնական նեղմտութեան, Հայկունի ունէր շատ հակառակորդներ եւ թշնամիներ: Մեռաւ երբտասարդ եւ յետին թշուառութեան մէջ, 1866ին:

Ի՞նչ պարագաներու մէջ եկած էր Արարանպէկ: Թերեւս անոր համեստ դպրոցին մէջ փնտռած է ապաստան եւ ապաւէն: Վ. Զարգարեան (*) եւ Հ. եւ Զ. Ասատուր որոնք կուտան իր հակիրճ կենսագրութիւնը, կ'ըսեն թէ «Արարանպէկ ալ դացած է ուսուցչական պաշտօնով» (**):

Արշակ Ալպոյաճեան կը պատմէ (***) զուարճալի դրուագ մը անոր Արարանպէկի մէջ ուսուցչութեան շրջանէն: Այնտեղ Ա. Հայկունի կը հագնէր տեղական տարազը: Օր մը յանկարծ ստիպուած ըլլալով Պոլիս մեկնիլ, ատեն չէր ունեցած փոխելու հագուստը: Հազիւ հասած, Բերայի մէջ կը հանդիպի բանակի իր նախկին պաշտօնակիցներէն Տէր Գալուստեանին որ Փրանսերէնի թարգման եղած էր եւ որ զինքը կը հրաւիրէ երթալ նոր բացուած Լիւքսեմպուրի սրճարանը, վերապահուած եւրոպացիներուն եւ բարձր դասու յաճախորդներուն: Մեծ կ'ըլլայ Հայկունիի վերաւորանքը երբ ծառայ մը կուգայ զինք հրաւիրելու որ հետանայ, իր ներկայութիւնը տարօրինակ տարազին մէջ անախորժ ըլլալով յաճախորդներուն: Նոյնքան մեծ կ'ըլլայ իր գոծած յաջողութիւնը երբ ցատկելով սեղանի մը վրայ կը խօսի անդիւրէն ճառ մը, զոր Տէր Գալուստեան կը թարգմանէ Փրանսերէնի, բացատրելով թէ զիւրական հագուստ հագած է աւելի մօտ ըլլալու համար տգիտութեան մէջ մնացած իր եղբայրներուն զորս լուսաւորելու պաշտօն ունի, եւ խարազանելով քաղաքակիրթ համարուածները որոնք մարդը կը դատեն տարազէն:

Վերջին հրդեհները պատճառ եղան որ դպրոցը

(*) Յիշատակարան, Գահիրէ:

(**) Թանգարան, Բարձր. դասընթացք, Կ. Պոլիս, 1921:

(***) Գանձարան, Ա. Անտոնեան, Կ. Պոլիս, 1920:

անտեսուի ժամանակ մը: Երկու անգամ սերունդ մը մեծցաւ առանց ուսման: Այսուհանդերձ միշտ վերաբացուեցաւ եւ կանգուն մնաց:

Գրոց-բրոցներ ալ զանուած են Արսլանպէկէ մէջ: Նոյնիակ հեռաւոր թուականի մը եղած են Արսլանպէկցիներ որոնք գիտէին զբիշ շարժել գրաբարախառն հայերէնով եւ ծագկեալ սճով: Այդ է որ ցոյց կուտան երկու նամակները, որոնցմէ հասուածներ կը հրատարակենք, զորս մանարանատէր Մկրտիչ Տէր Կարապետեան եւ իր որդին Կարապետ ուզզած են իր ասեանին համբաւաւոր Յովհանէս աւագ քհնյ. Մկրեանին, իր որդւոյն Յակոբիկի մահուան առթիւ: Մկրեան քահանան եղած էր պատրիարքական փոխանորդ եւ յետոյ Ներսէս Վարժապետեանի կողմէ ուզարկուած էր Մանչեսթըր հովուական պաշտօնով: Երկու նամակագիրները ուսած էին Արմաշի մէջ:

Գեր. Տէր Յովհաննէս քհնյ. Մկրեան
Պատրիարքական փոխանորդ Կ. Պոլսոյ
Յարգանօք ի Պարտիզակ

Գերապատիւ Տէր Հայր,

Ձեր հարգատար որդեկին Ազնիւ Յակոբիկի մահուան դառն զոյժը լսեցի եւ կարբի շատ ցաւեցայ, մահը երիտասարդութեան հասուն հասակի մէջ կը քաշէ կը տանի զնա ի հանդերձեալ աշխարհ եւ ի դառն սուգ կը համակէ զՁեզ ձեր ազնիւ գերդաստանին եւ հարգատիւքն, արդարեւ յոյժ ցաւալի արկած մ'է այս որ Ձեզ պատահած է, սակայն սորա նախախնամութեան անխմանալի վճիռներէն մին ըլլալը զուք քաջ գիտէք, որուն անշուշտ իւրաքանչիւր մարդ պիտի վիճակի

. Ձեր ի Պարտիզակ գալն լսելով ուզեցի եւ ես միանգամ գալ՝ եւ բանիւ բերանով տեսակցիլ բնոյ Ձեզ, եւ յնուլ միանգամայն բազմաժամակեայ կարօտութիւնս, սակայն եւն.:

Ուստի այս մասերուն Ձեր ներողամտութիւնը հայցելով՝ եւ Ձեր սուրբ աջոյն ալ համբոյր խոնարհ մատուցանելով՝ մնամ անձուէր ծառայ Ս. Հօրդ՝

Մկրտիչ Տէր-Կարապետեան
1876 Ապրիլ 7, յԱրսլանպէկ

Նամակ որդւոյ ճորիմ պարոն Կարապետի հասկակիցի հանգուցելոյս ի Տէր.

Գերապատիւ եւ սրբակրօն Տէր Հայրդ իմ,

Կորուստ յաւիտեական զոր կորուսիք, զանձ անգիւտ ու պատուական զգործ վաստակաւոր ձեռացդ ասեմ, զոր անագորոյն աւագակն աշխարհակուլ յափշտակեաց եւ տարաւ: Ի բացուստ հանդիման ասնեն մեզ գերիտասարդ մի ախտանեան տարածեալ առաջի գորոգալէտ ծնողացդ եւ հարազատից, եւ ի մէն մի դիմաց կաթիլք դառն արտասուաց ոլուն ոլուն անկեալք յերկիր թանան զգիտնացեալ մարմինն:

. . . զնոյն եւ յիս է տեսանել, Հայր տիրազգած, յիս որ մի էի ի հարազատ բարեկամաց ազնիւ որդեկիդ, բայց աւագ որ չէի անդ. եւն.:

Մնամ Ս. Հօրդ խոնարհ ծառայ
Կարապետ Մ. Տէր-Կարապետեան (*)
1876, Ապրիլ 7, յԱրսլան-Պէկ

(*) Մահարձամբ եւ Յիշատակարան, Յովհաննէս քհնյ. Մկրեան, Կ. Պոլիս, 1877:

Արարանպէկիր մէջ չեն պակասած ուսման հետա-
մուտ երիտասարդներ որոնք զոհացած չեն գիւղա-
կան նախակրթութեամբ: Պարտիզակ եւ մանաւանդ
Արմաշ իրենց առջեւ ասպարէզ կը բանային: Մ.
Սերոբեան կը գրէ թէ «այդ շրջանին», որ պէտք է
հասկնալ 80ական թուականները, «մեր գիւղէն մի-
այն երկու երիտասարդներ Պարտիզակ գրկուած էին՝
իրենց ուսումը շարունակելու: Մէկը մեծ եղբայրս
էր, իսկ միւսը՝ Տէր-Ստեփանեան Նշան (քահանա-
յին գաւակը): Ես երբորդն էի որ մեկնեցայ գիւղէն
կրթութեան նպատակով» (*):

Ինչպէս ծանօթ է Մուշեղ Սերոբեան ծնած
1869ին, նախկին արքեպիսկոպոս, մեկնած էր Արմաշ
ուր ստացած էր եկեղեցական կարգ:

Բայց աւելի հին, ինչպէս եւ աւելի մօտիկ տա-
րիներու մէջ ալ կը գտնենք Արարանպէկիրներ որոնք
գացած են Արմաշ ուսանելու: Ասոնցմէ են.

Խաչատուր վարժապետ Արալանպէկցի, որ
1843ին կ'աշակերաէր Յովհաննէս պատուելի Մալ-
եանի: Այս վերջինը յետոյ եղած է քահանայ եւ ու-
սումնապետ Արմաշի, հեղինակ Պատմութիւն Արմա-
շու ձեռագիր գործին:

Մամբրէ վրդ. Նալպանտեան, աշակերտ Արմա-
շի վանահայր եւ յետոյ Կոստանդնուպոլսոյ պատ-
րիարք Սորէն եպ. Աշգրեանի, ձեռնադրուած 1872-
ին, Գէորդ եպ. Ալիքսանեանի կողմէ:

Բարունակ Եսայեան, Արմաշ մտած 1895ին,
ձեռնադրուած 1901ին եւ վերակոչուած Կորին: Մե-
սած է 1908ին:

(*) Հայրենիք Ամսօրիք, Հոկտեմբեր 1958:

Եղիշէ Շիրինեան, Արմաշ մտած 1895ին, ու-
սուցիչ էր 1914ին:

Արտաշէս Սերոբեան, Մուշեղ արք. Սերոբեան,
վանք մտած 1889ին եւ ձեռնադրուած 1895ին:

Խաչիկ Մակարեան եւ Սիմոն Էշմէլեան մտած
էին Արմաշ 1902ին ուրիշ վերադարձան իրենց
ծննդավայրը իրենց ուսումը աւարտելէ ետք:

Արտաշէս Գասապեան արձանագրուած էր Ար-
մաշի մէջ 1913ին կազմուած դասարանին (*):

Գիւղին սահմաններէն դուրս, իբր արքային
շրջանակի մէջ գործող Արարանպէկցի մտաւորա-
կան պէտք է յիշել Մուշեղ Սերոբեան, որ վարեց ա-
ռաջնորդական պաշտօններ, 1896ին Ակն, 1897-
1903ին Արարիկը, 1908ին Ատանա: 1906ին եպիսկո-
պոս ձեռնադրուեցաւ Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ
Խապայեանի կողմէ: Ատանայի 1909ի ջարդը տեղի
ունեցաւ երբ կը գտնուէր Եզիպոսոս, ուր գացած էր
հանգանակութիւն կատարելու ի նպատակ Կիլիկիոյ
կրթական գործին: Եզիպոսոսէն գնաց Մանչեսթրը
ուր քանի մը ամիս մնալէ ետք անցաւ Ամերիկա հո-
վուական պաշտօնով: Այնտեղ հիմնեց տպարան մը:

1917ին Փարիզ կը գտնուէր երբ անուանուեցաւ
առաջնորդ Պաղտատի ուր հասաւ 1918ին: Այնտեղ
իր գլխաւոր գործը եղաւ որբերու ազատագրութիւ-
նը: Երբ գործով գացած էր Կիլիկիա, Անգլիացիք
արզիլեցին իր վերադարձը Միջագետք: Այն տանն
մնաց Կիլիկիա եւ դարձաւ աջակից Սահակ Կաթո-
ղիկոսի, մինչեւ Կիլիկիոյ պարպումը:

Ատանայի իր առաջնորդութիւնը, եւ ընդհան-
րապէս իր հանրային գործունէութիւնը տեղի ար-

(*) «Արմաշու Դպրեվանք, 25-ամեայ Յորեիանիւն առ-
թիւ, 1889-1914»: Կ. Պոլիս, 1914:

ւած են թեր ու դէմ կարծիքներու: 1922ին թողուց եկեղեցական կարգը, շարունակելով հանդերձ արտասյախուսի մամուլին մէջ: Կարեւոր դեր կատարեց Մեկրոնեան նուիրատուութեան մէջ, որով եզրկտարնակ Կարապետ Մեկրոնեան, սիկարէթի դործարանատէր, իր հարստութիւնը, շուրջ 560,000 սթերլին, կը կտակէր Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան: 1924-25ին կը դանուէր Նիկոսիա ուր դրազեցաւ Մեկրոնեան վարժարանի շինութեամբ: Մեռաւ 1951ին, նոյն քաղաքին մէջ:

Ունի բազմաթիւ հրատարակութիւններ, որոնցմէ Թուղթ Հովուական, ուղղուած Արարիկիբի վիճակին եկեղեցիներուն եւ ժողովուրդին, Փոռութեան Օնալսը կամ Օրմանեան պատրիարքութիւնը, Ընկերավարութիւն եւ հայ ընկերավարականներ, Մանչեսթըրի հայ գաղութը, Հայկական Մղձաւանքը, Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, Ամերիկահայ Տարեցոյց (1912 եւ 1913), եւլն.:

Պէտք է յիշել նաեւ ուրիշ Արարանայէկցի եկեղեցական մը, Կորիւն Ծ. Վ. Եսայեան, կորովի եւ խիղախ, որ կանխահաս մահ մը ունեցաւ: Մտղաքիա արք. Օրմանեան իր մասին կը գրէ Խոսիք եւ Խօսքի մէջ. «Կորիւն Եսայեան, աւագանէն Բարունակ, Արարանայէկցի, . . . : Իւր համարձակ տեսութիւններով եւ չափազանցեալ յայտատարութիւններով պաշտօնական զխտողութիւններու ենթարկուեցաւ, եւ Բալուի առաջնորդութենէն ետքը Մարաշի առաջնորդութեան կոչուեցաւ Մուշեղի պաշտպանութեամբ, եւ արթուն դործունէութիւն ցուցուց: Սակայն մահացու հիւանդութեան հետեւանքով տաճարամ կերպով մահկանացուն կնքեց Մարաշի մէջ»:

Եսայեան Ծ. Վ. Բալուէն առաջ Ակնայ մէջ եւս

առաջնորդական պաշտօն վարած էր 1905ին: Գաբեղին արք. Խաչատուրեան իր մասին գրած է. «Կորիւն վարդ. Արարանայէկցի որբ մը եղած է՝ Սամաթիացի հայու մը կողմէ որդեգրուած, ապա Արմաշ զրկուած: Զեւնագրուած է մեզի հետ (1901 Մայիս 20ին): Գաւառական պաշտօններ վարած է: Մարաշի առաջնորդութիւն բրած է մէկուկէս տարիի շափ»:

Եսայի վարդապետի Նշխար կամ Մատուց յոգուածաշարքը տեղի տուած էր քննադատութիւններու եւ «պաշտօնական զխտողութեան»: Մեռաւ 1908ին Մարաշի մէջ ուր թաղուեցաւ Ս. Քառասուն Մանկանց եկեղեցիին բակը: «Մարաշցիք մեծ սուգով ողբացին երիտասարդ եկեղեցականին մահը», կը գրէ Գր. Գալուստեան իր Մարաշի Պատմութեան մէջ, (Նիւ Եորք, 1934):

Աւելի առաջ, Արարանայէկցի Մամբրէ վրդ. Նալպանտեան, առաջնորդական փոխանորդ Արմաշի եւ ուսուցիչ դպրեմանքին Օրմանեանի վանահայրութեան օրով, որոշ համբաւ վայելած է իր ժամանակին:

Իսկ ներկայիս Հայաստան կ'ապրի Տքթ. Մկրտարի Տէր Կարապետեան, անուանի բժիշկ եւ դասախօս Երեւանի համալսարանին, ուր ներդադրած է Լիւնէն: Որդին է Արտաշէս Տէր Կարապետեանի եւ թուր մանարանտէր Կ. Տէր Կարապետեանի, որ յաճախ յիշատակուած է ներկայ հասորին մէջ:

1900ական թուականներուն Արարանայէկի մէջ սկսած էր կազմուիլ խումբ մը ուսումնական անձներու, ինչպէս Վահրամ Ֆրչըճեան, կանխահասօրէն մեռած բանաստեղծ, առամարտոյժ Գրիգոր Այիքսանեան, ճարտարապետ Տիւրկէր Թոմայ, դեղագործ Սահակ Կակարեան, բժիշկներ Սահակ Տէր

Կարապետեանն եւ Գեղամ Սերոբեանն, որ իրր բժիշկ զերժ մնացած է տարազրութենէ եւ Ամբերիկա հաստատուած՝ Հայրեմիքի մէջ հրատարակած է իր հօրեղբօր Մ. Սերոբեանի յուշերը Արսլանպէկի մասին, առեւտրական Ներսէս Տէր Կարապետեանն որ Եւրոպա ուսած էր, «Տ.թթ.» Մինաս Սերոբեանն, երէց եղբայրը Մ. Սերոբեանի, որ թէեւ բժշկական ուսում չէր ստացած բայց յաճախ կը գործէր իրր բժիշկ, եւն. : Ասոնք ամենազերջին սարկինբու գէմֆեր են որոնց ստեղծած շրջանակը կոչուած պիտի ըլլար փոխելու նախկին յետամնաց գիւղին միջնորդար : 1902ին Արսլանպէկի մէջ կազմուած էր Կանանց Լսարանական Միութիւնը, նպատակ ունենալով կալուածներ դնել զպրօցին համար : Ունէր 120 անդամուհի որոնք կը վճարէին 5 դրուչ մուտքի տուրք եւ 10 փարա շարաթական : Միութիւնը գոյացուցած էր 80 սակի զբամազլուխ մը :

Գպրօցին աշակերտութիւնը աւելցած էր, ինչպէս ուսուցիչներուն թիւը : Համաձայն 1909-10 տարեշրջանին վերաբերեալ ցուցակի մը (Մ. Գասապեան), Արսլանպէկի գպրօցը ունէր 526 աշակերտ, որոնց 356ը մանչ եւ 170ը աղջիկ, տարեկան 20,000 դրուչի պիւտճէով մը : Կը պաշտօնավարէին վեց ուսուցիչներ եւ երեք ուսուցչուհիներ :

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Ինչպէս ամէն տեղ, Արսլանպէկի մէջ համրեանն շրջանի երիտասարդութիւնը առգորուած էր ազգային բունն զգացումներով եւ խանդավառուած էր հայրենասիրական հեռանկարներով : Կուսակցական թեւթեր, ինչպէս Հնչակ, Գրօշակ, Մարտ, թոռուցիկներ, մուտք կը գործէին գիւղին մէջ գաղտնօրէն : Կազմուած էին նախ Հնչակեան, յետոյ Գաշնակցական կորիզներ : Գիւղը կը հասնէին ջարդերու եւ ցոյցերու պատմութիւնները : Մանարայեան էր Կ. Տէր Կարապետեան, յայտնի եւ աղբեցիկ առեւտրական որ արտօնուած էր Կ. Պոլիս ճամբորդելու, վերադարձին կը պատմէր իր լսածները եւ տեսածները, 1896ի Պոլսոյ ջարդը եւ Եւրլըզի ուսմը : Իզմիթէն ոստիկան գինուորներ երբեմն կուգային կատարելու խուզարկութիւններ, միշտ ապարդին : Գում Գափուի ցոյցէն ետք ձերբակալուեցան, եւ յետոյ ազատ արձակուեցան, Հնչակեան Հայկ Վարժապետեան, ինչպէս եւ Նշան Տէր Ստեփանեան : Պէօյիւք-Տէրպէնաի կայարանին մէջ ծխախոտի գէտերը խուզարկեցին իրր յեղափոխական ճանչցուած Լանփաշայի (Յովհաննէս Լանփաշայեան, Ատափաղարցի) ծխախոտի ծրարը որուն մէջ գտնուեցան «Վտանգաւոր» թուղթեր, ուղղուած Արսլանպէկի ընկերներու : Հետեւանքը եղաւ ձերբակալութիւնը

Աղեքսանդր Նալպանտեանի եւ Վոսաճապուհ Սե-
րոբեանի, Եղբայրը Մուշեղ Սերոբեանի: Առաջինը
բանտարկուած մնաց Իգմիքի մօտ Պոտորում Գալէի
մէջ, Երկրորդը Թարապուտի բերդը, մինչեւ Օսմ.
Սահմանադրութիւն: Իսկ Լանփաշայ անձնասպան
եղաւ Պոլսոյ բանտին մէջ, չըսելու համար իր գիտ-
ցածները (*):

Ազ. Նալպանտեան 1898ին գտնուած էր Փարիզ,
Իգմիթցի Տքթ. Աշոտ Պարախոյանեանի հետ: Այդ
միջոցին է որ Հր. Աճառեան ծանօթացաւ իրեն եւ
կազմեց իր Արսլանբէգի Բարբառը: Նալպանտեան
յետոյ անցաւ Եգիպտոս ուր զբազրութիւն կ'ընէր,
հաւանաբար Նուպարներու ազարակին մէջ: Վո-
սերոբեան եւ Ա. Նալպանտեան Սահմանադրութենէն
ետք վերադարձան Արսլանպէկ ուր ընդունուեցան
խանդավառ ցոյցերով: Նալպանտեան սկսաւ այն-
տեղ բանեցնել Եկեղեցիին պատկանող սրճարան մը,
իրը «սրճարան-ընթերցատուն», ուր կը հաւաքուէին
գիւղին ընթերցասէրները: Երկուքն ալ ողբերգա-
կան վախճան ունեցան: Տէր Զօրի ճամբուն վրայ
Ա. Նալպանտեան իր կնոջը հետ նետուեցաւ Եփրատի
ջուրերուն մէջ: Վոսաճապուհ, վարժ գինագործ,
կրցաւ երթալ Ատանա իր եղբոր Մուշեղ արք.ի մօտ,
ուր Ֆրանս. գրաւման շրջանին ուսմբի մը պատ-
րաստութեան միջոցին գոհ եղաւ պայթումի մը որ
քանդեց ամբողջ բնակարանը (**):

Սերոբեան չորս եղբայրներէն Երեքը, Կարա-
պետ, Մուշեղ եւ Վոսաճապուհ ունեցան ազգային
եւ կուսակցական գործունէութիւն: Կարապետ հա-
միակեան շրջանին ինքզինքը անսպասով զգարով

(*) Ըստ Պարթեւ Ստեփանեանի նօթերուն:

(**) Նոյն եւ ժամանակի թերթերը:

Արսլանպէկի մէջ, գաղանօրէն անցաւ Պոլիս ուրկէ
յաջողեցաւ խոյս տալ Պուլիարիա, ուր տան մը
թափառելէ ետք գնաց Կովկաս: Այնտեղ մասնակցե-
ցաւ յեղափոխական գործերու եւ ցարական սատի-
կանութեան կողմէ արսորուեցաւ Սիպերիա: Ազա-
տուելէ ետք եկաւ Թիֆլիզ եւ անկէ վերադարձաւ
իր ծննդավայրը օսմ. Սահմանադրութենէն ետք:
Տարագրութեան միջոցին իր Օվաճրոյցի կնոջը եւ
զուակներուն հետ կրցաւ միանալ Մուսա Լերան
կուսուցներուն, որոնցմէ հեռացաւ կնոջը թախան-
ձանքներուն վրայ եւ գնաց անյայտանալ իրեններուն
հետ անսպասին մէջ (*):

Օր մը յանկարծ գիւղին մէջ տարածուեցաւ
զգայացունց լուր մը. «Պոլսոյ ճամբաները բաց-
ուած են»: Այս ձեւին տակ է որ Արսլանպէկի Ժո-
զովուրդը կը պատկերացնէր Օսմանեան Սահմանա-
գրութեան հռչակումը:

Սկսան հասնիլ Պոլսոյ թերթերը: Ամէն կողմ
հնչեցին ազատութեան երգերը: Հայեւթուրք եղ-
բայրակցութեան անսարաններ պարզուեցան: Դրա-
ցի Ալէպնէ գիւղին Թուրքերը որոնք միշտ բարեկամ
եղած էին Հայերուն եկան ողջագուրուիլ Արսլան-
պէկի երեւելիներուն հետ:

Գաւառին Հայերը եւ Թուրքերը շոգեկաւ վար-
ձեցին երթալու համար Պոլիս: Ասոնց մէջ էր Արս-
լանպէկցիներու պատուիրակութիւն մը: Չորս ժա-
մուան ճամբորդութենէ մը ետք երեւցան մայրաքա-
ղաքին միներէնները: Անծայրած իր թափօրը քարա-
փէն գնաց մինչեւ Շիշլիի աղբ. գերեզմանատունը,
զբօշներով եւ վերաստութիւններով, երգերով եւ
նուագով: Զեռեզուեցան ծագկեպսակներ զամբան-
ներու վրայ:

(*) Նոյն:

Յաջորդ օրը նոյն ձևով պատուիրակութիւնները վերազարձան Իզմիթ, ուր եղան հանդէս եւ լուսավառութիւն, խօսուեցան ճառեր թաղապետական պարտէզին մէջ:

Կազմուեցան միութիւններ, բացուեցան աւուստներ: Վերազարձան արտորակները: Կուսակցութիւնները ազատօրէն հիմնեցին իրենց մասնաճիւղերը: Բազմութեամբ լեցուն աւուստներու մէջ աեղի կ'ունենային հաւաքոյթներ, կ'արտասանուէին ճառեր ուր խօսք կ'աննէին եռանդուն գործիչներ:

Մօտակայ գիւղերէն կուգային երիտասարդ կուսակցականներու արշաւախումբեր տեղացիներուն հետ բարձրանալու Արսլանպէկի լեռները: Երկսեռ զպրօքը կը սկսէր բոլորել ոգեւորուած շրջան մը:

Քրիստոնեաներու զինուորագրութիւնը ծառայութեան կոչեց Արսլանպէկի երիտասարդութիւնը: Արսլանպէկցիները կը զրկուէին Բուժելի շրջանը, ուր էտիրնէէն մինչեւ Կէվկէլի թրքական զօրաբաժիններուն մէջ կը գտնուէին Արսլանպէկցիներ: Պալքանեան պատերազմին մէջ անոնք տուին քանի մը զոհեր:

Վերահաստատուեցաւ Ազգային Սահմանադրութիւնը: Արսլանպէկ եւս կրկին իր դերը ստանձնեց թեմական կազմակերպութեան մէջ:

ԱՐՍԼԱՆՊԵԿ ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ԹԵՄԻՆ ՄԷՋ

Նիկոմիդիա Արմաշի վիճակ եղած էր վանքին հիմնադրութենէն սկսեալ, 17րդ դարուն սկիզբը: Վանահայրը կը վարէր նաեւ թեմակալ առաջնորդի պաշտօն: 1869ին Պօղոս Թաքթաքեան պատրիարքին օրով, Արմաշ կազմեց առանձին վիճակ, մօտակայ Սասկալ կամ Փիրահմէտ գիւղով, որպէսզի վանահայրը, այն ատեն Եփրեմ վրդ. Հաւլուճեան, կարենայ նուիրուիլ միմիայն վանական գործին, եւ Նիկոմիդիա դարձաւ առանձին թեմ, առաջնորդ ունենալով Նիկողայոս եպ. Աղասեանը:

Արսլանպէկ մաս կազմեց Նիկոմիդիոյ թեմին, ինչպէս ամբողջ գաւառը:

Ազգային Սահմանադրութենէն առաջ իսկ, Իզմիթ ունեցած էր, իր թաղական խորհուրդէն զատ, «ազգային քաղաքական ժողով» մը Կոստանդնուպոլսոյ նման, որուն մէջ ներկայացուած էր Արսլանպէկ: Հայաստան թերթը կը զրէ՛.

«Թաղաւորական հրամանով Կոստանդնուպոլիս հաստատուած ազգային քաղաքական ժողովոյն նրման ժողով մըն ալ Իզմիթի քաղաքի քաղաքացիք ուզած էին: Սրբազան Պատրիարքը ստիկա քաղաքական ժողովոյն առաջարկելով՝ ամէնքը միարբան հաճեցան, ուստի Սրբազան Պատրիարքը զիր գրեց որ թէ քաղաքէն եւ թէ շրջակայ մօտաւոր տե-

զերէն, ինչպէս են Պախճաճըղ, Օվաճուխ, Արսլան-
պէկ, Տէօնկէլ գեղ, Արմաշ եւ Ատարազար, այս ժո-
ղովոյս անդամ ըլլալու յարմար անձինք ընտրուին,
եւ անուններն գրուի: Այս ընտրեալ անձանց անունը
առնելէն ետքը կոնդակով մը այս ժողովը հաստա-
տուելու պէտք եղած հրամանը եւ կարգադրութիւնը
ատուաւ: Այս կոնդակս Իգնիմիա սուրբ եկեղեցւոյ
ատանը կարգացուելով յունվար 18 կիրակի առա-
ւօտուն բոլոր քաղաքացիք անպատում ուրախու-
թեամբ լեցուեցան, եւ մեծ շնորհակալութիւն մա-
տուցին Աստուծոյ, որ ազգին մէջ այսպիսի բարե-
կարգութիւններ տեսնելու զիրենք արժանի ըրաւ»:
(*)

Աւելի փայլ մը տալու համար իրենց նորահաս-
տատ թեմին, Նիկոմիդիացիք 1870ին իրենց առաջ-
նորդ ընտրեցին Ներսէս Վարժապետեանը: Երբ
1874ին այս վերջինը ընտրուեցաւ Կոստանդնուպոլ-
սոյ պատրիարք, իբր առաջնորդական փոխանորդ
գործերը վարեց Ստեփաննոս Ծ. Վ. Յովակիմեան,
որ դարձաւ առաջնորդ երբ 1880ին Ներսէս Պատ-
րիարք վերջնականապէս հրաժարեցաւ առաջնորդա-
կան պաշտօնէն: 1885ին Գաւառական ժողովը որո-
շեց որ Ստեփաննոս Ծ. Վ. «ցմահ առաջնորդ մնայ
մեզ»:

Նախորդ էջերուն մէջ յաճախ առիթը ներկա-
յացաւ յիշելու անունը եւ գործերը Ստեփաննոս ար-
քեպիսկոպոսին որ իսկապէս մնաց ցմահ առաջնորդ
Նիկոմիդիոյ որքան ատեն որ զոյութիւն ունեցաւ
Նիկոմիդիոյ թեմ մը, նոյնիսկ ազգէտէն ետք, Զինա-
գազարի կարճատեւ շրջանին: Իբր առաջնորդ Նի-

(*) Հայաստան, 1848, 7 Փետրուար թ. 32 - 85:

կոմիդիոյ գաւառին, Արսլանպէկի պատմութեան
վերջին 40-45 տարիներու դէպքերուն մէջ միշտ իր
տեղը ունի Ստ. արք. Յովակիմեան:

Կը վայելէր մեծ ժողովրդականութիւն ոչ մի-
այն հայ, այլ եւ թուրք հասարակութեան մէջ: Եղաւ
չինարար եւ բարերար, զիտցաւ ծառայել ոչ միայն
հայուն, այլ եւ մահմետականին: Միշտ մօտ եղաւ
ժողովուրդին բոլոր խաւերուն: Ունէր իրեն յատուկ
պարզ եւ անմիջական հաղորդականութիւն մը որով
զիտէր մօտենալ խոնարհ գեղջուկին, ինչպէս հայ
ջոջերուն եւ թուրք մեծամեծներուն:

Բայց զիտէր նաեւ պահպանել եւ մշակել իր
համբաւը: Գիտէր ի հարկին դոճել համեստը եւ աը-
կարը շահելու համար զօրաւորին բարեացակամու-
թիւնը: Կարելի չէ առանց վերապահութեան ընդու-
նել Մուշեղ Սերոբեանի բոլոր դատաստանները,
բայց կ'արժէ մէջբերել, յիշատակութեան համար,
իբ յուշերուն քանի մը տողերը. «Եւ Ստեփաննոս
եպս. Յովակիմեան չափազանց ճարպիկ էր՝ հրահ-
րելու կիրքերը, իր պաշտօնին ապահովութիւնը կը
զանէր այդ բաժանումին մէջ» (*): Իսկ Մինաս Գա-
սապեան կը գրէր 1912ին. «Նկատի ունենալով բոլոր
այն անպատեհութիւնները՝ որոնք կրնան ծագիլ ան-
հատի մը կենդանութեան ատեն եղած գնահատում-
ներէն կամ քննադատութիւններէն, մենք առ այժմ
կը հրաժարինք արդի բազմամեայ առաջնորդ Ստե-
փաննոս արքայ. Յովակիմեանի մասին երկար ծան-
րանալէ. միայն արգար ըլլալու համար ըսենք որ,
հակառակ անոր կարգ մը ուշադրու թերութիւննե-
րուն, անիկա եղած է հին դարոցի պատկանող եկե-
ղեցականներու ամենէն գործունեայ եւ շինող ա-

(*) Հայրենիք Ամսալիբ, Հոկտեմբեր 1958:

ուսմանը ներկայացնելն մեկը, շնորհիւ իր անխոնջ ոգիին ու վարքին» (*):

Ապտիւլ Համիտի անկումէն ետք Աղբ. Սահմանադրութիւնը սկսաւ վերստին գործադրուիլ: Կազմուեցաւ Գաւառական Երեսփ. Ժողով, 42 անդամով, որոնց վեցը կրօնաւոր: Այնտեղ Արսլանպէկ, Տաղ գիւղի հետ ունէր մէկ աշխարհական եւ մէկ կրօնաւոր ներկայացուցիչ: Հաստատուեցաւ գաւառական պիւտճէ որ կը հասնէր 50,000 դրուշի եւ որուն մէջ Արսլանպէկի բաժինն էր 2400 դրուշ (**): Իսկ հին պարաքերը, այսինքն գիւղերուն անվճար տուրքերը իրենց թեմին, որոնք կը հասնէին 439.703 դրուշի, ջնջուեցան:

Այս կարգադրութիւնները եղան 1909ին: Եղան մեծ յոյսերով, սպաւաչի փայլուն ծրագրերներով: Ամբողջ գաւառը կը պատրաստուէր վերելքի եւ յառաջդիմութեան նոր շրջանի մը:

(*) Հայերը Նիկովիդիոյ Գաւառին մէջ:

(**) Նոյն:

ՎԵՐՁԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԸ

1914 Նոյեմբեր 1ին Թուրքիա մտաւ առաջին համաշխարհային պատերազմին մէջ: Ընդհանուր զօրակոչը արդէն յայտարարուած էր. Արսլանպէկի մէջ Օղոստոսի առաւօտ մը զիւղացիները տեսած էին կարմիր զինանշանով ազդարարութիւնը որ զէնքի տակ կը կանչէր բոլոր շափահաս այրերը, մինչեւ 45 տարեկան: Մասնագութիւնը եւ անստուգութիւնը, մանաւանդ վախը, ընդհանուր էին: Արսլանպէկ տուաւ 700 զինուոր որոնք ուղարկուեցան զինուորական մարզանքի կեդրոնները, եւ մեծ մաս մը ասուիի գործարանը:

Հետզհետէ սկսան շրջիլ խուզարկութիւններու, բանտարկութեան եւ աքսորի լուրերը, որոնք աւելի սարսափ կը պատճառէին արու բնակչութեան պարտուած գիւղին մէջ: Շուտով անոնք իրականութիւն դարձան Արսլանպէկի համար ալ: Ամբողջական տեղահանութեանն առաջ իսկ, Արսլանպէկի մէջ աղէտը սկսաւ այն ձեւով որով տեղի կ'ունենար ամէնուրեք Թուրքիոյ մէջ: Ձերբակալուեցան բնակչութեան մէջ աչքի զարնոյ անձերը: Կիրակի օր մը, 1915 Մայիսին Իզմիրէն ոստիկաններու խումբ մը եկաւ Արսլանպէկ: Քիչ յետոյ պահականոց կանչուեցան 11 հոգի. Բարսեղ քհնյ. Թորոսեան, Վասմազպուհ Սերոբեան, Զարեհ Տէր-Կարապետեան, Սահակ Կա-

կարեան, Համբարձում Փըշըճեան, Արշաւիր Վէ-
խեան, Խըմխըմ կամ փեփե Թումա Մելիտոնեան,
գերձակ Խաչիկ Տէր Մարտիրոսեան, Միկրտիչ Վար-
ժապետեան եւ ուրիշ երկու հոգիներ որոնց անուն-
ները չեն պահուած: Ձերբակալուածները տարուե-
ցան Իգմիթ, ուր ոստիկանատան մէջ արդէն բեր-
ուած էին Պարտիզակէն եւ Օվաճրգէն ուրիշ չուրջ
քսան ձերբակալեալներ: Այնտեղ սկսաւ խոշտան-
գումներով եւ նախատինքներով բնդմիջուած հար-
ցաքննութիւն մը որմէ ետք, յաջորդ օրը, ամէնը
զրկուեցան Կէյվէի կայարանը եւ այնտեղէն 6-7
ժամ հեռու գանուող Թարաքը կոչուած ամբողջա-
պէս թրքարնակ գիւղաքաղաքը: Արսլանպէկցիներէն
չ. Փըշըճեան ազատ արձակուած էր, ծանօթ
ըլլալով ոստիկան զօրաց հարիւրապետին. անոր
տեղ զրուեցաւ ուրիշ մը, որպէսզի անխախտ մնայ
11 հոգիներից ցանկը: Իսկ Վուամշապուհ Սերօբեան,
իբր ամենէն «վստանգաւոր»ը դուրս հանուած էր
խումբէն եւ զրկուած գէպի անձանօթ ուղղութիւն
մը: Իր հետքը կը կորսնցնենք մինչեւ իր վերերե-
ւումը Ատանայի մէջ եւ արկածային մահը գինազա-
գարի շրջանին:

Թարաքըրի աքսորականներուն կեանքը անսա-
նելի չէր: Այնտեղ կային նաեւ ուրիշ Հայեր, բեր-
ուած Իգմիթէն, Շալվայէն, Չէնկիլէրէն, Մեծ
Նոր գիւղէն, եւն., բնգամէնը 70-80 հոգի: Լերան
ճամբով Թարաքը 12-13 ժամուան հեռաւորութիւն
ունի Արսլանպէկէն, ուրիշ արտօնութիւն ունէին այցելութեան
գալու իրենց:

Բայց կացութիւնը չուտով փոխուեցաւ: Մերձա-
կայ հայ գիւղերու բնակչութիւնը կը պարպուէր:
Տեղահանուածները կը բերուէին Թարաքըր եւ շըր-

ջակայքի թրքական գիւղերը: Շարաթ մը ետք գար-
ձեալ տեղահանեցին ամէնը ու տարին էսկիշէհիւր:
Անոնց հետ էին նաեւ Թարաքըրի 70-80 աքսորեալ-
ները, որոնց մէջ 11 Արսլանպէկցիները:

Կէյվէի կայարանէն կը տեսնուէին արդէն տա-
րազրեալներու բազմութիւնները: Արսլանպէկցիներ-
ըր անցեր էին քանի մը օր առաջ: էսկիշէհիւրը նշա-
նակուած էր իբր առաջին հանգրուան տարազրեալ-
ներուն, որոնք պիտի տարուէին գէպի անապատնե-
րը: Արսլանպէկի 11 ձերբակալներէն մէկը կ'ը-
սէ. (*) «էսկիշէհիւրի կայարանը հասնելուս տե-
սանք որ շրջակայքը տասնեակ հազարաւոր կա-
պերաներէ կազմուած վրաններ լեցուն են տարա-
զրեալներով: Հայերու աներեւակայլի բազմութիւն
մը նաեւ կայարանին մէջ: Փութով իջանք վակոն-
ներէն ու խառնուեցանք բազմութեան: Ժանտարմ-
ները մեզի փնտուեցին, կ'անգրտանամ»:

Ամէն օր խումբեր ճամբայ կը հանուէին, մեծ
մասամբ հետիոտն, քիչեր երկաթուղիով, որ վճա-
րովի էր: Քաղաքէն կէս ժամ հեռու կը կազմուի
տարազրեալներու կարաւանը որ ունի առնուազն
հինգ քիւմեթր երկարութիւն:

Քանի մը հոգի, հազուագէպ բացառութիւններ,
կրցան փրկուել գթօխքի սահմանուած կարաւաննե-
րէն շնորհիւ կաշառքի եւ ծանօթութիւններու: Այս-
պէս, Արսլանպէկցիներէն Տէր-Կարապետեան ըն-
տանիքը, բազկացած ութը անձէ եւ անոնց հետ ի-
րենց փեսացուն Ս. Կակարեան, որոնք յաջողեցան
խոյս տալ Պոլիս:

(*) Սահակ Կակարեան:

Արսլանյակի տեղահանութենէն առաջ գիւղը եկաւ Իգմիթի ստիկանապետ Իպրահիմ բազմաթիւ զինուորներով, (կը արուն 100, 200 եւ 300 թիւերը)։ Գիւղը պաշարման շղթայի ենթարկելէ ետք տասը զինուորներով Իպրահիմ բարձրացաւ ազգային վարժարանին վերի ընդարձակ սրահը եւ այնտեղ բերել տուաւ երկու քահանաները, Տ. Մկրտիչ Նալպանտեան եւ Տ. Աթանաս Հաճիպետրոսեան։ Կանչել տուաւ նաեւ ինչ որ կրցաւ գտնել գիւղը մնացած ձեռերէն ու կիներէն։ Յետոյ ծեծի, սպառնալիքներու եւ հայհոյանքներու տակ պահանջեց պահուած զէնքեր, փախտականներու հասցէներ։ Կը յիշուին մասնաւորաբար խոշտանգումները Տ. Աթանասի եւ մանկամարդ կնոջ մը, որմէ կը պահանջուէր յայտնել իր ամուսնոյն, Արմենակ Սերոբեանի թաքստոցը։ Այս վերջինը անյայտացած էր ամիսէ մը ի վեր եւ ոչ ոք գիտէր իր տեղը։ Ասուիի գործարանը գտնուող Արսլանյակիցի զինուորազբաւրներէն խումբ մը այդ պահուն վերադարձաւ գիւղ եւ տեսնելով Վրթանէս Թազուրեանը որ թոպահար կը գալարուէր Իպրահիմի առջեւ, զգուշութեամբ գործարան վերադարձաւ։ Ի վերջոյ, տասնեակ մը որսի հրացաններ հաւաքելէ ետք Իպրահիմ հեռացաւ իր մարդոցմով։

Գիտակցելով գիւղին սպառնացող վտանգին, այնտեղ մնացած քանի մը երեւելիներ, որոնց մէջ Թոմաս Թոմասեան, Կարապետ Սերոբեան, այս վերջնոյն հրաւերով ժողով գումարեցին, առաջարկ բերելով ճեղքել պաշարման շղթան, կուսելու կարող գիւղացիներու խումբերով։ Տ. Աթանաս քահանան ընդգլխմացաւ այս ծրագրին որ չգործադրուեցաւ, Մկրտիչ քահանայ Նալպանտեանի հրահանգով, որուն ազդեցութիւնը մեծ էր գիւղին մէջ։

Քիչ յետոյ արուեցաւ Արսլանյակի տեղահանութեան հրամանը։

Թղթակից մը, Յակոբ Արամեան, կը պատմէ․

ԱՐՍԼԱՆՊԵԿԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ (*)

«1915 Յուլիս 18ին, գիշերուան ժամը 7ին, Արսլանյակի գիւղը պաշարեցին 200 զինուորներով։ Շըրջակայ պաշը պողուք թուրքերէն, մօտ հարիւր հօգի եւ Իգմիթի ժանտարմայի գումանտան Իպրահիմ էֆէկանի հսկողութիւն կատարելու համար։ Առտուն, գիւղացիներուն պատուէր եղաւ որ մինչեւ իրիկուն պատրաստ ըլլան, էսկիչէհլը պիտի աքսորուին, քանի մը ամսուան համար եւ նորէն պիտի վերադառնան։ Լացն ու կոծը սկսաւ ժողովուրդին մէջ։ Արդէն էրիկ մարդ չէր մնացած, 700 հօգի զէնքի տակ առնուած էր։ Ամէն մարդ շուարած մնացած էր։ Շըջակայ գիւղերէն թուրքեր եկան եւ մէկ կողմը քառասուն զուրուշի, մէկ կաթի մեքենան 10ը, մէկ անկողինը երկու զուրուշի գնորդ եղան։ «Գուք գիտէք, կ'ըսէին, եթէ այս գնով հիմա չտաք՝ վազը առանց զրամի պիտի տաք»։ Գիւղէն գուրս ելլողը հրացանի բռնեցին։ Վերջապէս ամէն մարդ ստիպուեցաւ վերմակ մը, քանի մը հաց, մէկ երկու կտոր հագուստ առնելով՝ պատրաստուել։ Իրիկունը տեղահանութիւնը սկսաւ։ Ժողովուրդը գիւղէն գուրս դաշտ հանեցին։ Տուները մնացողները ծեծելով՝ գուրս հանուեցան։ Կերպասի գործարանին մէջ գտնուող Արսլանյակիցի հայ զինուորներ, 90 հօգի եւ Սապանճայի, Տէրպէնտի ամէլէ թաղուրիին հայ զինուորները եկան իրենց ընտանիքներուն քովը։ Աստիկանապետ Իպրահիմ վախնալով որ զէպք մը

(*) Ժամանակ, Կ. Պոլիս, Նոյեմբեր 7-20, 1918. p. 3360։

կը պատահի, այս հայ զինուորներէն 40 հոգի ձեր-
րակալեց, զպրօցին մէջ բանտարկեց եւ անոնց վը-
րայ սուրհմուտը զինուորները պահակ դրաւ: Տարա-
գրեալները ճամբայ ելան եւ Տէրպէնտ հասան: Եր-
կաթուղիի տոմսակի համար 40ական դրշ. գրամ
անուեցաւ եւ այսպէս շուրջ 700 ոսկի հաւաքուե-
ցաւ: Երկաթուղիով չգացողը հեախոան պիտի եր-
թար շատ նեղութեամբ եւ ոստիկաններու հսկողու-
թեան տակ: Յաջորդ առաու կառախումբը եկաւ:
Մէջը կային Փրանսացի ընդծովեայի 50ի մօտ գե-
րիներ: Ֆրանսացի սպայ մը պատուհանէն դուրս
նայեցաւ եւ տարագրեալ ժողովուրդին խեղճութիւ-
նը տեսնելով՝ սկսաւ արտասուել: Ֆրանսերէն քա-
նի մը բռտեր ալ ըսաւ: Ասոր վրայ պահապանը ե-
կաւ արգիլեց ու գայն վազոնէն ներս հրեց: Հայերը
փոխադրող կառախումբ մը եկաւ: Կայարանին պաշ-
տօնեան, հայ մը, Նորհատ, էՓ. ազգարարեց որ
զինուորները չմեկնին: Անոնց տոմսակ չտուաւ: Մե-
զի ալ պատուիրեց որ չմեկնինք. բայց պարտաւոր-
ուեցանք մեկնիլ:

Արսլանպէկի մէջ ոստիկանապետ Իպրահիմ
տուները բանալով՝ մէջը եղած դոյքերը բանտար-
կուած հայ զինուորներուն ձեռքով եկեղեցի փո-
խադրել կուտայ բանութեան տակ: Յետոյ եկան Ու-
զուն Թարլայի միւստիքը, խումբ մը չէրքէզ աւա-
զակներ, 200 կառքերով եւ գիւղը գանուած բոլոր
արժէքաւոր բաները առին տարին: Իսկ ոստիկանա-
պետը եկեղեցին կը բանայ, կը կողոպտէ արծաթե-
ղէն, ոսկիէ բոլոր իրեղէնները կ'առնէ կը տանի:
Յետոյ կարգը կուգայ շրջակայ թուրք գիւղացիներ-
ուն. անոնք կը խուժեն եւ ամբողջ Արսլանպէկը
թալանի կուտան: Կը մնան դաշտերը մնացած խո-
զակը, ծխախոտը եւ եգիպտացորենը: Իրը թէ ա-

ճուրղով կը ծախուին: Գրամին կէսը միւստիքը կը
գրգանէ, կէսը Յանձնախումբը: Գալով հսկողու-
թեան տակ քառասուն հայ զինուորներուն՝ անոնք
վեց օր մնալէ ետք՝ կերպասի գործարան կ'առաջ-
նորդուին եւ հազարապետին կը յանձնուին: Արս-
լանպէկէն կէս ժամ հեռու Քարաշալլըքի հօճան՝
Տաւուտ ըսած է թուրքերուն. «Եթէ հայերուն կող-
մէ ընդդիմութիւն ըլլայ՝ սպաննեցէ՛ք, քանդեցէ՛ք,
վառեցէ՛ք, պղծեցէ՛ք, ամէն արտօնութիւն արուած
է ձեզի»:

Էսկիչէհիւր առաջին եւ ժամանակաւոր հանգ-
րուան մըն էր: Այնտեղէն Արսլանպէկցիներու կա-
րաւանը տարուեցաւ զէպի անապատները, ինչպէս
հարիւրաւոր ուրիշներ, Հայաստանի, Անատօլուի,
Րումէլիի գիւղերէն ու քաղաքներէն: Հալէպ, յետոյ
Պաղատ, Մուսուլ հաւաքուած հարիւր հազարաւոր
տարագրեալներու հեա Արսլանպէկցիները քշուեցան
Գողգոթայի հանրածանօթ տանջարանները, Մում-
պիճ, Պապ, Մաարա, Մէսքէնէ, Րաքահ, Րէս-իւլ-
Այն, Տէր-էլ-Չօր, ուր գրեթէ ամբողջութեամբ
բնաջնջեցին զանոնք ջարդը, հիւանդութիւնները, ա-
նօթութիւնը, կլիման:

Գիւղը ամայացած էր, ինչպէս շրջակայքի բո-
լոր հայ գիւղերը: Սոտը կը բուսնէր սալարկուած
չուկային մէջ, ուր ատեն ատեն կը շրջէին ոստիկան
զինուորները:

Բայց հետզհետէ անմարդարնակ տուները սկսան
ընդունիլ գիշերային այցելութիւններ: Հեռզհեռէ
հրացանաձգութիւններ սկսան պատուել մօտակայ
լեռներուն եւ անտառներուն լուսութիւնը: Սոմբեր
կազմուած էին երիտասարդներէ, զինուորական փա-
խըստականներէ, կարուաններէն խուսափածներէ:
Պարտիզակէն, Օվաճըզէն, Արսլանպէկէն, Կէյվէն

մարտիկներ քաջուած էին լեռը, ուր կ'ապրէին քա-
րայրներուն եւ անձաներուն խորը: Երբեմն կ'իջ-
նէին գիշերը գաղանարար, փնտռելու համար զէնք
ու պարենաւորում իրենց ծանօթ պահեստներու
մէջ: Օգնութիւն կը գտնէին բարեկամ յոյն զիւզերու
մէջ: Չերքէզ մը, Աթէշ Մէհմէտ պէյ, որ ծանօթ
էր իրր հայոց բարեկամ, կուտողներուն կը հայ-
թայթէր զէնք եւ մթերք: Իր տան մէջ, որ գտնուէր
չերքէզ զիւզէն հետու, ծառախիտ պարաէզներու
մէջ, ապաստան տուած էր Արսլանպէկչի Օղլիկենց
Նիկողոսին, որ հայ խումբերուն կը հաղորդէր օր-
ուան լուրերը: Աթէշ Մէհմէտ յետագային սպան-
նուեցաւ քէմալականներուն կողմէ:

Չորս տարի խումբերը ապրեցան դժնդակ
կեանք մը: Չմբան խիստ ցուրտերուն դէմ կը պա-
տրապարուէին լեռներու ձերպերուն ծոցը, իրենց
ծանօթ թաքսոցներուն մէջ: Իւրաքանչիւր կուտող
իր զէնքերէն զատ իր հետ ունէր իր պաշարը: Վրճ-
ուած էին սուղ ծախել իրենց կեանքը: Նախապէս
18-20 հոգի, հետզհետէ բազմացան հասնելով 100-
120 հոգիի: Կը յիշուին մէկ քանիին անունները,
այնպէս ինչպէս ճանչցուած էին իրենց ընկերներէն.
Օվաճըզէն Վահան Ժամկոչեան, Հանելուկ, Արու-
թիկ, Արտաշ, սուրհանդակ Մարտիկ, Պարտիզակէն
Չաւուշ, Տէօնկէլէն Մօրուք (Ռուբէն Չօրպաճեան),
Արսլանպէկէն Սուտի Կարան, Նիկողոս, Էօնէանց
Կարան, Պարթև Ստեփանեան, Յարէթ, Շուշանին
Արթինը, Էօթօենց Օննիկը, Ժամկոչենց Ղազարը:
Ասուիի գործարանին հայ զինուորներէն հինգ հոգի,
Կարապետ Եանթըրեան, Մկրտիչ Այթունեան, Պօ-
ղոս Շիրինեան, Մկրտիչ Եօքարրեան, Երուանդ
Փափաղեան խոյս տալով լեռ ելան:

Բայց ամենէն վառ յիշատակը ձգած են Օվաճըզ-

ցի Տօնիկ (Տօնիկ Տօնիկեան), վարպետ նշանաուու,
եւ Թորոս Թորոսեան: Այս երկու խմբապետները 4
տարի առաջնորդեցին, հրահրեցին իրենց ընկերնե-
րը, զեկալարեցին կռիւները: Ընդհարումները ան-
պակաս էին մեկուսացեալ զինուորներու, Լազերու
եւ Չերքէզներու, ոստիկան զինուորներու հետ: Հա-
յերը որոնց համար գաղտնիք չունէին իրենց լեռնե-
րուն եւ անտառներուն կիրճերը եւ ձորերը, ճամբա-
ները եւ թաքսոցները, կը մնային անյայտ եւ քիչ
կորուստ տուին: Երբեմն բախումները կը տեւէին
ժամեր, ինչպէս Օրթա Տիլիի կռիւը, ոստիկան զին-
ուորներու եւ Լազերու հետ, որոնք ստիպուեցան
փախուստ տալ ձգելով զիակներ: Կը յիշուին նաև
Սապանճայի վրայ զիշերային յարձակում որ վեր-
ջացաւ լուսածագին, երբ Հայերը հետացան առանց
կորուստի:

Քէլ-թէլիէի ստորտը ծառախիտ վայրի մը մէջ
տեղի ունեցաւ բուռն ընդհարում մը ոստիկան զին-
ուորներու հետ որու ընթացքին թշնամի գնդակէ մը
սպաննուեցաւ Հանելուկը, որ իրր պահակ կը սպա-
սէր իր ընկերներէն հետու: Խրամի մը մէջ ապաս-
տանած հայերը գնդակներու տեղատարափի մը են-
թարկեցին ոստիկանները որոնք երկար զիմպրու-
թենէ մը ետք անհետացան: Այնտեղ մահացու կեր-
պով վերաւորուեցաւ նաև Տէօնկէլցի Մօրուքը:

Խումբէն քանի մը հոգի, որոնց մէջ Պարթև
Ստեփանեան, չգիմանալով լեռներու տաժանելի
կեանքին, կրցան գաղտնի ճամբաներով հեռանալ ու
յրուիլ Պոլսոյ, Էսկիշէհիբի, Գոնիայի մէջ:

Հայ մարտիկներուն մեկուսացումը բացարձակ
չէր: Վերջին երկու տարիներուն ընթացքին կրցած
էին կրպ հաստատել կորիզի մը հետ որ կազմուած
էր Հայտար Փաշայի բժշկական համալսարանի հայ

ուսանողներուն մէջ որ իր կարգին յարաբերութեան մէջ էր մինչև Հալէպ ճամբորդող երկաթուղիի հայ պաշտօնեաներուն հետ որոնք կը հանդիպէին հայկական խրատիներու: Այսպէս է որ Նիկոմիդիոյ մարտիկներէն քանի մը հոգի յաջողեցան խոյս տալ դէպի Կ. Պոլիս, առաջնորդութեամբ Սուրհանդակ Մարտիկի եւ սպաստան դռնել Գառքիւղի մէջ ստեղծել Կարպիսի տունը: Այս շարժումները ուշադրութիւնը գրաւած էին ստախանութեան որ խուզարկեց Կարպիսի բնակարանը, բայց փախստականները կըրցած էին առնելն անյայտանալ Հայտար – Փաշայի թրքական զերեզմանատան մէջ եւ յաջորդօրը վերադառնալ իրենց լեռները:

Մղձաւանջի օրերը հասան իրենց վախճանին: Թուրքիա պարտուած էր: Ձինապազարը ստորագրուած էր Մուեարսի մէջ եւ Նիկոմիդիոյ լեռներէն հեռագիտակը ցոյց կուտար Մարմարայի դաշնակից նաւարաթինէն մաս մը որ խարսխած էր Իգմիթի առջեւ:

Լեռան մարտիկները իջան իրենց դիւզերը: Բանուորական վաշտերու մէջ ծառայող Արսլանպէկցիները արդէն տէր գարձած էին իրենց ծննդավայրին: Անապատի տարազրեաններէն քիչ թիւով վերապրողներ հեռոճեռէ վերադարձան: 1918ին իրենց դիւզին մէջ հաւաքուած կը դանուէին շուրջ 500 Արսլանպէկցիներ: Ասոնց մէջ էր Բարսեղ քահայ. Թորոսեանը, իսկ Արսլանպէկի միւս երկու քահանաները, Աթանաս Տէր Յովհաննէսեան–Հաճիպետրոսեան եւ Մկրտիչ Նարպանտեան մեռած էին տարագրութեան ճամբուն վրայ: Թէոդիկ նահատակ հոգեւորականներու նուիրած իր հասարկին մէջ կ'ըսէ թէ Կէտիկ–Փաշայի (Կ. Պոլիս) քահանաներէն Ներշէ Այվազեան տարագրութեան միջոցին էրէյ-

լիի մէջ աւսած է «Արսլանպէկի քահանաներէն Տ. Աթանաս Տէր Յովհաննէսեանը՝ միշտ ծեծի ենթակայ (որ Միջագետքի անապատներուն մէջ կը քեց մահկանացուն) եւ Տ. Բարսեղ Թորոսեանը (Մուսուլ սպաստանած, այժմ վերապրող)» (*): Այս վերջինը մեռաւ Ամերիկայի մէջ: Տարագրութեանէն վերադարձած էր նոյնպէս Նիկոմիդիոյ առաջնորդ Մաարք. Յովակիմեանը:

Վերադարձողներուն մէջ յարաբերաբար մեծ թիւ կը ներկայացնէին բանուորական վաշտերու ծառայածները: Այդ պատճառով ալ վերապրող Արսլանպէկցիները մեծամասնութեամբ այրեր էին: Իւրաքանչիւրը տիրացաւ իր եւ իր ընտանիքին ստացուածքին: Դաւթեց Ստեփանը (Հաճի Ուստա) եւ Քիւրթողլու Մկրտիչ (Մկրտիչ Ալթունեան), դիւզապետ կարգուելով կը կարգադրէին ինչքերուն վերադարձը: Թուրքեր եւ քանի մը յոյներ որոնք տեղաւորուած էին հայերու սեփականութիւններուն մէջ, հեռացան: Իրենց ծննդավայրը եւ իրար վրայն ուղ Արսլանպէկցիները ողջագուրուեցան, սարքեցին խնդութիւններ, պանծացուցին քանի մը տասնեակ հերոսները, Տօնիկը եւ Թորոսը որոնք լեռներուն մէջ դիմացած էին տագնապի օրերուն:

Բայց Արսլանպէկցիներուն փորձութիւնները վերջ գտած չէին: Մայր կուտար քէմալական շարժումը: Դաշնակիցներուն Պոլիս մուտքէն ետք Նիկոմիդիոյ գաւառը կը դանուէր անյլիական զրաման դօտիին մէջ: Աւելի ետքը յունական բանակը եկաւ տարածուել Սապանճա–Կէյլէ շրջանը: Յունական ջոկատ մը հաստատուած էր ասուիի գործարանին շրջափակին մէջ: Բայց չեւքէզ, լազ հրոսա–

(*) Թէոդիկ Գողգոթա, էջ 42, 1921: Տպագրութիւն Անթրիաս, 1966:

խումբերու արչաւանքները, առաջնորդուած քէմա-
լական գինուորներէ, յաճախակի կը դառնային:
Անգլիական նաւատորմը Իզմիթի ծովածոցէն ուժա-
կոծեց ասուիի գործարանը, նախքան յոյներուն
զայուստը, մեծ վնաս պատճառելով շինութիւննե-
րուն: Կացութիւնը պահ մը հանդարտեցաւ, բայց
թրքական յարձակումները շուտով վերսկսան: Վե-
րականդնած հայկական գիւղերուն պաշտպանութիւ-
նը անհրաժեշտ կը դառնար:

Հայերը իրենց կարգին կը յարձակէին թրքա-
կան եւ լազ գիւղերու վրայ, գերի կը վարէին կաս-
կածելիները որոնք վտանգաւոր կրնային դառնալ:
Արսլանպէկցիները իրենց գիւղը բերած եւ բանտար-
կած էին Լազեր, առ ի զգուշութիւն:

Քէմալական կանոնաւոր զօրքին յառաջնադա-
ցումը հետզհետէ կը շեշտուէր եւ կը սաստկանար:
Իրական ճակատ մը ստեղծուած էր յունական բա-
նակին եւ քէմալական ուժերուն միջեւ: Անգլիական
պաշտպանութիւնը կը տկարանար: Մեծ արգիւնք
չէին տար Արսլանպէկցիներու օդնութեան գիմում-
ները Իզմիթի Անգլիացիներուն մօտ, որոնք «Լոն-
տոնէն հրահանգի կը սպասէին»:

Քէմալական զօրախումբ մը, որ կանխաւ գիրք
բռնած էր Ուզունպէյ եւ Հասան փաշա թրքական
գիւղերուն միջեւ, շրջապատուած թուրք, լազ, շեր-
քէզ հրոսակներով, 23 Յուլիս 1920ին յարձակում
գործեց Արսլանպէկի վրայ: Տեղի ունեցաւ ճակա-
տագրական կռիւ մը: Հայերը ի դուր սպասեցին օդ-
նութիւն Իզմիթի Անգլիացիներէն, որոնք ասուիի
գործարանին Յոյներուն եւս հրահանգ տուած էին
չմիջամտել: Հայերը կուուեցան յուսահատօրէն, ան-
հաւասար ճակատումի մը մէջ: Վերջին մարտիկնե-
րէն խումբ մը կրցաւ ճեղքել պաշարման շղթան եւ

անցնիլ գիւղին արեւելակողմը, Խորասան կոչուած
վայրը: Տօնիկ, աասնեակ մը բնկերներով յաջողե-
ցաւ ուղղուել ասուիի գործարանին մօտ Թամուլու
փոսը ուր վերջին օրհասական կռիւ մը մղեց մէկիկ
մէկիկիկ զնդակահարելով խուժող եւ մօտեցող թշնա-
մին: Կուուեցաւ մինչեւ վերջին զնդակը եւ նահա-
տակուեցաւ իր բնկերներուն հետ:

Թուրք խուժանը կրակի տուաւ եւ սուրակի վե-
րածեց Արսլանպէկը:

Վերջ գտած էր Արսլանպէկի երեք հարիւր տա-
րուան պատմութիւնը:

Անոնք որ կրցած էին փախչիլ ապաստանեցան
Իզմիթ: Այնտեղէն Պոլիս գիմում կատարեցին փո-
խազրուելու համար Հայաստան, ուր կազմուած էր
Հայաստանի հանրապետութիւնը:

Մեկնումի արտօնութիւնը հասաւ մօտ երեք ա-
միս ետք: 1920 Հոկտեմբերին 232 Արսլանպէկցիներ
Իզմիթի քարափէն ճամբայ ելան զէպի Պաթում,
յունական «Էլէֆթերիա» շոգենաւով, Յովակիմեան
արք.ի պահպանիչով:

Հայաստանի մէջ իրենց բնակութիւնը երկա-
րատեւ չեղաւ: Հայեւթուրք պատերազմը, Կարսի
անկումը, ախրող թշուառութիւնը պատճառ եղան
որ Արսլանպէկցիները որոշում տան դարձեալ վե-
րադառնալու Թուրքիա, ուր ցրուեցան Պոլսոյ ար-
ուարձաններուն մէջ:

Քէմալականներու Պոլիս մուտքէն ետք, Արս-
լանպէկի մնացորդներուն մեծ մասը զնաց ապաս-
տան գտնել արտասահման, Յունաստան, Պուլկա-
րիա, Ֆրանսա, քանի մը հօգի՝ Ամերիկա:

Բայց այսօր վերապրող Արսլանպէկցիները եւ

անոնց զաւակները մեծ մասամբ կը գտնուին Հայաստան ուր մեկնեցան զլիաւորաբար 1947ի եւ անկէ առաջ տեղի ունեցող ներգաղթներուն շնորհիւ:

Այսօր աշխարհի մէջ զբուսած աւելի քան երեք հարիւր Արսլանպէկցիներ, մէկ տասներորդը Արսլանպէկի բնակչութեան, Հայաստանէն զատ կ'ապրին զբուսած զանազան վայրերու մէջ, բայց մանաւանդ Կոստանդնուպոլիս, Ֆրանսա, Յունաստան, 10-20 բնտանիքներու խումբերով: Հայաստան ներգաղթած Արսլանպէկցիներու ցանկ մը, զոր կազմած է Մկրտիչ Ալթունեան, կը պարունակէ հետեւեալ անունները.—

- 1.— Ալթունեան Մկրտիչ Գրիգորի
- 2.— Ալթունեան Արմենակ Գրիգորի
- 3.— Ալթունեան Պօղոս Յովհաննէսի
- 4.— Ալթունեան Մկրտիչ Երուանդի
- 5.— Ալթունեան Սիրանոյշ Պետրոսի
- 6.— Ալթունեան Աղանի Կարապետի
- 7.— Կակարեան Գէորգի Նազարէթի
- 8.— Կակարեան Սեբովբէ Նազարէթի
- 9.— Տօնկէլեան Գրիգոր Տիգրանի
- 11.— Պէրպէրեան Օննիկ Պօղոսի
- 12.— Պէրպէրեան Օննիկ Պետրոսի
- 13.— Խաչմանեան Յովհաննէս Պետրոսի
- 14.— Աբիկեան Ստեփան Արմենակի
- 15.— Զաքարեան Մատթէոս Մկրտչի
- 16.— Փափագեան Յովհաննէս Պօղոսի
- 17.— Փափագեան Միհրան Սարգիսի
- 18.— Փափագեան Յակոբ Պետրոսի
- 19.— Փափագեան Յովնան Սարգիսի
- 20.— Փափագեան Երուանդ Արշակի
- 21.— Փափագեան Սիմա Միհրանի

- 22.— Մանիկեան Յակոբ Տօնիկի
- 23.— Մանիկեան Ղազարոս Սուփիասի
- 24.— Տօլմանեան Մաննիկ Տօնիկի
- 25.— Արապանեան Գրիգոր Անդրանիկի
- 26.— Արապանեան Սարգիս Յովակիմի
- 27.— Վահանեան Արթաքի Պօղոսի
- 28.— Քէօսէեան Գրիգոր Յարութի
- 29.— Քէօսէեան Սարգիս Յարութի
- 30.— Քէօսէեան Նիկոլոս Հայրապետի
- 31.— Քէօսէեան Հայրապետ Մկրտիչի
- 32.— Քէօսէեան Փիլիպոս Յակոբի
- 33.— Քէօսէեան Կիլիգար Սմբատի
- 34.— Քէօսէեան Մատթէոս Գրիգորի
- 35.— Թագուրեան Կարապետ Պետրոսի
- 36.— Թագուրեան Տէր Լեւոն Պօղոսի,
(Վրթանէս)
- 37.— Թագուրեան Վահրամ Պօղոսի
- 38.— Տէօնկէլեան Գրիգոր Միհրանի
- 39.— Թէֆնէնեան Նշան Միհրանի
- 40.— Եսայեան Եսայի Սարգիսի
- 41.— Եսայեան Գեղեցիկ Կարապետի
- 42.— Մելիտոնեան Պետրոս Արմենակի
- 43.— Մելիտոնեան Գրիգոր Արմենակի
- 44.— Ադամեան Արմենակ Պօղոսի
- 45.— Ճոկայեան Խաչիկ Վարդանի
- 46.— Ճոկայեան Պարգեւ Նշանի
- 47.— Սրայեան Խաչիկ Յակոբոսի
- 48.— Կիլէսէրեան Վահրամ Յարութիւնի
- 49.— Կիլէսէրեան Երուանդ Պետրոսի
- 50.— Համբարձումեան Խաչեր Համբարձումի
- 51.— Թովմասեան Սահակ Միհրանի
- 52.— Թովմասեան Թովմաս Պարգեւի
- 53.— Իննէեան Ահարոն Մկրտչի

- 54.— Վէիսեան Միմաս Միիդատի
- 55.— Վէիսեան Իսրայէլ Սարգիսի
- 56.— Վէիսեան Ադամ Մանուկի
- 57.— Գագանեան Հրանդ Սարգիսի
- 58.— Հագգալմագեան Արա Սարգիսի
- 59.— Հագգալմագեան Յարութիւն Սարգիսի
- 60.— Հագգալմագեան Յովակիմ Միմասի
- 61.— Հագգալմագեան Խաչեր Պետրոսի
- 62.— Հագգալմագեան Ադանի Կիրակոսի
- 63.— Զալեան Յակոբ Խաչերի
- 64.— Ժամկոչեան Երուանդ Միսաբի
- 65.— Ժամկոչեան Կարապետ Խաչերի
- 66.— Պաղտիկեան Վարդերես Միմասի
- 67.— Գումրուեան Նագարէթ Արտաշէսի
- 68.— Գումրուեան Նագարէթ Սարգիսի
- 69.— Գումրուեան Գրիգոր Սիրականի
- 70.— Ղունտուրանեան Կարապետ Սիրականի
- 71.— Փիլիկեան Պարոյր Կարապետի
- 72.— Եանքրեան Միմաս Խորէնի
- 73.— Եանքրեան Կարապետ Յովակիմի
- 74.— Փիլիպոսեան Խաչիկ Փիլիպոսի
- 75.— Շիրիեան Սահակ Խաչերեսի
- 76.— Պոյանեան Բաբգէն Խաչիկի
- 77.— Գարապօղոսեան Նշան Կարապետի
- 78.— Նալպանտեան Մկրտիչ Համբարձումի
- 79.— Նալպանտեան Ադանի Յարութիւնի
- 80.— Արիսեան Միսաբ Արիսի
- 81.— Տէր-Կարապետեան Տֆթ. Մկրտիչ
Արտաշէսի

*Հայաստանի եւ արտասահմանի մէջ այսօր ապ-
րող բնիկ Արսլանազէկցիներուն թիւը եթէ կարելի է
հաշուել մօտաւորապէս երեք հարիւր, իրենց կազ-*

*մած ընտանիքներով, գաւակներով եւ թոռներով,
Արսլանազէկցիներու այսօրուան սերունդը կ'անցնի
հաշարը:*

*Հայաստանի մէջ վերահաստատուած Արսլան-
ազէկցիներուն թիւը կը հասնի 81ի ըստ մեր ցան-
կին որ ապահովաբար ամբողջական չէ: Անոնք
որ մեզմէ զրեթէ չորս դար առաջ խոյս տալով
իրենց բնակավայրէն հեռուոր Բիւթանիոյ մէջ
հիմնեցին Արսլանազէկը՝ աւելի բազմամարդ չէին:
Փայլուն եւ ողբերգական արկած մը եղաւ անոնց ե-
րեք դարերու գաղթականութիւնը, որուն անխոնջ
մնացորդները իրենց նախնեաց հողին վրայ վերս-
կըսած են նոր գարաշրջան մը, աւելի վաղուն եւ
աւելի բեղմնաւոր:*

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Գրեց՝ ՎԱՐԴԱՆ ԵՂԻՇԷՅԱՆ

Գ. Ֆէնէրճեանի կողմէ ձեռնհասօրէն խմբագրուած եւ Արսլանպէկի երախտաւոր զաւակներէն Գրիգոր Թումասեանի բարոյական ու նիւթական անվերապահ աջակցութեան շնորհիւ լոյս տեսած այս պատմագիրքը կարգալէ ետք, մարդ կը տարուի մտածելու թէ հայ անունը կրող ժողովուրդը, իր բնաշխարհի կրանիթեայ լեռներուն նման տոկուն ու անսասան՝ հոգեկան նկարագրի ինչ տեսակ անհատնում պաշար մըն է ունեցեր որ իր պատմութեան ամենազօնգակ շրջաններուն իսկ չէ յուսալքուեր, չէ տկարացեր եւ ամէն տեսակ ազդակործան զարհուրելի փորձանքներէ ետք, դտեր է դարձեալ իր հոգիի պայծառութիւնը:

Սոսրանուտները բուրաստանի, ամուլ ու չոր լեռ մը հայրենական գիւղի վերածող Արսլանպէկցիին աշխատասիրութիւնը եւ աւօրեայ հացը իր արդար քրտինքով վաստկելու առաքինութիւնը, այս համեստ գիւղին լաստակերտը մնացին մինչեւ վերջ:

Այս պահուս միտքս կուգայ Գ. Վարուժանի

«Կարմիր հողը», որուն առաջին տունը հոս փոխադրելով, կը կարծեմ թէ պիտի կրնամ բանաստեղծին հանճարեղ միտքը բարեպատեհ այժմէութեան վերածել:

« Գրասեղանիս վրայ սա
Սկաւառակին մէջ կայ բուռ մ'հող բերուած հոն
Հայրենիքի դաշտերէն
Նուէր է ան: — Ձայն ինձ ձօնողը կարծեց
Թէ կուտար մեր պապերունն ալ միասին »:

Անտարակուսելիօրէն Արսլանպէկը հայրենի դաշտերէն բերուած բուռ մը հողն էր որուն մէջ, դարձեալ Վարուժանի բառերով «ազգ մը կար, ազգ մը հին, որ իր վրայ շողացող այգուն մէջ, հողի բնատուր մարմնոյն տակ» մեզի կը խօսէր:

Բիւթանիոյ գաւառին մէջ ծագկած բոլոր հայ գիւղերը, միեւնոյն դժբախտ ճակատագիրէն հալածեալ վտարանդիներու ճիգերուն ու ջանքերուն շնորհէ է որ գոյատեւած են մինչեւ մեր օրերը:

Ապահովարար Խամսայի Մելիքութիւններուն իսպառ ջնջուելէն ետքն է որ, ենթադրաբար, կարգ մը Ղարաբաղցիներ ապաստան փնտռած ըլլան Պրուսայի կամ Նիկիոմիդիոյ շրջանները բնակող թուրքերու մօտ, որոնք գրկաբաց կ'ընդունէին զանոնք, առանց քինախնդրութեան, գրեթէ համալիրանքով եւ ուրախութեամբ: Այս պարագան ապահովարար թուրքերու հայասիրութեան մէկ ապացոյցը չէր կրնար նկատուիլ: Ինչու որ անոնց փնտռածը միմիայն աշխատող ձեռքեր ըլլալով, հայրերուն հաւատարմութիւնը մեծապէս կը դիւրացնէր սուստական թուրքին գործը: Անիկա իր մանչ գաւառներէն չէր կրնար օգտուիլ, պարտադրաբար ա-

նոնք ստիպուած ըլլալով բանակին մէջ անցնելու իրենց կեանքին լաւագոյն օրերը: Դեռ այդ կողմերը մնացած Յոյներէն ալ չէին կրնար օգտուիլ, որոնք եթէ թուրքին մօտ աշխատէին իսկ, արդիւնաւոր դորձ մը կատարելու տեղ, աւելի շատ խափանարարութիւն կը փորձէին: Որովհետեւ իրենց երկիրը տաճիկներու կողմէ բռնադրաւուած ըլլալու դատն իրողութենէն, մշտանորոգ ատելութիւն մը կը սնուցանէին անոնց հանդէպ:

Ահաւասիկ այս քիչ մը տարականոն (բարատօքսալ) զրութիւնը, նպաստաւոր առիթ մը կը համարուէր այն հայերէն, որոնք փախչելով Լէնկիթիմուրի, ճինկիզլիսանի, Պարսիկներու անբեւակայելի խժգժութիւններէն եւ հարստահարութիւններէն, կը լքէին աուն, տեղ, գիւղ կամ քաղաք եւ կ'ուղղուէին դէպի արեւմուտք:

Արսլանպէկը արգասիքն էր ուրեմն պատմական դժբախտ անցքերու եւ կեանքի, պատիւի, ինչքի ապահովութիւն գտնելու ցանկացող խումբ մը վտարանդի Հայերու:

Յետագայ դարերուն, եթէ ինքնաբաւ զարձած Արսլանպէկ ցոյց տուաւ շեշտուած անհատականութիւն մը ու փարած մնաց իր լեռներուն, գաճաճ անտառներուն, վարուցանի գրեթէ անյարմար սակաւ հողերուն՝ թուրքերու կողմէ նախկին բարեացակամ օժանդակութիւնը կորսնցուց սակայն: Եթէ Բիւզանդիոնը իր աննախընթաց անճարակութեամբը գրեթէ լքեց իր երկիրը ներխուժող Սելճուկներուն կամ Օսմանցիներուն, անոնք ալ, այսինքն թուրքերը ուրիշներու բարգաւաճ երկիրը բոնօրէն գրաւելէ ետք, երբ վերջնականապէս համոզուեցան իրենց բացարձակ գերակայութեան՝ փոխեցին իրենց սկզբնական նպաստաւոր քաղաքականութիւնը

հայերուն հանդէպ ու վարուեցան անոնց հետ իրրեւ պատանդներու, իրրեւ սեւ աշխատանք կատարող գերիներու: Մանաւանդ 19րդ դարուն ոռուսեւթրքական պատերազմներու հետեւանքով չարաչար պարտած թուրքերը երբ իրենց կորսնցուցած հողերուն լազ, չէրքէզ, ապագա, կիւրծի, քիւրա խլամ բընակչութիւնը փոխադրեցին Փոքր Ասիոյ արեւմտեան կողմերը եւ բնակեցուցին հայերէ բազկացած զիւղերու շրջակայքը՝ սկսաւ գուլումներու եւ բրոնադրաւումներու նոր ժամանակաշրջան մը, որ տեւեց մինչեւ վերջնական քայքայում:

Բայց դժբախտութեան մէջ թրծուած, հայու առհաւական տոկուն նկարագրով ջրդեղուած Ասլանպէկցին եթէ չէր կրնար արգարութեան ձայնը լսելի ընել աւլ յելուզակային բարքերով, այլ մանաւանդ «անհաւատ կեալուք»ները առելու մոլուցքով տարուած խլամներուն՝ գրեթէ առանց բացատրութեան իր արու կարիճ դաւակները, իրենց փոխադարձելու արիութեամբ կը յաջողէին յարգանք կամ վախ պատճառել այդ կարգի յափշտակիչներուն ու սմքեցնել անոնց գոտղութիւնը, քառասուն օր ջուր չտեսած բանջարներու պէս...: Երբ մանաւանդ շրջակայքի չէրքէզները, աչքերնին անկած Ասլանպէկցիներու կայտառ ու լաւ խնամուած ձիւերուն, կը յաջողէին երբեմն գողնալ անոնցմէ քանի մը հառ՝ տարին չլրացած սակայն, նոյն այդ չէրքէզներուն ախոռներէն կամ արօտաւլայրերէն կըրկնապատիկ համբանքով ձիւր կ'անհետանային, թուշելով իրենց ետեւ անլուծելի եւ խորհրդաւոր հանելուկ մը միայն...:

Արսլանպէկցին իր խիզախութեամբը եւ ապօրինութիւն մը իր ըմբռնած եղանակով լուծելու

քաջութեամբը, եթէ ձգած էր յարգանք պարտադրող անուն մը ոչ-քրիստոնէայ տարրերուն մօտ, այլամերթ չէր սակայն իր ցեղակիցներուն հանդէպ: Հանրաձայնութ էր իր հիւրասիրութեամբ եւ իրերօգնութեան ոգիով: Գիւղական շրջանակէն գուրս ազգային դժբախտութեան մը հետեւանքով (Ջարդ, երկրաշարժ, փոթորիկ, սողուում), երբ հայութիւնը դիմէր իրենց, ոչ ոք կ'ըլլար յուսախար եւ ոչ ոք կը վերադարնար ձեռնունայն:

Այդ շրջաններու միւս հայ գիւղերն ալ եթէ ենթակայ էին եկուոր կամ տեղացի խլամներու խոր ատելութեան՝ Արսլանպէկցիները կը գտնուէին ցանկին գլուխը: Բայց ինչպէս ըսուեցաւ՝ տկարութեան անձանօթ իրենց կամքի ուժը յազթահարեց բոլոր խօշնդոտները ու մնաց ազգին պատիւ բերող բարձրութեան մը վրայ:

Բնական որեւէ աղէտի մը առջեւ ալ միշտ բարձրահողի են մնացած անոնք: Ասլանպէկցիէն զատ ո՞վ պիտի կրնար երկու զարհուրելի հրդեհներու պատճառաւ գիւղին ամբողջութեան մոխիր դառնալը տեսնելէ ետք, չյուսալքուիլ բնաւ ու թեւերը սոթթելով դարձեալ հայրենական օճախը վերաշինելու քաջութիւնն ունենալ: Մենք կը կարծենք որ եթէ նոյն աղէտը պատահած ըլլար ուրիշ գիւղերու, մնացողները պիտի ցրուէին ու պիտի ձուլուէին զրացի հայ գիւղերու մէջ եւ իրենցմէ հեռք մը դանել անկարելի պիտի ըլլար: Ասլանպէկցին շմտածեց ընել այդ փոքրոգութիւնը, փարած մնաց իր լեռներուն, անտառներուն, գերեզմաններուն, ուխտատեղիներուն, թուխմանուկ ազրիւրներուն եւ ապացուցուց որ ինք իր վրայ վստահութիւն ունեցող, ինք իր հնարաւորութիւններուն վրայ մեծ

հաւատք ունեցող մարդը կամ համայնքը, կրնայ նոյնիսկ լեռները տեղափոխել:

Ասլանպէկցիներն ալ ունեցած են, եթէ ոչ դասակարգային պայքար, գոնէ ժողովրդային խաւերու զանազան բաժանումներ: Մտաւորականներէ, բարձրաստիճան կամ համեստ հոգեւորականներէ, ասեւորականներէ, մետաքսի գործով զբաղողներէ, սպաստ սապարէզի հետեւողներէ գատ, կային նաեւ շրջակայ գաւառներուն մէջ մեծ հոչակ հանած խիզախ ու չարքաշ ածխավաճառներ, որոնք իրենց պատրաստած փայտածուխը բազմաթիւ ձիերու վըրայ բեռցուցած, կը շրջէին քաղաքէ քաղաք, սպրանքնին ծախելու ի խնդիր:

Մենք եթէ ստիժ չունեցանք իրենց գիւղին մէջ ճանչնալու Ասլանպէկցին, ամէն աշնան Ատափազար եկող ածխավաճառները շատ բան սորվեցուցին մեզի իրենց բարքերէն, սովորութիւններէն եւ գովելի յատկութիւններէն: Ասլանքները ծախելէ ետք, գիւղ վերադառնալէ առաջ, հայոց թաղին կից զարդրեցին-տակը կոչուող շուկային բազմաթիւ սրճարաններէն մէկուն մէջ, տեղացի հասակակից բարեկամներով անոնց սարքած կերուխումը հետաքրքրութեան առարկայ կը դառնար միշտ եւ անոնց երգերն ու պարերը կ'ըլլային յիշատակութեան արժանի գէպքեր:

Ասլանպէկցիներու մեծամասնութիւնը կը պատկանէր համեստ դասակարգին, որ եթէ կարգալ պրելու տեսակէտով դեռ պէտք ունէր շատ ճամբայ կտրելու՝ իր ունեցած քիչն ալ դրած էր ազգին ու գիւղին բարօրութեան ի սպաս՝ սրտառուջ պատրաստակամութիւնով մը: Իսկ փոքրամասնութիւն

կազմող ունեւոր կամ մտաւորական դասակարգն ալ իր վրայ էր առած ազգային, մշակութային կամ եկեղեցական հոգերու ծանրութիւնը: Գպրոցն ու եկեղեցին Ասլանպէկցիներու գուրգուրոտ հոգածութեան առարկան էին դարձած սկիզբէն ի վեր: Պէտք է մասնաւորաբար շեշտել այստեղ, որ Հայ Առաքելական Եկեղեցին եւ կոչումին արժանի հայ կղերը, գոնէ մինչեւ ՉՈրդ դարու սկզբնաւորութեան անտարակուսելի պատուար մը հանդիսացան՝ Փոքր Ասիոյ բոլոր անկիւնները ցրուած հայութիւնը՝ ուժացումէ եւ վերջնական կորուստէ փրկելու տեսակէտով: Եթէ Հէմշինցի հայերու պէս իսլամանային անոնք, այսօր ոչ մէկ հետք կարելի պիտի չըլլար գտնել անցեալէն: Սեւ Ծովու եզերքները դըստուող Հէմշին գաւառին մէջ բնակութիւն հաստատող նախկին հայերը, զիւրահասկնալի հայերէն մը խօսելով հանդերձ, կը կոչուէին Հասան, Հիւսէյն, Մէմէտ, Մուսթաֆա, Արիֆ կամ Իպրահիմ, բայց թուրքերուն չափ արհամարհանք ունէին քրիստոնեաներուն հանդէպ...:

Եթէ 1915ի բռնագաղթը սկիզբն էր ահաւոր երկանց եւ հայութեան գոյութիւնը դրած էր մեծ հարցականներու առջեւ՝ դաշնակիցներու յաղթանակով թուրքերու չարաչար պարտութենէն ետք, գոնէ ողջ մնացող վերապրողները հնարաւորութիւն ունեցան ետ վերադառնալով լծուելու շինարար աշխատանքի եւ Ֆիզիքական-հոգեկան վէրքերը դարմանելու գերագնիւ գործին:

Թուրքահայութեան հուսկ եւ անվերականգնելի հարուստը պիտի տար՝ ազգայնամոլ Քէմալական թուրքիան, որ քաջալերուած յաղթական դաշնակիցներու ամօթալի կրաւորականութենէն՝ յա-

Չուղեցաւ ի սպաս ջնջել 500, 400, 300 տարիներէ ի վեր Պրուսայի կամ Բիւթանիոյ կողմերը հաստատուած հայերուն հետքը ամբողջ:

Շատերու նման, Ասլանպէկցիներն ալ բաւական ժամանակ երիտասարդական խումբերով, քաջ Տօնիկի գլխաւորութեամբ խիզախօրէն մարանչելէ ետք թուրք կանոնաւոր եւ անկանոն զինեալ ուժերու դէմ, սողայէլական հաշիւներէ տարուած գաշնակիցներու ձեռնդահուիթեան իբր արգելնք, յունական բանակներուն Բիւթանիոյ շրջանները պարպելուն հետ զուգընթաց՝ իրենք եւս լքեցին ամէն բան եւ լոկ կեանք մը փրկելու բնագրական ձգտումներով հեռացան տաճկական դժոխքէն ու ցրուեցան ի սփիւռս աշխարհի, Ամերիկա, Եւրոպա, Մերձաւոր-Արեւելք եւ այլուր:

Այս պարագան պիտի ըլլար ազնաներուն ամենասարսափելին, եթէ երբեք օտար երկիրներու մէջ ուժանալու ստոյգ վտանգին ենթարկուած Ասլանպէկցի բեկորներէն զատ, ուրիշ կարեւոր հատուած մը Սորհրդային Հայաստան մայր հայրենիք վերադառնալով, բնակութիւն հաստատած չըլլար Երեւանի արուարձաններէն Նոր-Բիւթանիոյ մէջ: Հոն է որ առանց վերադահուիթեան տրամադրեցին անոնք իրենց ուժերը հայրենիքի բարօրութեան եւ խառնեցին իրենց քրտինքը հարիւր հազարաւոր հայրենակիցներու թափածին ու սրտի կատարեալ անդորրութեամբ ձուլուեցան մայր-ցեղի, մայր-ժողովուրդի, մայր հայրենիքի հողին, ջուրին եւ արիւնին մէջ:

Հիմա անոնք կրնան հողի անասուեր պայծառութեամբ գիտել հայրենիքի փառայեղ սպազան,

որ յաւիտենական եւ անվերջանալի ըլլալով սեփականութիւնն է բոլորին: Իրենք եւս Հայրենիքի ամբողջութեան բաղկացուցիչ տարրերը ըլլալու խոր գիտակցութեամբ՝ իրենց վստահուած աշխատանքը արգելնաւորապէս կատարելէ ետք, պիտի կրնան բոլորուիլ խրախճանքի կիրակնօրեայ սեղանի մը շուրջ եւ Հայաստանի անմահական գինիի բաժակները վեր բարձրացուցած, սրտի խորերէն բխող մտղթանքներ ընել՝ ծաղկեալ Հայրենիքի խաղաղութեան, յոռաջգիւրմութեան, բարօրութեան եւ արեւշատութեան համար:

Վ Ե Ր Ջ